

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՍԱԿԱՆ
 Բ. ՏԱՐԻ ★ ԱՄՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՅՈՒՆԻՍ 1900 ★ ԹԻԻ 6, 7, 8

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտրին լոյսն է : Տիեզերքը մտրի կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նչ հոգիին չճարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մանուէլեան եւ Շահին, Արշակ Զօպանեան : — Քերթուածներ, Զաւէն : — Գործի մարդիկ, վէպ, Երուանդ Օտեան : — Այվազովսկի, Գ. Բաշինջաղեանց : — Նոր հողիներ, Զարեհ Վարսամեան : — Հայ էջեր (Տաղ հոգւոյ), Նաղաշ : — Երկու ոգի, Վահան Սուրէնեան : — Մանուէլեան-Շահին երեկոյթը : — Նամակ ուղղեալ Մանուէլեան-Շահին երեկոյթի նախագահին, Յ. Շահնազար : — Վոովիլի ցերեկոյթը : — Որբերուն համար, Անաթոլ Թրանս : — Հայերն ի Բարիզ — (Հայաստան, ԿիւսթաՎ ժէֆուուա) : — Գրքեր եւ թերթեր, Արշակ Զօպանեան : — Մեր գրացիներ, — Քիւրաք, Լօշտակ : — Երեկոյթ մը ի պատիւ Լեւոն Բաշալեանի, Ա. Զ. : — Կացութիւնը Հայաստանի մէջ :

Տեղի պակասը մեզ ստիպեց «Անահիտ»ի յտաջիկայ թուոյն յետագել «Տիգրան Նրկաթ»ի բանախօսութեան եւ Ստեփան Փափազեանի «Յուշատետր»ին շարունակութիւնը :

Այս անգամ «Անահիտ»ի հրատարակիչական յայտարարութիւնը չափազանց երկարատեւ եղաւ . ու մեր բաժանորդներէն ոմանց գանգատները արդար կը գտնենք : Ոչ մեկ ջանք պիտի չխնայենք որպէսզի այսուհետեւ «Անահիտ»ը ամէն անսազիսուն հրատարակուի բացարձակ կանոնաւորութեամբ . բայց կը յուսանք որ մեր բաժանորդները պիտի սկսին այնքան պարսպանալ լղջալ որքան պահանջ-կոտ . այս պահուս ուր ուրբերոյ թիւը հրապարակ կը հանենք . դեռ մեր բաժանորդներուն երեք չորրորդը չէ վճարած իր բաժնեգինը . . .

«ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ»

«Անահիտ»ի այս թուով կը սկսինք հրատարակել Երուանդ Օտեանի մէկ ընդարձակ վէպը, «Գործի մարդիկ» :

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

Գ. Գ. Էնյուեան (Ամերիկա), մէկ տուար, Մ. Թեւեան (Պրիւսէլ) 5 Ֆր., Ա. Ի. (Բարիզ), 5 Ֆր., Պարոն Պարոնեան (Բոն-բորս, Ամերիկա), 10 Ֆր. :

(Այս հանգանակութիւնը պիտի փակուի քիչ օրէն :

Ա Չ Դ Ե Ր

Շատերը մեզի կը դիմեն գնելու համար մեր ֆրանսերէն հրատարակութիւնները . կը խնդրենք որ զանոնք աւնենալ փափաքողները հաճին ուղղակի դիմել Մեւֆիոն Տր Փռանսի գրավաճառանոցը :

Ահաւասիկ գրքերուն ցանկը եւ գրավաճառանոցին հասցէն .

- L'Arménie**, son histoire, sa littérature, son rôle en Orient, par A. TCHOBIANIAN, avec une introduction par ANATOLE FRANCE 1 fr.
- Les Massacres d'Arménie**, témoignages des victimes, (Traduction de A. TCHOBIANIAN) avec préface de GEORGES CLEMENCEAU. 3 fr. 50
- Zeitoun**, depuis les origines jusqu'à la grande insurrection de 1895, par AGHASSI, traduction de A. TCHOBIANIAN, avec préface de VICTOR BERARD. 3 fr. 50

Librairie du MERCURE DE FRANCE

15, RUE DE L'ECHAUDÉ-SAINTE-GERMAIN. — PARIS.

ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՈՒՅՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՅՈՒՆԻՍ 1900

ԹԻԻ 6, 7, 8

ՄԱՆՈՒԿԼԵԱՆ ԵՒ ՇԱՀԻՆ

— 0 —

Եթէ գաղափարն ունեցայ առջարկելու որ հանդիսաւոր ցոյցով մը տօնուի Երուանդ Մանուէլեանին եւ Էտկար Շահինին յաջողութիւնը, երկու բարեկամի հաճոյք պատճառելու ճղճիմ մտահոգութենէն չէր որ ատոր մը զուեցայ, ոչ ալ այդ երկու Հայերէն մէկուն բարձր ախտաբանի եւ միւսին ոսկի մետայլ ընդունած ըլլալէն զգացուած գոհիկ գոհունակութենէ մը: Բարեկամական զգացումը երբեք իմ գնահատումներուս մէջ տեղ չէ բռնած, իսկ պաշտօնական վարձատրութիւնները զիս աւելի քան ուրիշ մէկը անտարբեր կը թողուն, որովհետեւ նոյն իսկ այս մեծ ու քաղաքակիրթ երկրին մէջ ազգեցիկ յարաբերութիւններով հովանաւորուած բացարձակ ապուշներ յաճախ կը հասնին անոնցմով դափնեւորուելու: Այդ երկու Հայերուն ի պատիւ հանրային արտասովոր յարգանքի արտայայտութիւն մը սարքելու պէտքն զգացի, նախ որովհետեւ անոնք, իւրաքանչիւրն իր ճիւղին մէջ, իրենց առաջին քայլէն իսկ իրենք զիրենք «տեղծագործ ուժեր» յայտնեցին, — ու ո՛ր եւ է «հասկցող» մարդ երախտագիտութեան պարտք մը ունի ստեղծողներուն հանդէպ, — երկրորդ՝ որովհետեւ Եւրոպայի բարձրագոյն շրջանակներուն առջեւ անոնք մեր ցեղին մշտաւորական կարողութեանց ապացոյցը տուին՝ շատ զփուարամտօշիւր եւ շատ թանկագին ու լորտներու մէջ խրոխտ, յստակ եւ գեղեցիկ զիրք մը բռնելով, — ու ո՛ր եւ է Հայ պարտա-

ւոր է շնորհապարտ զգալ ինքզինքը իր այն ազգակիցներուն համար որ այս գերազանց ռաւայութիւնը կը մատուցանեն ցեղին գերագոյն շահերուն:

Մեր ուրախութիւնը այս պարագային մէջ կը կրկնապատկուի նաեւ անով որ երկուքն ալ, բաց ի հոյակապ ապացոյցէն զոր տուին հայ ուղեգին ամենաբարձր ընդունակութիւններուն, միեւնոյն ատեն կը ներկայացնեն մեր ցեղին բարոյական մէկ ամենակարեւոր յատկանիշը, նրկարգրի անվկանդ սովորութիւն մը եւ անվըհատ ու արի ինքնօգնութիւն մը: Կանուխէն՝ խոշոր յաւակնութիւններով թեւաւորուած, երկուքն ալ, աշուրնին յառած շատ մեծ երազի մը, առժանելի ու երկարատեւ խարխափումներուն ու չարաչար ու կարծր հետախուզութիւններուն մէջէն՝ առանց յուսահատելու, առանց իրենք իրենցմէ տարակուսելու քալած են, հասնելու համար նպատակակէտին որուն կը դիմէին: Եւ եթէ անոր հասան, ատի կը պարտին իրենց անձնական ճիւղին, ու գրեթէ միմիայն իրենց ճիւղին:

• • •

Մանուէլեան՝ զոր ճանչցած եմ մեր Պոլսոյ սքանչելի կեդրոնականին գրասեղաններուն վրայ՝ (ուր զանազան անկիւններէ եկած խումբ մը հայ տղաք, մտաւորական գերազնիւ խանդավառութեամբ մը բորբոքած, իրարու խօսք տուին «բան մը ըլլալ» ոչ միայն մեր ազգային խոնարհ շրջանակին այլ նոյն իսկ աւելի բարձր շրջանակներու մէջ), նախ յարած էր քիմիագիտութեան ճիւղին, որ իր տարւփունքն ու երազը կը կազմէր գպրոցի օրե-

րուն : Մոնքելիէ եւ Բարիդ՝ հինգ վեց տա-
 րուան ուսումնասիրութեանց միջոցին , իր
 միտքը , գծնդակ թափառումով մը , տարու-
 բերուեցաւ քիմիագիտութեանն բժշկութիւն ,
 բժշկութեանն բնախօսութիւն , երբեք սակայն
 չբաւականանալով իւրացուած գիտական ծա-
 նօթութիւններովը , միշտ սեւեռած՝ անծանօթէն
 տարր մը խլելու , արդէն եղածին վրայ նո-
 րութիւն մը աւելցնելու իտէալին : Իր մտա-
 հոգութիւններն ու իր փառասիրութիւնները
 ամենէն կանուխէն ու ամենէն մօտէն ճանչ-
 ցողներէն մէկն էի ես . գիտէի իր իմացակա-
 նութեան արտասովոր սրութիւնը , եւ միան-
 զամայն այն պարզ , ինքնակազմ բայց ազատ
 ու բազմակողմանի մտաւոր դաստիարակութիւ-
 նը զոր ինքզինքին տուած էր . գիտէի որ Իպ-
 սէնը , Ֆլոպէոր եւ Շէքսբիրը իր հիացումնե-
 րուն մէջ կ'եղբայրանային Վիւրցին , Քլոտ
 Պեռնարին ու Քահալին եւ թէ իր միտքը՝
 այսպէս՝ ամէն բանէ աւելի կը հետաքրքրուէր
 ոչ թէ չոր ու իմաստակ ու գոց մասնաւորու-
 թեանց , այլ մեծ գաղափարներուն , ընդհանուր
 տեսութիւններուն , իրերուն ամբողջութիւնը
 բացատրել ձգտող վիթխարի ձեռնարկներուն՝
 որոնց մէջ Գիտութիւնն ու Արուեստը կը
 խառնուին ու կը նոյնանան : Եւ վստահ էի որ
 եթէ յաջողէր իր բաղձանքն իրագործել , ար-
 դիւնքը զոր ձեռք պիտի ձգէր՝ այս ինչ հիւան-
 դութեան դեղը գտնելու կամ այն ինչ գործիքին
 կատարելագործումը դիւրացնելու մէջ պիտի
 չկայանար , այլ գտնելու մէջ դեռ չնշմարտած
 մանրամասնութեանց շարք մը որմէ կեանքի
 գերագոյն խորհուրդներուն մեկնումը լուսա-
 ւորող տեսութիւններ բղխէին : Եւ Մանուէլեան
 իրականացուց յոյսը զոր իր վրայ դրած էի :
 Հինգ տարուան դեգերումէ յետոյ , օր մը , հիւս-
 ուածաբանական վերջին աշխատութեանց մա-
 սին խօսող զրքոյկ մը ձեռքը անցաւ , անոր
 ընթերցումը զինքը խանդավառեց , ու զգաց
 որ այդ նոր բացուած , գերազանցօրէն զը-
 ժուարին ու փափուկ , ու դեռ այնքան մը-
 թութիւններով ու մացառներով կնճռոտած
 ճամբուն մէջ՝ իրեն համար բան մը կար ընե-
 լու : Իր ուղին գտած էր : Կոլճիի գործերը կար-
 դաց , Ռամոն Ի Քահալի ուսումնասիրութիւն-
 ներն ամբողջութեամբ ճանչնալու համար՝ ըս-
 պաներէն սորվեցաւ , ծանօթացաւ Վան կէհիւշ-
 թէնի եւ Քէօլլիքէրի աշխատութիւններուն ,
 ու վերջապէս հետաքրքրուեցաւ Մաթիաս Տիւ-
 վալին որ Կոլճիի եւ Քահալի հիմնած գործին

մէջ վերջին գիւտը , ջղային «ամիպօիզմ»ի
 վարկածը , բերած էր : Որոշեց Տիւվալի աշ-
 խատանոցը մտնել : Հոն , առանց Տիւվալէն կամ
 ո եւ է մէկէն առաջնորդուելու , օգտուելով մի-
 միայն նիւթական գիւրութիւններէն զոր այդ
 միջավայրն իրեն կ'ընծայէր , իր ընթերցում-
 ներով ու անձնական հետազոտութիւններով
 կազմած ինքնուրոյն ուժերովը՝ աշխատելու
 սկսաւ : Երեք ամիս լոկի դատանքէ յետոյ , օր
 մը Տիւվալ ապշութեամբ տեսաւ իր աշխա-
 տանոցին մէջ տարակուսանքով ու գրեթէ
 դժկամակութեամբ ընդունուած այդ արեւելցի
 պզտիկ տղան ձեռքը բլիբլի կտրածքներ , Կոլ-
 ճիի մեթոտով կատարուած , այնպիսի ճարտա-
 րութեամբ մը որուն Եւրոպայի մէջ քիչեր կա-
 րող են հանդիսացած : Եթէր ութը ամիս յետոյ ,
 նիւթական գիւրութիւններուն այս արագ
 ու բացարձակ յաղթանակէն հետք , Մանուէլ-
 եան կը սկսէր ճեւնել : Իր առաջին դիտողու-
 թիւնները կը նպաստէին իրմէ առաջ կատա-
 րուած փորձարկութիւններէն շատ աւելի հաս-
 տատ եւ ամուր ապացուցումով մը Մաթիաս
 Տիւվալի «ամիպօիզմ»ին ճշդութիւնը վաւե-
 րացնելու : Քունի վիճակին մէջ անասուններու
 բջիջներուն երկարածգմանց քաշուելուն եւ
 գնտիկներով ծածկուելուն ու այսպէս երկու
 բջիջի իրարու հետ իրենց ճիւղաւորումներուն
 շաղապատումին ունեցած հպման ու հագոր-
 դակցութեան ընդհատումին վարկածը , որ Տիւ-
 վալի «ամիպօիզմ»ին հիմը կը կաղմէ , եւ քո-
 նի , երազի , զարթումի երեւոյթները բացատ-
 րող հրաշալի տեսութիւն մըն է , Մանուէլեանէն
 առաջ ուրիշ գիտուններու կողմէ հաստատել
 փորձուած էր արուեստական , բուն ու անբնա-
 կան միջոցներով (եւթարականութեամբ , քի-
 միական նիւթերով) թմրութեան մէջ ձգուած
 անասուններու վրայ . արդիւնքները բնակա-
 նաբար վճռական կատարելութիւն մը չեն
 կրցած ունենալ : Մանուէլեան հնարամիտ գա-
 ղափարը յղացաւ անասունները բնական եղանա-
 կով մը քունի վիճակին մէջ ձգելու : «Տըմուրի
 եւ Սթեֆանովսքայի փորձարկութեանց մասին»
 կը գրէ Տիւվալ , կարելի եղած էր առարկել թէ
 անոնք իրապէս բնախօսական իրողութիւններ
 չեն ներկայացներ , այլ թերեւս բջիջներուն
 մէջ յառաջ եկած այլալուսնեք՝ կա՛մ քիմիա-
 կան նիւթերու անոնց մէջ մտնելովը եւ կա՛մ
 բոլորովին տարականոն գրգռումներու (եւթ-
 արացում՝ , եւթարասպանում) ազդեցութեամ-
 բը : Եւ արդարեւ , այդ փորձարկութիւններէն

չատին մէջ, անասունները մեոցնելու յանգած էին՝ ծայրայեղութեան հասած մորֆինաւորմամբ կամ եթերարկութեամբ մը, եւ կամ ելեքտրականութեան ուժգին ներգործումով մը : Մանուէլեան ուզած է աւելի բնականոն պայմաններու մէջ փորձարկել . ուզած է քունը յառաջ բերել՝ անսունը յոգնեցնելով : Այս նպատակով, մուկեր առած է, անընդհատական գրգռումներու ենթարկած է զանոնք, իրենց վանդակին մէջ զանոնք տրորելով, խայթելով, ժամու մը չափ չթողլով որ վայրկեան մը հանգիստ ունենան : Այն ատեն այդ անասունները ուժասպառ, շնչահատ կ'իյնային քունի մէջ, յաճախ անզգայ կը զառնային նորանոր գրգռումներու . չափազանց յոգնութենէն կը քնանային : Այդ անասուններուն ջղային բըջիջներն է որ բաղդատած է այդպիսի փորձարկութեան մը չենթարկուած ուրիշ անասուններու բջիջներուն հետ : Կտորները երկու պարագաներուն մէջ միեւնոյն հակազդակներով հաստատոււողուած են (Կոլճի-Քահալի արագ մեթոտով) : Որովհետեւ Պ. Մանուէլեան քրոմօարծաթական մետաղացման կիրարկումին մէջ ամենամեծ ճարտարութիւն մը ստացած է որովհետեւ իր պատրաստած կտրածքները հիանալի յստակութիւն մը ունին եւ ո եւ է արկածաւոր վայրասուզումէ դերձ են, անոնք պէտք է որ մեծ վստահութիւն ներշնչեն : Այս պայմաններուն մէջ, Պ Մանուէլեան դիտած է կարգ մը իրողութիւններ որ նախորդ դիտողութիւնները ամբողջապէս կը հաստատեն(*) : «Մանուէլեանի դիտողութիւնները մանրամասնօրէն արձանագրելէ յետոյ, Տիւվալ անոնցմէ ձեռք ձգուած արդիւնքը կը գնահատէ սապէս՝ «Այս հաստատումները կրկնապէս թանկագին են մեզի համար, թէ՛ իրենց բացարձակ ապացուցական արժէքովը եւ թէ՛ այն տեսակէտով որ նախորդ դիտողութեանց արժէքը կ'աւելցնեն» ջրելով այն առարկութիւնները զոր մինչեւ հիմա կարելի էր ընել անոնց մասին » :

Այս առաջին դիտողութիւնը, որ մասնաւորուած էր հոտառական կոնդէզին բրգային բըձիճներուն եւ խուրձաձեւ բջիջներուն վրայ, սկզբնաւորութիւնը եղաւ Մանուէլեանին, սկզբնաւորութիւն մը որ ուրիշներու ձեռքով կատարուած աշխատութիւններու վճռական հաստատում մըն էր զեռ լոկ, բայց ուր երի-

տասարգ գիտնականին պայծառ ու սուր տեսողութիւնը, փորձարկութեան ծայրայեղ ճարտարութիւնը եւ դիտուած իրողութեանց յըստակ ըմբռնումն ու կատարելաձեւ թարգմանումը արդէն գերազանց փայլով մը կը յայտնուին : Բայց այդ զուտ «ապացուցական» աշխատութիւնը միակը եղաւ : Անկից անմիջապէս յետոյ Մանուէլեան սկսաւ բացարձակօրէն «անձնական» հետազոտութեանց ձեռնարկել, ոչ մէկէն չնշմարուած իրողութեանց գիւտին հետապնդել, եւ ա՛լ այնուհետեւ իր քայլերը ապշեցուցիչ արագութեամբ վերելք մը կը ներկայացընեն : Հոս մանրամասնօրէն պիտի չվերլուծեմ ամբողջութիւնը այն աշխատութիւններուն զոր Մանուէլեան արտադրեց 98էն մինչեւ այս վայրկեանս եւ զոր հրապարակեց Բարիզի Կենսաբանական Ընկերութեան ներկայացուած վեց հաղորդումներով . մասնագիտական չոր ու կարծր ուսումնասիրութիւն մը կատարել պէտք պիտի ըլլար, որուն համար հարկաւոր ամբողջ ձեռնահասութիւնը չունիմ եւ որ արդէն գրական ամսաթերթի մը ընթերցողներուն մեծամասնութեանը անմատչելի եւ ձանձրացուցիչ պիտի դառնար : Պիտի բաւականանամ լայն գծերուն մէջ ցոյց տալով այդ գործն ու անոր նշանակութիւնը : Առաջին արդիւնքը զոր Մանուէլեան ձեռք ձգեց «նոր» ի ինդիր իր հետապնդումին մէջ, նշանաւոր գիւտ մը եղաւ, որուն հետեւանքով հիւսուածաբանութեան մէջ ծնաւ վարկած մը, *nervi-nervorum* լի վարկածը, զոր Մանուէլեան յղացաւ : Տիւվալի համախոհութեամբը, Տիւվալի «ամիւպօիզմ»էն ի վեր այդ գիտութեան մէջ երեւցած ամենէն կարեւոր վարկածը եւ որուն անդրադարձ ազդեցութիւնը մեծապէս բեղուն պիտի ըլլայ կենսաբանութեան եւ բժշկութեան մէջ : 98ի փետրուարին Կենսաբանական Ընկերութեան ներկայացուած աշխատութեան մը մէջ (*Contribution à l'étude du bulbe olfactif, hypothèse des nervi-nervorum*) Մանուէլեան երեւան կը բերէր իր դիտողութիւններն ի մասին կեղրոնախոյս ջղային նեարդներուն . «Մինչեւ հիմա, կը գրէ Մաթիաս Տիւվալ, այդ կեղրոնախոյս նեարդները մինչեւ հատիկներու խաւը միայն հետազոտուած էին : Նոր աշխատութեան մը մէջ, Պ. Մանուէլեան զանոնք հետազոտած է, մուկին ու կատուին քով, մինչեւ հոտառական կծիկներուն խաւը, այսինքն ջղօններու միջեւ յղաւորման ամե-

(*) Mathias Duval. — L'amoebisme des cellules nerveuses — Revue scientifique, 12 mars 1898.

նագեղեցիկ տիպարներէն մէկուն խաւը : Այդ նեարդները, կ'ըսէ Մանուէլեան, ոմանք ուղղագիծ, մէկ մասը կորածեւ, ընդհանրապէս հորիզոնական ուղղութեամբ մը կ'ընթանան ճերմակ նիւթին մէջ, յետոյ յանկարծ կը դառնան՝ յաճախ ուղիղ անկիւն մը ձեւացնելով, գորշ նիւթին մէջ կը թափանցեն, շեղ կամ ուղղահայեաց գծով մը անոր մէջէն կ'անցնին ու կը ծիկներուն մէջ կը մտնեն : . . . Մենք զննեցինք Պ. Մանուէլեանի պատրաստած կտրածքներէն շատերը . անոնք մեզի անհերքելի ապացոյց մը ըլլալ կը թուին այդ կեդրոնախոյս ջղային նեարդներու գոյութեանն ու անոնց ճիշդ այն գծին վրայ վերջաւորուելուն ուր շրջապատային հոտառական ջղօններու գլանառանցքային երկարաձգումները կեդրոնական հոտառական ջղօններու բրթորջաղմայի երկարաձգումներուն հետ կը յօդաւորուին : Բայց աւելին կայ գեո . այդ կեդրոնախոյս նեարդներէն մաս մը՝ Պ . Մանուէլեանի պատրաստած կտրածքներուն նայելով՝ անտարակոյս կը վերջաւորուին հոտառական կոճղէզին հատիկներուն գծին վրայ : Արդ այդ հատիկներէն երկարաձգումներ կը տեսնենք որ կ'իջնեն եւ կ'երթան կծիկներուն մէջ կը վերջաւորուին : Ուրեմն այստեղ կը հաստատենք կարգադասութիւն մը որ բոլորովին հանգունատիպ է ցանցենիին մէջ՝ Բահայի երեւան համաձին : Հոտառական կոճղէզին հատիկները այստեղ այն ըլլալ կը թուին ինչ որ են «սքոնփոպլասթ»ները ցանցենիին մէջ . այդ հատիկները, կեդրոնախոյս նեարդներու միջնորդութեամբ, ամբողջացուցիչ մաս մը կը կազմեն հաղորդիչ շղթայի մը, այսինքն թէ՛ այդ նեարդներէն ընդունելով ուղեղին մէջ ծնած գրգռում մը, զայն կը փոխանցեն կծկային յօդաւորումին : Պ. Մանուէլեան, այս անդամազննական կարգադասութեանց վրայ ամբողջական աշխատութիւն մը կը պատրաստէ, որուն նորութիւնը չենք ուզեր խամբել՝ ուրիշ մանրամասնութիւններ ալ տալով : Բայց այժմէն իսկ, մեր աշխատակիցը, այս անդամազննական իրողութեանց հանդէպ, կ'եզրակացնէ, մեզի հետ, թէ գոյութիւն ունին ճշմարիտ «նեոլի-նեոլոոսմ»ներ (ջիզերու ջիզեր), այսինքն ջղօններ, կամ ջղօններու շղթաներ որոնք ջղային տարրերու ամիպածեւ գործունէութիւնը կը վարեն» :

Revue Scientifiqueի այս յօդուածը ուրիշ բան չէր բայց եթէ 1898ի տարեշրջանին վերջին

գասրզոր Տիւվալ արտասանեց Բժշկական Համալսարանին մէջ, եւ ուր ջղային գրութեան վրայ կողմիէն ի վեր կատարուած նոր աշխատութեանց վրայ ընդհանուր տեսութիւն մը ընելով, մասնաւոր գոհունակութեամբ մը եւ հպարտութեամբ մը կը յիշէր Մանուէլեանին հետազօտութիւնները : Առաջին անգամն էր որ հայ գիտունի մը անունը այս հանդիսաւորութեամբ կ'արտասանուէր Բարիզի համալսարանին բեմէն . եւ այդ օրէն, Մանուէլեան իրաւունք կը ստանար լայն բաժին մը ունենալու այն հիացական երախտագիտութեանը մէջ զոր ժողովուրդ մը կը պարտի իր մեծ զաւակներուն :

Մանուէլեանի միւս աշխատութիւններէն պէտք է յիշել ԹԹի մայիսին Կենսաբանական Ընկերութեան ներկայացուցած իր մէկ հետազօտութիւնը (Ջղային նեարդի մը բնաշրջութիւնը սաղմնային վիճակէն մինչեւ արեւուքի վիճակը), հետազօտութիւն որ կոչուած է ընդհանուր բնախօսութեան մէջ կարեւոր կիրաքուաներ ունենալու եւ որու մասին «Անահիտ»ի մէջ հակիրճ նօթ մը հրատարակուած է արգէն : Պէտք է յիշել իր հինգերորդ հաղորդումը (Հոտառական կոճղէզին կեդրոնախոյս նեարդները եւ կեդրոնական հոտառական ջղօնները) որ կ'աւարտի սա հարցումով՝ «Արդեօք բոլոր ջղային նեարդները «նեոլի-նեոլոոսմ»ներ չունի՞ն», հարցում որ տարօրինապէս կ'ընդարձակէ այդ մեծ խնդրոյն հորիզոնը եւ որուն լուծումին դժուարին ու կենսական գործը Մանուէլեանի ամենէն սիրական ձեռնարկներէն մէկը պիտի ըլլայ : Իր վերջին հրատարակած աշխատութիւնը (Տեսողական ջղին կեդրոնախոյս նեարդները) այդ հարցման լուծումին համար կատարուած առաջին ճիգերէն մէկն է՝ միեւնոյն տեսակէտով հոտառական գործարանէն յետոյ տեսողական գործարանին մէջ փորձուած հետազօտութեամբ մը :

Իր «Տարերք Հիւսուածաբանութեան» մագիստրական գրքին երկրորդ տպագրութեան մէջ, Տիւվալ երկարօրէն կը խօսի Մանուէլեանի աշխատութեանց վրայ : Մանուէլեան, այսպէս գիտութեան մէջ այլ եւս դասական անուն մը գարձած է :

Այն որ այս ամբողջը բրաւ, — եւ այս ամբողջը նախերգանք մըն է լոկ, — քսանեութ տարու երիտասարդ մըն է, դեռ պարզապէս բըժշկութեան ուսանող, եւ իր այս յաղ-

Թական սկզբնաւորութիւնը անով մանաւանդ
 Թանկագին է որ ան տեղի ունեցաւ ճիւղի մը
 մէջ որ բարձրագոյններէն ու ազնուագոյն-
 ներէն մէկն է գիտութեան ճիւղերուն. քանի
 որ մարդկային կեանքին մեքենավարման ա-
 մենէն նուրբ գաղտնիքները լուծել կը ձգտի
 եւ վաղը կեանքին գերագոյն խորհուրդին, Մը-
 տածման, ծնունդին ու կազմաւորմանը բացատ-
 րութիւնը պիտի տայ մեզի: Այսպիսի սկզբ-
 նաւորութիւն մը, որուն նմանը նոյն իսկ ե-
 րոպացի մեծագոյն գիտնականներէն քիչերը
 ունեցած են այս տարիքին եւ այս պայման-
 ներուն մէջ, զիս կը մղէ հաւատալու թէ այդ
 ամբողջն այսքան կանուխէն իրագործող միա-
 քը յառաջիկայ դարուն Քլոտ Պեռնարներուն,
 Պեռլըժներուն ու Քահալներուն կարգը թե-
 րեւս պիտի յաջողի բարձրանալ:

մոգութիւններու անդունդի մը մէջ կորսուած՝
 գրեթէ միա-միմակ, իր գծնալի ու հեշտաւէտ
 ու արդէն ա՛յնքան ջղայնօրէն բեղուն շուար-
 մանը մէջ՝ իբր միակ առաջնորդող թել ձեռքը
 ունենալով բարի եւ ուշիմ Իտալացիի մը,
 Բաօլէթիի նկարչին, աննախապաշար եւ լայ-
 նատես խորհուրդը, Շահին կարողացեր
 էր ըմբռնել ինչ որ կայ տիրականօրէն եւ
 էականօրէն գեղեցիկ՝ այդ միջավայրին մէջ



Է. ՇԱՀԻՆ.—ՄՈՒՐՍԿԱՆԸ

Էտկար Շահինը ճանչցած եմ ասկից չորս
 տարիի չափ առաջ՝ Բարիդի մայթին վրայ: Առ-
 ջի վայրկեանէն, այդ անկախ ու թափան-
 ցող մտքով, տենդոտ, կենդանի ու աարօրի-
 նապէս ինքնուրոյն տեսողութեամբ օժտուած
 տղան զիս գրաւեց: Քիչ մարդ տեսեր եմ այնքան
 քիչ բան վարդապետօրէն սորված, այնքան
 քիչ սիւտեմականաբար «ուսումնասիրած»,
 այնքան քիչ իմաստակօրէն «գրականագէտ» եւ
 այնքան ամէն բան իր պարզ ու սուր ու բա-
 ցարձականապէս անձնական զիտողութեամբը
 ըմբռնող ու մեկնող որքան Շահինը: Պուէն
 շատ երիտասարդ ելած՝ Վենետիկ ինկած էր,
 հմտութեան ամենաթեթեւ ծրարով մը, բայց
 զինուած՝ տեսնելու, զգալու, հասկնալու,
 թարգմանելու եղականօրէն հզօր եւ իսկատիպ
 կարողութեամբ մը: Սորվուածին, աւանդա-
 կանին, վարժապետականին բոլոր խեղաթիւրող
 ու վտանգաւոր բռնութենէն ազատ, իր միտքը,
 իսկականօրէն արուեստագէտ, զմայլելի յափըշ-
 անկութիւն մը ունեցած էր այդ նրբանուրբ
 գեղեցկութեան քաղաքին մէջ որ Վենետիկն
 է, քաղաք մը որ ամենէն թեւազրականներէն
 ու հրապուրչիներէն մէկն է իր բարբերուն ու
 տիպարներուն նկարչականութեամբը՝ իր բնու-
 թեան այնքան փափկաճաշակ ու հազուագիւտ
 որքան պերճափարթամ երփնագեղութեամբը
 եւ իր թանգարաններուն, նկեղեցիներուն
 ու պալատներուն մէջ կուտակուած գե-
 ղեցկագիտական ճոխութիւններովը: Այնտեղ,

ուր բաղդը զինքը ձգեր էր. «հասկցեր» էր որ
 այդ գեղեցկութիւնով յղիացած քաղաքին մէջ
 ամենէն ապշեցնող, ամենէն վիթխարի, իր
 կեանքի յորդութեամբն եւ ուժի մեծութեամբը
 ամենէն հարուստ ու ամենէն խորունկ գեղեց-
 կութիւնը թինթորէթթոյնն էր. եւ անկեղծ
 ու պարկեշտ՝ ամեն բանէ տառջ, զգալով զիհը
 որ կը բաժնէր զինքը այդ ուրիշ ժամանակի,
 ուրիշ գեղեցկագիտութեան եւ անմատչելի հան-
 ճարի մարդէն, շատցեր էր անոր շուրջը իր հի-
 ացումը պտրտցնելով, անկից կորովի ու անկեղ-



Է. ՇԱՀԻՆ. — ՃԱԳՈՄ ԵԱԽՈՂԸ

ծուծեան մեծ դասը լոկ առնելով, եւ մտքէն իսկ չէր անցուցեր վայն ընդօրինակել. որովհետեւ անոր ջախջախիչ լուծին ներքեւ մտնելու տխմարութիւնը այդ ո եւ է լուծի տակ մտնելու, ո եւ է բան «ընդօրինակելու» ի բնէ անկարող մտքին անկարելի պիտի ըլլար: Բնագորէն («նորախոհ»), բոլոր ջիղերովը «արդի կեանքի» ըմբռնողութեանը եւ անտիպ ու այժմէական գեղեցկութեան մը ստեղծումին տենչացող, Շահին իր շուրջը թաւալող թարմ կեանքին մէջ իր որսը կը փնտռէր, իր մարդկութեան պատառը զոր պիտի կարողանար ուժեղօրէն ափել, իւրացնել եւ իր վզայնութեանը մէջէն թարգմանուած՝ դարձընել մարդկութեան: Պահ մը դեգերեր էր Թիէրոլոյին քովերը, իր վայելուչ ու բարակ արուեստականութեան մէջ արգէն ա՛յնքան «մոտեռն» ու խել մը մանրամասնութեանց մէջ այնքան իրապաշտ այդ վարպետին. անոր հոյակապ ձեղնանկարները երկարօրէն ու հիացականօրէն զիտեր էր, եւ անոր փորագրանկարներէն մէկ քանին ընդօրինակեր էր՝ զբօսանքի համար, առանց գուշակելու որ իր ապագայ արուեստին գործիքը կը պատրաստէր ասով: Բայց «հասկցեր»

էր մանաւանդ նովելլին ու Տուզէն, երկու մեծ դերասանները որոնց իրապաշտութիւնը այնքան խորին ու ներուժ կենդանութիւն մը կրցած է արտացոլացնել որքան հելլեն արուեստին գերագոյն իտէականութիւնը: Եւ հոտորական գեղօններով ողողուած իտալիային մէջ, Շահին գատեր գտեր էր Սթեքեթթին, սրտի երգիչը, յաւիտենական ու միշտ ճշմարիտ ցաւերուն պարզ ու անթառամ բանաստեղծը: Ասոնք էին այնանունները զոր կը յեղյեղէր Շահին՝ առաջին օրն իսկ ուր գինքը ճանչցայ. եւ կ'ուզէր «մէկը» ըլլալ, ասոնց շարքէն, եւ ատոնցմէ տարբեր: Քիչ յետոյ, իր աշխատանոցին մէջ տեսայ աղքատի դէմք մը, իր առաջին փորձը նկարչութեան: Խեղճութեան մէջ մըքլտած, զազիր, ահազգեցիկ ու ողորմելի կերպարանք մըն էր ծեր մուրացկանի, որ մութ անկիւն մը կ'ծկտած, ոսկորի կտոր մը կը կըրծէ. խոշոր, կոշկոտոտ, աղտոտ ձեռուները՝ ոսկորին կառչած, ու մացառուտ մօրուքով մը լլրճուած մուծ, խորտուբորտ ու ցաւագին գըլուխը ուշադրութիւնս գրաւեցին անմիջապէս. այդ վլխուն եւ այդ ձեռուներուն մէջ, իտալացի վարպետներուն առաքեալի տիպարնե-



Ի. ՇԱՀԻՆ. — ԲԱՐՁՈՎ, ԿԻՆԸ

րէն ցոլք մը կար. բայց նմանութիւնը՝ այդ վարպետներուն պէս ամուր, հզօր ու անկեղծ շինուածք մը ունենալու փափաքին մէջ կը կայանար լոկ. գործին յղացումը, տիպարին մասնաւոր յատկանշականութիւնը, կատաղի անօթութեան ու եղկելի գոհկութեան այդ ժեսիւն ըմբռնումը՝ Շահինին կը վերաբերէին եւ իրեն միայն: Աշակերտ ըլլալով հանդերձ Աքատէմի ժիւլիանի մէջ՝ Պենժամեն Գոնսթանի եւ ժան-Բոլ Լորանսի պէս տաղանդաւոր բայց աւանդականութեամբ թրծուած ուսուցիչներու, փոխանակ անոնց ճաշակին, անոնց ուղղութեանը ո եւ է կերպով հետեւելու, փոխանակ ակադեմական նիւթ մը ընտրելու եւ զպրօցի շինուածք մը ի տես բերելու, Շահին գացեր էր Բարիզի փողոցէն գտնել տիպար մը, որ իրեն թուէր էր զեռ շխուզարկուած գեղեց-

կութիւններ պարունակել, եւ անոր տղմի ու ցաւի հոգին ուզեր էր կտաւին վրայ յաւերժ սցնել: Այդ «կէօ»ի դէմքը, որ 1896ի Սալոնին ցուցադրուեցաւ եւ բարիզեան մամուլին մէջ համակրանքով գնահատուեցաւ, Շահինի ոչ միայն առաջին գործն է ժամանակագրական կարգով, այլ արդէն յայտնութիւնը իր նկարչական տեսողութեան, որոշաւորումը իր խառնուածքին եւ ձգտումներուն, սահմանազրծումը այն գեղեցկագիտական աշխարհին զոր Շահին կոչուած էր արտայայտելու: Խեղճերը, ինկածները, թշուառութեան ու մոլութեան մէջ փոտած խարխուլ, ուրուականային ու սըրտամձլիկ մարդկութիւն մը, ու մասնաւորապէս «Բարիզի փողոցին խեղճերը» իրենց թուականի ու միջավայրի որոշ անհատականութեամբ, ահաւասիկ «աշխարհը» զոր Շահին տեսաւ:

ու հասկցաւ՝ Բարիկ հա նկուեն պէս, եւ որուն
որոշեց թարգմանն ըլլալ, կը յիշեմ այն բոլոր
սիրուն իրիկնադէմերը, ուր իրեն հետ կը գե-
գերէի, երբեմն, Բարիկի հին նեղ փողոցնե-
րուն մէջէն կամ արտաքին պուլվառներն ի
վար, կամ գետափին երկայնքը, մայրամուտի
անգին ժամուն՝ երբ բարակ ու դրեթէ սրամիտ
արեւի մը վերջին յոգնած ժպիտը տարտամ
ապսէնթի գոյնով մը կանաչորակուած թե-
թեւ ու հիւանդ մշուշի մը մէջէն կը ծածա-
նի՝ իրենց «աբերիթիֆ»ին կամ սիրային ժա-
մադրութեանը հապճեպող ջղուտ դէմքերուն
կամ օրուան դատանքէն դարձող բանւորի
զժողակ գլուխներուն վրայ : Շահին գմայ-
լանքով կը խօսէր ինծի այդ ո եւ է չափա-
զանցութենէ, ո եւ է պոռոտ յորդափայլութենէ
խորշող, այդ միշտ նրբօրէն ու մսկոտօրէն
ոսկեզօծ, ու միշտ յեղյեղուկ, ու միշտ գորշ ու
թափանցիկ ու սարսուցող ստուերներով մեղ-
մացած «Բարիկի արեւին» վրայ : կը բաղձար
անոր դեռ չհասկցուած, դեռ չնշմարուած,
տարօրինապէս ինքնատիպ ու սիրուն հրապոյրը
արտայայտելու հասնել օր մը իր նկարներուն
մէջ, ու յուզմունքով ցոյց կուտար բարակ
վտիտ ծառերը՝ պուլվառներուն երկայնքը ի-
րենց չարճճի մեղամաղձութեանը մէջ գալա-
րուած, ու իրենց թռչկոտող քայլերովն ու քո-
վընտի նայուածքներովը սահող վտիտ ու սա-
տանօրէն շնորհալի գործաւորուհիները, ու գի-
նետան դռներու առջեւ անասնացած կարմիր,
ուռուցիկ ողբալի դէմքերը յոգնած բանւոր-
ներու : Այդ ամբողջը առանց ակադե-
մական խաթարումի, առանց իմաստակ
չտկրտութի, կեանքին բիրտ ու թարմ պար-
զութեամբը կտաւին վրայ վերարտադրելու ա-
հագին ղժուարութիւնը կը զգար, ու պարկեշտ
ու գիտակից արուեստագէտի առողջ ու բեղուն
յուսահատութիւններն ունէր երբեմն՝ առանց
որոնց յաւակնոտ միջակ մը, փրօցուող կըրկ-
նող մը լոկ կ'ըլլայ մարդ :

Իր կարծածէն աւելի արագ եւ իր երազածէն
աւելի յաջող կերպով իրականացուց Շահին
իր ծրագիրը : «Կէօ»էն յետոյ, 97ի սալոնին ի
տես կը դնէր «Փողոցի անկիւն» տիտղոսով նկար
մը, ուր իրիկուան արեւի մը տակ, Բարիկի
փողոցի մը ծայրը, խորոված գետնախնձորի
ճղճիմ ծրարի մը շուրջը՝ ամբողջ ողորմելի ըն-
տանիքի մը խոնուելը կը տեսնէինք : «Պ. Շա-
հին, կը գրէր «Միկաոս»ին մէջ Բարիկի ամենէն
հղինակաւոր քննադատներէն մին՝ Արսէն Ալեք-

սանտր, — Պ. Շահին՝ «Փողոցի անկիւն» տիտղոսի
տակ՝ կը ներկայացնէ խորոված գետնախնձոր
ծախող հուժկու կնիկ մը, տեսակ մը մատակ
գամբո, ուր թեւերը մէջքին, կը դիտէ մէկ քանի
խեղճեր որոնց ծրար մը խորոված է ծախեր,
միակ ոսկեզօծ բանը զոր այնքան ողորմելիներ
կը ճանչնան : Տեսարանը ուժեղօրէն նկարուած
է, առանց բրտութեան, առանց մարդասիրա-
կան զգայնամոլութեան, միայն անհամեմատա-
կան ու անպատեհ տղեկի դէմքով մը աւերուած :
Այս նկարը զգացուած բանի մը սրտայոյզ
տեսք ունի : Եւ կարելի է ըսել թէ բարձրու-
լաւագոյն պատկերներէն մէկն է : Նոյն իսկ, լոկ
նկարչին անկեղծութեանը շնորհիւ՝ ընդհան-
րութեան շեշտ մը կ'առնէ ան, եւ այս նկարին
մէջ ինծի կը թուի տեսնել ուսեստ բաշխող
անձանօթ, հզօր ու բիրտ ուժը, հանդէպ սովա-
լըլուկ մտատանջութիւններուն, անձկագին ու
չաղրութիւններուն, սրտածմբկ զննութիւն-
ներուն զոր բաղդին ձգուած խեղճերը կը սեւե-
ռեն իրենց ձեռք անցընել կըցած քիչ մը կապ-
ղուբանքին» :

98ին Շահին ցուցադրեց «Էնթէռիէօ» մը, ու ի
գործաւորի ընտանիք մը կը ներկայացնէր՝ իր
խոնարհ ու աղնիւ ներքնակենցաղին մէջ, իրի-
կուան ճաշի ժամուն, եւ «Ապաստանարանը», ուր
կը տեսնէինք մայր մը իր երախտային հետ ածու-
խով անձնասպան եղած, նկար մը ամբողջու-
թեանը մէջ անյաջող, բայց ուր մօրը գլուխն ու
ձեռքերը, տառապանքի պատառ մը տարօրինա-
պէս կենդանի, անմոռանալի սարսուռ մը կու-
տային դիտողին : 99ին Շահին Սալոնին տուաւ
«Մոնմարթրի փողոց» մը՝ իրիկնադէմի արեւի
մը տակ, եւ «Գէշ մարդը» հրապարակի մը վրած
արձանի մը տակ կծկտած թափառիկ մը, յու-
սահատութեան, ատելութեան ու ոճիրի անա-
ւոր աչքերով :

Բայց այս բոլոր նկարները, իւղաներկով
յօրինուած, դեռ չէին յաջողած Շահինի տա-
ղանքը իր լրութեանը մէջ յայտնելու : Յղա-
ցումը անոնց մէջ նորէր եւ անձնական, տիպար-
ներուն ընարութիւնը, անոնց դէմքին ու ժես-
թիկն ներուժութիւնը, զանոնք պարուրող մըթ-
նոլորտին եւ անոնց ապրած պարզ ու անձկա-
գին տուամին նշանակութիւնը, արդէն կ'ու-
րուագծէին մեծ նկարիչը որ գոյութիւն ու-
նէր Շահինին մէջ : Բայց արտայայտութեան
գործիքը, իւղաներկին կիրարկումը, անկա-
տարութիւններ ցոյց կուտար դեռ : այդ արդէն
շատ գեղեցիկ եւ շատ շահեկան գործերուն մէջ

«պակաս» մը կար : Եւ Շահին, որ պիտի յաջողի օր մը նոյն իսկ իւզանկարին մէջ անթերի էջեր արտադրելու, առաջինն էր գգացող որ դեռ իր ուզածին չէր հասած : Եւ անա յանկարծ՝ ճանճրոյթի վայրկեանի մը մէջ, Շահին մտածեց, զբօսնելու համար, փորագրութիւն փորածել, առանց ո եւ է ուսուցչի առաջնորդութեան, ինքնիրենը ջանաց թափանցել այդ նուրբ ու դժուարին արուեստին գաղտնիքին : Եւ առաջին «բլանչը» զոր իր ձեռքովը գծեց, փորեց ու սպեց, հրաշակերա մըն էր : Հասկցող հըրատարակիչ մը, Սակօ, սքանչացմամբ գնահատեց այդ խոստմնաւէտ սկզբնաւորութիւնը, եւ մղեց զինքը այդ ճիւղը զարգացնելու : Շահին իր ձգարիտ կոչումը դտեր էր : Շարունակեց : Ու ետեւէ ետեւ, արտադրեց այն հոյակապ բըլանչները որոնք բարիգեան քննադատութեան կողմէ այդ արուեստին ամենէն շքեղ արտայայտութիւններուն կարգը դասուեցան : Միշտ նոյն «աշխարհն» էր զոր կը պատկերացնէր՝ այս նոր ոճին մէջ : նոյն աշխարհը, հիմա աւելի ընդարձակուած, իր բոլոր ճիւղաւորումներուն մէջ մանրամասնօրէն խուզարկուած : Մեզի ցուցուց բոլոր «ինկածները» : — Իրենց շքեղ փտութեան ու քրքջացող տառապանքին մէջէն դժնդակօրէն սիգացող բողբոջ, եւ կէսգիշերի հեռաւոր պուլվատներուն ամայութեանը մէջ մեղսակից լապտերներու արիւնոտ լոյսին տակ սպասող զոհ ու ոճրագործ աղջիկները, ու կնկան ու դանակի փողոցաճեմ ասպետները, եւ գիշերային ապաստանարաններու լիւլիած ու դանդաշկոտ մարդկայնութիւնները, եւ առանց տունի, առանց ընտանիքի, ճամբաներն ի վար մշտապէս աստանդական «Շըմինօն», ու փողոցի բաղրոնի մը վրայ խոնջէնքէն կստըրտած գլխիկոր ողորմելին, եւ տարիքէն ու դատանքէն այլանդակուած ծերերն ու պառաւները, եւ իր նենգ կիսամերկութեանը մէջ վայրագօրէն գալարուած կին-անասունը, ու ասոնց հետ մէկ քանի կնոջ դէմքեր ալ՝ ուրիշ աշխարհէ մը, առողջ գեղեցկութեան, ներդաշնակ շնորհի, երջանիկ կենսականութեան աղնուական ու հազուադիւտ մարդկութենէն : Այս բոլորը, զոր ուրիշ մը, Սթենլենը, մասամբ արտայայտած էր՝ տեսնելու բոլորովին տարբեր եղանակով մը ու ջղոտ, հապճեպ ու համառօտ գծագրութեան մը միջոցովը, Շահին կը վերստեղծէր շատ խորին եւ շատ անճնական հայեացքով մը մեկնուած, երկայն հետազոտութիւններէ եւ գրժուարահաճ գտումէ մը անցած, ու լայնագիծ

համագրական ոճով մը, որուն հրապոյրը կը բաղմապատկուէր փորագրութեան արհեստին ամենաճարտար ու ընդարձակ տիրացումով մը եւ անոր մէջ իրեն յատուկ բազմատարր եղանակի մը գիւտովը : Այդ բոլորին մանրամասն գնահատումը պիտի չփորձեմ, քանի որ «Անահիտ» ընթերցողները կարգացին այս էջերուն մէջ թարգմանութիւնը նշանաւոր քննադատի մը, Ռոժէ Մարքսի, վերլուծման : Պիտի բաւականանամ յիշատակելով այն տողերը զոր նուիրած էր Շահինին, այս սարուան Սալոնին վրայ իր հրատարակած յօդուածին մէջ : «արդի ֆրանսական քննադատութեան մեծագոյն ներկայացուցիչը, Կիւթալ Ժեֆոուա : «Ինքնատիպ փորագրութիւններուն մէջ, Պ. Էտկար Շահինինները, օֆօթիներ ու բուանթսէչներ, բոլորովին ինքնուրոյն տեղ մը կը գրաւեն՝ գծուածքին որոշակամութեամբը, ձեւին ամփոփումովը, ճերմակութիւններուն ու սեւութիւններուն ճիշդ բաշխումովը : Արուեստագէտը ոչ միայն ճարտար է պղինձը փորելու եւ ուզածին պէս գործածելու, այլեւ գիտէ տեսնել, եւ տեսածը ցոյց տալ : Կարող կը հանդիսանայ դէմքերն ու տեսարանները խուզարկելու, եւ մեր հայեցողութեանը կ'ընծայէ այն նուրբ եւ ուշագրաւ պատկերները զոր յաջողած է արտահանել իրականութենէն : »

Ինչ որ Շահինի արուեստագիտական անձնաւորութեան յատկանիշն եւ իրական արժանիքը կը կազմէ, այն է որ իր գործը միակնօթ մը մշտապէս յեղյեղելու, միեւնոյն «բրոքսեաթ» շարունակաբար կրկնելու մէջ չի կայանար, ոչ ալ ճարտար ու նուրբ ձեւի մը գաղափարազուրկ ու մակերեւութային փայլին մէջ : Շահին ամբողջ «սիքլ» մը ունի իր մըտքին խորը պատրաստ, կեանքի պատկերներու բազմազան ու ընդարձակ շրջան մը ամբողջ, որուն մէկ քանի առաջին հանգրուանները լոկ անցած է դեռ, եւ որուն թարգմանումին համար իր ձեւն ալ պիտի յաջողի ստանալ այն ճապուկ կերպարանափոխութիւնները, այն գործածուած միջոցներու, արտայայտութեան եղանակներու անհատնում ու մշտանորոգ պէսպիսութիւնը, որ կեանքն իր յեղյեղուկ բազմակերպութեանը մէջ վերարտադրել կարողացող հազուադիւտ մտքերուն յատուկ է լոկ : Այդ «սիքլ»ը արդէն ունի, եւ հետզհետէ պիտի ունենայ աւելի լայն սահմանի մը մէջ, իր մասնաւոր փրկիսփայտութիւնը, կեանքն ըմբռնելու անհատական ու խորունկ եղանակ մը, որ

մտածող-դիտողի եւ համադրող-իրապաշտի այդ խառնուածքին մէջէն՝ պիտի միշտ պահպանէ մտածումի միութիւն մը այս բազմածեւ արտայայտութեան առերեւոյթ հակասականութեանը մէջ : Եւ ատոր համար է որ ո եւ է շափազանցութիւն գործած չեմ ըլլար՝ հաւատալով որ Շահինը կոչուած է մեծ արուեստագէտներու կարգին մէջ տեղ մը գրաւելու :

Ատոնք են այն պատճառները որ զիս մը ղեցին հրապարակային ցոյցով մը տօնել Մանուէլեանն ու Շահինը : Տեսայ կարգ մը անձեր որոնք զարմանք յայտնեցին Մանուէլեանին ու Շահինին համար ցոյց տուած խանդավառութեանս մասին : Այդ զարմանքը զիս չի զարմացներ, մեր տարօրինակ բարքերուն մէջ, ուր այնքան ողորմելի դիւրութեամբ «մեծ մարդ» կը կնքենք ո եւ է քիչ շատ ուշիմ ու մերթ նոյն իսկ ոչ-ուշիմ պարոններ, յաճախ կը պատահի որ ճիշդ մեր մէջէն արտասովոր յարգանքի արժանացող դէմքերը անտարբերութեամբ դիտենք կամ անոնց երեսին պաշտպանողական գնահատում մը նետելով պէտք եղածն ըրած ըլլալ կարծենք : Բայց ես կը հաւատամ որ մեր ազգին մէջ գոյութիւն ունի առողջ դատողութիւն ու իրական զողագացում ունեցող

անձերու փոքրիկ դասակարգ մը, եւ ան պիտի ըմբռնէ որ տարրական պարտականութիւն մը կատարած կ'ըլլանք եզական մեծարանքի հարկ մը մատուցանելով Մանուէլեանի եւ Շահինի պէս դէմքերու, որոնց նմանը մեր ցեղը, — նոյն իսկ ո եւ է ցեղ, — յաճախ չ'արտադրեր, եւ որոնք, այն պահուն ուր կը կորսնցնենք Անդրէաս Արծրունին եւ Այվազովսքին, կուգան ապացուցանել յարանորոգ կենսականութիւնը հայ հանճարին :

Մենք հիմա իրենցմէ կը սպասենք որ միեւնոյն կորովով շարունակեն իրենց գործը, այն ճամբուն մէջէն զոր ձեռքովին բացին, պահպանելով զայն միշտ նոյն բարձրութեանը վրայ, ու ջանալով հասցնել զայն, տրամաբանական ու անհրաժեշտ վերելքով մը, մինչեւ գերագոյն պսակումը : Պէտք է որ իր լիակատար ամբողջութեանը մէջ կանգնեն ու աւարտեն Շէնքը՝ որուն հիմունքը այնքան անսպասելի յաջողութիւնով մը կրցան զետեղել : Ատի կը պտրտին նախ իրենք իրենց, յետոյ իրենց Յեղին որ գիտացաւ առաջին քայլէն զիրենք գուշակել, գնահատել եւ ծափել, եւ որ այլ եւս իրաւունք ունի իրենց նկատմամբ խստապահանջ ըլլալու :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

ՅՈՒՇԵՐԳ

Ա.

Կեանքիս ամէն հովերուն ցըրուած թօյնած ծաղիկներէն ,

Տարօրէն

Փունջ մ'եմ պահեր բոյրերու , — անհուն բոյրերն երկնային

Յիշատակին ,

Բոյրերն արբշիռ զոր մերթ հոգւոյս մէջ կը թօթվեմ ըզմայլած :

Ա՛լ լըռած հին ձայներէն , անլըսելի ա՛լ երգերէն ,

Տարօրէն

Լըռութիւն մը մընաց ինձի , — մեծ լըռութիւնը խորին

Յիշատակին ,

Հո՞ծ լըռութիւն որուն հոգիս մերթ կ'ունկընդրէ ըզմայլած :

Հին ձեւերէն ա՛լ անգոյ , շոգիացած մարմիններէն՝

Տարօրէն

Միայն հոգի մ'ինձի մընաց , — կարօտահար այրի հոգին

Յիշատակին ,

Պանդուխտ հոգին որուն հոգիս մերթ կը փարի ըզմայլած :

Բ .

Արեւաթափ երկընքէն կուգայ գիշեր անվախճան
 Աստուածային օրօրուհւոյ ծածանքներով եղկ ու խոհուն .
 Մութ ու լըռին աղօթքն անբաւ կը ծաւալի ըստուերներուն ,
 Օգին մէջէն , — միստիկ տաճար — լ անդորրի ու մոռացման :

Հոգւոյս խորէն այդ էջքին արձագանգող քոյր պատասխան ,
 Տըրամութիւնը կը ծագի ըզմայլանքով սարսըռուն .
 Տըրամութիւնը կը բարձրանայ ալէլուեա մ'ի նչպէս անհուն
 Որ երթար յամր ողջունել շընորհքի էջքը գիշերուան :

Աստուածափառ պակուցումը կը սաւառնի վերը մութին .
 Եւ , թրթըռուն լոյսէ խազեր գաշնակութեան գիշերային ,
 Երկնի սուգին ծոցէն մըռայլ՝ աստղերն ահա կը յառնեն .

Հոգւոյս ներհող սուգին մէջէն , արցունք-աստղեր սարսուգին .
 Փըլատակները միստիկ լուսաւորող անցեալին ,
 Մեղմաքըթիթ յիշատակները կ'արթընան յամրօրէն :

1898

Ե Զ Ե Ր Ը

— 0 —

Էջը բոլոր կ'ուզէր հոգիս, անմահ կեանքին էջն անհուն .
 Վայելքներու եւ յուզմանց բաբախուն էջն հըրաշաղան ,
 Որպէս զի հոն քըմայքին նաշխուն վըրձնովը մոգական
 Տեսիլն հարուստ նըկարէր իր հեշտավառ տենչերուն :

Էջ մը որ թեւ ըլլար ու լոյս , ու շունչ ու բոց, ասոնց պէս
 Բարձրաթըռիչ , աշխարհակալ , եւ խանդավառ եւ տենդոտ .
 Գըրկէր արբշիռ եւ վայելէր պըլլըռուքով մը տարփոտ
 Հեշտանքներու մարմինն անճառ , էլ բաշագեղ ու բիւրերես :

Էջը որ կայ՝ ձեւ ու չափով էջ մ'է որոշ, քառակուսի ,
 — Բանտ կամ վանդակ որ ամենուստ կ'որմնափակէ հոգիս թեւատ ,
 Սողորդացող կենդանութեան ճըղճիմ պատառ մը ազքատ
 Ուր ոչ մէկ հոյզ կը բաբախէ , ոչ մէկ արիւն կը շըրջի :

Ըստէպ ճերմակ ու ապշա՝ ծ կը մընայ էջն ընդերկար ,
 Կարծես պատկերն իսկ Ձանձրոյթին : Ճակատագիրը զըժխեմ
 Մերթ տուն կուտայ, եւ համակերպ կամ զայրալից , հոն կը գրեմ
 Տէր-Ողորմեա մը լալկան , եւ կամ անէծք մը յիմար :

1898

ԶԱԻԻՆ



ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ

ՊՈԼՍԱԿ ԱՆ ԲԱՐՔԵՐ

Ա .

— Տարեքը , դէմքը , ուսմունքը կարեւորութիւն չունի . հարո՞ւստ է՝ ան նայինք . . . Այն որ այս վճռական խօսքերը կ'արտասանէր , քսաներկու տարեկան աղուոր աղջիկ մըն էր , խոշոր սեւ աչքերով , հրապուրիչ ու շնորհալի :

Խնդիրը , ինչպէս գուշակեցիք , թեկնածուի մը վրայ էր որ իր ձեռքը կը խնդրէր բարեկամ կնոջ մը միջնորդութեամբ :

Առաջին անգամը չէր որ առաջարկութիւն մը կ'ըլլար իրեն : Դպրոցէն ելլելէն ի վեր գրեթէ ամիս չէր անցնէր որ այդ տեսակ պաշտօնական կամ անպաշտօն դիմումներ չըլլային :

Օրիորդ Սաթենիկ Կերմերեան ամէն ճաշակի յարմար պատահ մըն էր , հարուստ , գեղեցիկ , դեռահասակ եւ ուսեալ , հետեւաբար ամէն տեսակէ ու վիճակէ թեկնածուներ ներկայացած էին , բայց ծնողքն ու աղջիկը , որոնք պատճառ մը չէին տեսնար աճապարելու , գրեթէ անարհամ եղած էին միշտ եւ մինչեւ հիմա ներկայացածներէն լաւագոյնին կը սպասէին որ անշուշտ պիտի չուշանար երեւնալու :

Հինգ տարիէ ի վեր դպրոցական շրջանը աւարտած էր Սաթենիկ ու վկայագիրը առած : Յաղթական փառաւոր օր մը եղած էր աղջկան ու իր ծնողքին համար պարզեւաբաշխութեան օրը : Սաթենիկ իր վեց ընկերներուն հետ առաջին մրցանակ ընդունած էր ամէն դասերուն մէջ . « յոյժ քաջալաւ » աշխարհագրութեան , պատմութեան , իմաստասիրութեան , ֆրանսերէնի , հայերէնի , ձեռագործի , զաշնակի , բնական գիտութեան եւ գրահաշիւի մէջ : Իր ուսումնաւարտի ճառը՝ « Միգամածներու կազմութիւնը արեգակնային դրութեան մէջ » աջնքան ուժգնութեամբ ծափահարուած էր , որչափ միւս վեց ընկերներուն ճառերը : Պարզեւաբաշխութեան իրիկունը Սաթենիկի ծնողքը ընտանեկան հանդէս մը կազմակերպած էին իրենց Ենի-գիւղի ամարանոցին մէջ ուր եկեր հաւաքուեր էին Կերմերեանի ազգականներն ու մտերիները :

Ճաշէն ետքը , ներկաներու թախանձանքին վրայ , Սաթենիկ ոտքի ելեր ու կարգացեր էր

ցորեկուան ճառը որ կը սկսէր սապէս , « Մայիսի պայծառ ու անամպ գիշեր մը վերցուցած էք միթէ ձեր աչքերը դէպ ի կապուտակ երկնակամարը ուր անթիւ լոյսեր կը պլպլան . . . » ու կը վերջանար՝ « գիտութեան ջահն ի ձեռին մարդկութիւնը անշուշտ պիտի մխրճի անհուն եթերին մէջ ու պիտի կորզէ , օր մը , միգամածներու կազմութեան գաղտնիքը զոր նախանձոտ չիցուհի մը մինչեւ այսօր թաքուն կը պահէ : »

— Ապրի՛ , բէք ազուր կը կարգայ կոր , խերը տեսնաս , ըսած էին միաբերան ներկայ խաթունները , խօսքերնին Սաթենիկի մօր թագուկ հանրմին ուղղելով :

— Պատիկուց արդէն խելացի էր աղջիկս , ութը տարեկան՝ ձեռքը ինչ տայի ջուրի պէս կը կարգար :

— Աման թագուկ հանրմ, քնչ էր կարգացածը , տկանջս քիչ մը ծանր է տէ , աղէկ մը չհասկըցայ , հարցուց վաթուսնոց հետաքրքիր պառու մը :

— Ի՞նչոր ըսեմ , Գէնսուֆ հանրմ , ըրեթիւն երկընքի երլարգներուն մէջ եղած բաներուն վրայ է :

— Վ՛ր՛ւյ մի՛ ըսե , կը խենթենամ , պատասխանեց պառուը սարսափած :

Ներկաներէն մին , — վաճառական մը որ Եւրոպա ճամբորդած ըլլալուն համար աստղադիտութենէ եւ գրականութենէ հասկնալ կը կը կարծէր , — Սաթենիկի հետ վիճաբանութեան մը սկսաւ Լուսինին մէջ բնակիչ գրտնուելուն կամ չգտնուելուն մասին : Կամաց կամաց ուրիշներն ալ քաջալիրուելով մասնակցեցան վիճաբանութեան , եւ խօսակցութիւնը տեւեց մինչեւ մեկնումի ժամը :

Միայն Սաթենիկի հայրը , Մարկոս էֆէնտի , չմասնակցեցաւ վիճաբանութեան :

— Բան մըն ալ դուն չըսե՞ս , Մարկոս էֆէնտի , ըսաւ միջոց մը վաճառականը որ Եւրոպա ճամբորդած էր :

— Ի՞նչ ըսեմ , ատոնք աղուոր բաներ են , բայց պախալը բարա մը չի տար :

Մարկոս Կերմերեան « գրական » մարդ մըն էր՝ բառին կատարելապէս սխալ , գեանաքարչ , զգուշի իմաստովը : Կեանքի մէջ իր ասպարէզը սկսած էր սարաֆի մը քով սպասաւորութեամբ . տասնըչորս տարեկանէն մինչեւ քսան տարեկան հասակը Ակնցի վարպետի մը քով ծառայած էր չնչին ամսակ անով մը :

իր վարպետին բոլոր աղտոտ գործանու-
թիւններուն, խաբեբայ միջոցներուն, խարդախ
հաշիւներուն նախ հանդիսատես, յետոյ կամաց
կամաց գործակից նզեր էր: Իր մէջ ծածկուած
խաբելու, ստելու, գողնալու գերազանց յատ-
կութիւնները, որոնք «գործի մարդը» կը յատ-
կանշեն, Ակնցի սարաֆին գրասենեակին մէջ
ածեր, իրենց փթթումի ամբողջ կատարելու
թեամբը զարգացեր էին, վնասակար հունտե-
րու պէս որոնք աղբալից հողի մը վրայ կ'իյ-
նան:

Օր մըն ալ, մեծկակ խարդախութեան մը մաս-
նակցելէ ետքը, սարաֆին հազար ոսկին առած
ու Պոլսէն անցած էր Ղալաթիա՝ մէյ մըն ալ
ետ չդառնալու պայմանով: Ակնցին ի զուր
փորձեր էր ստակները պահանջել: Մարկոս
խարդախութիւնը մէջտեղ հանելու սպառնա-
լիքով ճամբեր էր իր վարպետը, որ գարձեր էր
գրասենեակ՝ չկրնալով զսպել իր աշակերտին
մասին զգացած հիացումը:

—Վա՛յ շան զաւակ, մտածեր էր, սէրսէմ մէկը
կ'երեւար, ի՛նչ աչքը բաց տղայ է եղեր...

Մարկոս հազար ոսկին միացնելով իր մանր
մունր գողութիւններով հաւաքած հինգ հա-
րիւր ոսկիին, սենեակ մը բացած էր իմպետար
խանի մէջ՝ որ օրէ որ կը բարգաւաճէր: Մի-
եւնոյն ժամանակ նոր խաղ մը խաղալու համար,
մտածեց ընկերակցութիւն մը կազմել իր
նախկին վարպետին հետ: Ակնցին մեծ ու-
րախութեամբ ու խանդավառութեամբ ընդու-
նեցաւ այդ ատարակութիւնը, իւր ընկերակցու-
թեան պայմանագրութիւնը ստորագրած իրի-
կունը յաղթական տուն գարձաւ, խորհելով՝

—Ես ալ ասկէ ետքը Ակնցի սարաֆ Օհանը
չըլլամ եթէ հազար ոսկիս տոկոսովը Մարկոսին
բթէն բերնէն չքաշեմ չառնեմ:

Գիտէք թէ ի՛նչ անուշի համեմատութիւն-
ներ կ'առնէ տոկոսը Ակնցիի մը քով, նոյն իսկ
սարաֆ չեղած ժամանակ: Վա՛յ եթէ Մարկոս
պարկեշտ մարդ մը եղած ըլլար:

Գործերը, սակայն, բոլորովին տարբեր ուղ-
ղութիւն մը առին: Մարկոս հրեայ հարուստ
սարաֆի մը հետ սքանչելի գործ մը կարգադրեց
որուն համեմատ հրեան պիտի անանկանար շատ
մը ուրիշներու գրամին հետ կոկորդաճանցընե-
լով Ակնցիին քանի մը հազար ոսկին՝ որուն
կէսը պիտի բաժնէր իրեն հետ:

Կարգադրութիւնը յաջողեցաւ: Հայ ու հը-
րեայ մտքերու միաւորութեամբ եղած այս հո-
յակապ խարդախութիւնը, որուն առջեւ հիացիկ

պակուցութեամբ մատ խածին ժամանակին ամե-
նէն աւելի «գործի մարդ» հաշակուածներն իսկ,
ա՛յն աստիճան անարատ կատարելութեամբ
գլուխ հանած էր որ օրէնքը զինաթափ հանդի-
սատես մը լոկ կրցաւ ըլլալ կողոպուտին:

Օհան աղան, գործին գեղեցկութենէն շրայած՝
կեր անշահախնդիւր արուեստասէր գող մը, գը-
րեթէ մոռցաւ իր կրած վնասին դառնութիւնը
եւ գլխին եկած փորձանքին համար զինքը մը-
խիթարելու եկող բարեկամի մը ըսաւ:

—Վեց հազար ոսկիս գնաց, բայց հէլալ
ըլլայ. ա՛յ չկ օլտուն...

Յետոյ, հպարտ, գրեթէ լրբինի շեշտով մը,

—Իշտէ ասանկ աշակերտներ հասցնելու է
էֆէնտիմ:

Տւտարի մը ետքը, Մարկոս էֆէնտի, որ հիմա
տաւը հազար ոսկիի տէր մէկն էր հրապարա-
կին վրայ, ամուսնացաւ Օհան աղայի աղջկան
հետ, երկու հազար ոսկի օժիտ առնելով:

Մեր պատմութիւնը սկսած ատեն Ազնուա-
շուք Մարկոս էֆէնտի կերմերեան արդէն 50—
60 հազար ոսկիի տէր մեծատուն մըն է, թագա-
կան խորհրդի գանձապետ, հիւանդանոցի հոգա-
բարձու, քաղաքական ժողովի անդամ: Անվի-
ճելի համբաւը կը վայելէ «գործի», «գրական»
մարդու: Իր Բերայի տունը, Ենի-գեղի ամա-
րանոցը եւ Ղալաթիա կառուցանել տուած խա-
նը անդիմադրելի հեղինակութիւն մը, ան-
պարտելի զօրութիւն մը կուտան իր խօսքե-
րուն, իր յայտնած գաղափարներուն, որոնք
պատգամներու պէս կ'իյնան բերնէն: Իր ամե-
նէն ընտանեկան, սիրելի բացատրութիւնն է,
որ եւ է բանի մը օգտակարութիւնը կամ անօ-
գուտութիւնը վճռելու համար, «պախալը կ'առ-
նէ» կամ «պախալը չ'առնեք»: Ինչ որ պախալը
կ'առնէ՝ օգտակար է, չահարէր է, խելացի է,
նկատողութեան արժանի է. ինչ որ պախալը
չ'առնեք՝ անօգուտ է, վնասակար է, անխելք է:
Պախալը տեսակ մը ծանրաչափ է Մարկոս է-
ֆէնտիի համար, որ ցոյց կուտայ կեանքի մը թ-
նոլորտին վիճակը: Այս ըսածներէս կը տեսնուի
որ Մարկոս էֆէնտիին հեղինակութիւնը կը
ջնջուի պախալին ամենազօր հեղինակութեան
առջեւ. իր արժանիքը այն է միայն որ պա-
խալին գնահատութիւնը կը գուշակէ ու կը
թարգմանէ հաւատարմօրէն:

Օրինակի համար երբոր իր աղջկան շրջանա-
ւարտի ձառի մասին կ'ըսէ թէ՛ պախալը չ'առ-
նեք ասանկ բաներ, վստահ կրնաք ըլլալ որ
պախալ մը պիտի չգտնուի որ հերքում տայ իր
ըսածին:

Թեթեւօրէն քննելով՝ գուցէ շատերուն համար հասարակ ու զիւրին երեւայ Մարկոս էֆէնտիի դատումներուն այս եղանակը եւ խելացութեան ու մտքի ճկունութեան գերազանց օրինակ մը չընծայէ : Արդ, պէտք է ըսենք որ գործի մարդու մը համար միշտ կարծուածին չափ զիւրին չէ մէկէն ի մէկ վճռել թէ՛ ի՞նչ կ'առնէ պախալը ու ի՞նչ չ'առնէր : Շատ անգամ գործնական համարուած մարդիկ սխալներ կ'ընեն այս մասին որ սուղի կը նստի իրենց :

Գործնական համարուած մարդ մը կը ճանչնամ որ աղջկանը դաշնակ մը չուզեց գնել «պախալը ատանկ բան չառնէր» ի նկատողութեամբ եւ ասոր համար քանի մը շնորհքով ամուսնական ձեռնարկներ անյաջողութեան մատնեց , որովհետեւ պախալը (կամ այս պարագային աւելի ճիշտ է ըսել պախալին կինը) աղջիկտեսի եկող կիներուն բերնովը կը մուտար . —Վո՛ւյ մեղայ, բիանօ մը պիլէ չուսին սալոնը : Մինչդեռ Մարկոս էֆէնտի , ճշմարտապէս գործնական մարդու հոտառութեամբ , աղջիկը շրջանաւարտ ըլլալուն պէս 80 ոսկինոց դաշնակ մը ծախու առաւ, զոր ժանեկաւոր ճերմակ ծածկոյթի մը տակ զետեղեց սրահին ճակատը :

Պախալը դաշնակը կը պահանջէ , թէեւ բնաւ չի ներեր որ նօթայի կամ դաշնակահարի համար զրամ ծախսուի : Ահա՛ ինչ որ միւս ողորմելին չկրցաւ գուշակել եւ ինչ որ Մարկոս էֆէնտի շատ աղէկ կուսած էր : Իր բուն գործի մարդու արժանիքը ասոր մէջն էր :

Սաթենիկ գիշերօթիկ զպրոցը ձգելով՝ ելք վերադարձաւ հօրենական սուներ , ինքզինքը անախորժ կերպով տարբեր միջավայրի մը մէջ գտաւ , որ առջի բերան գրեթէ յուսահատական տպաւորութիւն մը ըրաւ վրան :

Թէեւ երբեք վերացական աղջիկ մը չէր եղած զպրոցին մէջ , այսու հանգերձ միշտ պզտիկ հակում մը ունեցած էր կարգ մը մտային ու հոգեկան զբաղումներու , որոնք հետզհետէ զարգացեր էին իր մէջ ընկերուհիներուն եւ վարժուհիներուն քաջալերանքներով : Նախամեծար համարած բանաստեղծներ ունէր որոնց գրածները գոց կ'ընէր , ջութակի վարժութիւններ ըրած էր , տեսարաններ կար որոնցմէ հաճոյք կը զգար ու վերջալոյսներ որոնք կրնային տպաւորութիւն գործել իր վրայ : Ասոնցմէ զատ , նոյն իսկ խոհանքի ժամեր ունէր ուր ոսկի երազներ կ'երկնէր : Իր փափաքն էր ամուսնանալ երիտասարդի մը հետ որ միմիայն գործի մարդ չըլլար , որ ան-

պատճառ խարտեաչ ու միանգամայն աղուոր ըլլար , ու իրեն պէս անգլիներէն գիտնար եւ որուն հետ ճամբորդութիւն ընէր ատեն ատեն :

Այս չափաւոր, գրեթէ պահպանողական վերացականութեամբ շինուած ծրագրով ձգեց Սաթենիկ Հոմ Սքուլը եւ փոխադրուեցաւ վերջնականապէս իր հօր տունը : Բնաւ չկասկածեցաւ այն ամենագոր բռնաւորին գոյութեան որ հոն իրեն կը սպասէր եւ որ այդ անմեղ ծրագիրը կտոր կտոր պիտի բզկտէր , դայն նկատելով իբրեւ ապստամբական դրօշակ մը հաստատուած կարգուսարքին դէմ :

Հաշիւի շառնուած այդ բռնաւորը Պախալն էր :

Սաթենիկ մէկէն ի մէկ ընդվզեցաւ անոր դէմ , չուզեց գլուխ ծռել անոր ջախջախիչ հեղինակութեան առջեւ . սակայն , « Աղջիկս , ատ բաները պախալը չ'առնէր » բանաձեւը որ Մարկոս էֆէնտիի բերնէն իյնալով ծանր , լուրջ ճնշիչ միօրինակութեամբ՝ կը ուրակուծէր իր զպրոցականի գաղափարները ամէն առթիւ , վերջապէս բռնադատեց զինքը պարտութիւն խոստովանելու : Քիչ մը ժամանակ սակայն Սաթենիկ խուլ հակառակութիւն մը պահեց իր յաղթական թշնամիին դէմ , յետոյ կամաց կամաց , ա՛լ բոլորովին տեղի տուաւ , ու օր մըն ալ , դաշնակցեցաւ պախալին հետ : Հիմակ գործնական աղջիկ մըն էր , այնպէս ինչպէս հայրը կ'ուզէր որ ըլլար :

Սաթենիկ երբեմն կը յիշէր իր սխալանքի օրերը եւ կը խնդար այն ատենուան ունեցած գաղափարներուն վրայ , ինչպէս կը խնդար իր այն ընկերուհիներուն վրայ որոնք յամառած էին կատգած մնալ իրենց զպրոցի վերացականութեան :

Իր գործնական ոգին այնչափ հոշակ էր հանած Բերայի ընտանեկան շրջանակներուն մէջ որչափ հօրը, Մարկոս էֆէնտիինը :

—Գիտես քի հօրը քիթէն է ինկեր , կ'ըսէին տան բարեկամ կիները իր վրայ խօսած ատեննին :

Եւ իրենց համար Մարկոս էֆէնտիին քիթէն իյնալը մեծագոյն վկայականն էր գործնական ոգիի :

Ամէն անգամ որ հիւրերու քով Սաթենիկի խօսքը բացուէր, հայրն ու մայրը նոր դէպք մը ունէին իր մասին պատմելու որուն մէջ , հարիւրերորդ անգամն ըլլալով , ցոյց տուած էր իր գործնական ոգին :

Հայրը մանաւանդ փիլիբերան մնացած էր մօրն ու աղջկանը միջեւ տեղի ունեցած կռուի մը առթիւ :

Սաթենիկ երբեմն, երբ մայրը մանրուք դըրամի պէտք ունենայ, 20—30 փարայ փոխ կուտայ եղեր ու հաշիւ կը բռնէ : Գումարը 20 զուրուշի հասած ատեն պահանջեր է մօրմէն ու անիկա ալ մէծիտիէ մը տուեր է : Սակայն աղջիկը գոհ չէ եղեր, առարկելով թէ ինքը մանրուք տուած է եւ հետեւաբար կա՛մ պէտք է որ մայրը մանրուք հատուցանէ եւ կամ 20 զուրուշի տարբերութիւնը, 30 փարայի չափ աւելցընէ մէծիտիէին վրան :

— Ես քեզի 20 զուրուշի մանրուք տուի, մանրուք, խաֆազ կը մտնա՞յ կոր, պողոսցեր էր Սաթենիկ կաս կարմիր կտրած ու մէծիտիէն մօրը երեսին նետելով :

Բայց մայրը չըմբռնելով, կամ գուցէ չուզելով ըմբռնել, սարաֆի այս հաշիւը, եւ կասկածելով թէ Սաթենիկը զինքը խաբել կ'ուզէ, մերժեր էր վճարել :

— Իրիկունը թող հայրդ գայ տէ, անոր հարցընենք, ըսած էր :

Մարկոս էֆէնտի հիացողական բացազան չութիւններով իրաւունք տուած էր աղջկանը ու ա՛լ չէր կշտանար պատմելէ այդ մանրուքի տարբերութեան դէպքը :

— Է՛յ, աֆէրի՛ մ, քա իրա՞ւ մէծիտիէն ատանկ երեսիդ նետե՞ց, կը հարցնէին մտիկ ընողները ինզալով՝ Սաթենիկին մօրը :

— Հապա՛, հապա՛, տեսնելու բան էր, անանկ բարկութիւն մը քի կաս կարմիր կտրած աւազ աւազ կը պոռար կոր, վախցայ քի հիւանդ պիտի ըլլայ, կը պատասխանէր մայրը ինքն ալ ինզալով :

Դպրոցը ձգելէն ի վեր բազմաթիւ թեկնածուներ ներկայացած էին ձեռքը խնդրելու համար. ամենքն ալ մանրակրկիտ քննութիւններէ ետքը մերժեր էր, իրրեւ անհամապատասխան իր կազմած մտատիպարին : Վերջինը երիտասարդ մըն էր, ծանօթ ընտանիքէ մը, որ բաւական լաւ պաշտօն մը ունէր Հանրային Պարտուց վարչութեան մէջ եւ մեծ յոյսեր առաջ երթալու : Սաթենիկ սակայն, ինչպէս տեսանք մեր պատմութեան սկիզբը, այդ նոր առաջարկութիւնն ալ անընդունելի դատած էր :

— Ապաքային մէջ առաջ պիտի երթայ եւ զեր... ատանկ ենթադրական հաշիւներով ամուսնութիւն կ'ըլլա՞յ, կը մտածէր. ասկէ զատ

պաշտօնեաները պարապ մարդիկ կ'ըլլան, գործէ չեն հասկնար, մինչեւ կոկորդնին պարտքի մէջ կը լողան :

Իր բուն մտատիպարն էր բացարձակապէս «գործի մարդ»ը, վաճառական, սեղանաւոր կամ վաշխառու. աչքը բաց, եփուն, շունչանորդի, զիմացինը խաղի բերող, աջէն ձախէն կրծօն ուտող գործի մարդը :

— Ան հիմակուան դպրոցէ ելած երիտասարդները փարա մը չեն ըներ, կ'ըսէր իր հօրը հիացիկ հաւանութիւններովը քաջալերուած. ամենքն ալ ամուսնանալ կ'ուզեն որպէսզի իրենց կնկան զրամը ուտեն : Գաղիբէն գիտեն եղե՛ր, ուսմունք ունին եղե՛ր, սալոնի մարդ են եղե՛ր... պախալը կ'առնէ՞ ատոնք :

Ամուսնութեան համար ներկայացած թեկնածուներուն մէջ հատ մը կարմիայն որ լուրջ նկատողութեան առնուած էր իր ու ծնողքին կողմէ : Շապին-Գարահիսարցի վաճառական մըն էր որ քանի մը տարիէ ի վեր եկած հաստատուած էր Պոլիս եւ որուն գործերը օրէ օր բարգաւաճելու վրայ էին :

Մարտիրոս Սարըպըյըքեան, այս էր բարեբախտ թեկնածուին անունը, թէեւ քառասունի մօտ, սակայն հազիւ երեսուն տարեկան կ'երեւար : Տասնըութը տարեկան հասակին ամուսնացած էր իր քաղաքին մէջ եւ տասնըինգ տարուան անպտուղ ամուսնութենէ մը ետքը կորսնցուցած էր կիւնը : Մանջ զաւակ մը չունենալը իր սրտին մեծագոյն, անդամանելի ցաւը եղած էր : Ինքն էր Շապին-Գարահիսարի Սարըպըյըքեան գերդաստանին միակ մնացորդը եւ սոսկումով կը մտածէր թէ՛ իր մահուամբ ա՛լ թողորովին պիտի մարէր Սարըպըյըքեան գերդաստանը որ հարիւր տարիէ ի վեր անընդհատ կը շահագործէր գաւառին հայ գիւղացիները : Անլուր արարքներով գրեթէ պատմական դարձած վաշխառու ընտանիքի մը անունն էր որ պիտի շիջանէր, եւ Մարտիրոս աղա չէր կրնար իր մտքին մէջ սղմեցնել այդ անողոք իրականութիւնը : Այս պատճառով գրեթէ իր կնկան մահուանէն անմիջապէս ետքը փնտրուածքի ելած էր նոր ամուսնութիւն մը կընքելու համար, երբ իր գործերը ստիպած էին զինքը թողուլ իր ծննդավայրը եւ գալ Պոլիս ուր նորանոր ու անակնկալ շահերու աղբիւրներ զայն վերջնականապէս կապած էին :

Ժամանակ մը առուտուրի մէջ մոռցած էր Սարըպըյըքեան գերդաստանին ապագան, յետոյ նորէն դարձեր էր այդ սրտաճմլիկ մտա-

ծողութեան՝ ամուսնական խորհուրդներ երկ-
նելով, բաւական ժամանակ Պոլսեցի աղջիկ մը
առնելու հազար ու մէկ վտանգներէն սարսա-
փահար ըլլալէն ետքը :

Ի՞նչ պարագաներու մէջ Մարտիրոս Սարը-
պը յըջեան հանդիպած էր Կերմերեան Մարկոս
էֆէնտիին եւ ի՞նչպէս այդ հանդիպումը յանգած
էր անոր աղջկան ձեռքը խնդրելու առաջար-
կին :

Սարըպը յըջեան ընտանիքին վերընծիւղման
մասին աւագ կարեւորութիւն ունեցող այդ
հարցը պիտի ջանանք պարզել մեր պատմու-
թեան երկրորդ գլխին մէջ :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

(Շարունակելի)



ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

1817—1900

o o —

Հայոց ազգը ընդունակ եղաւ ծնելու ժթ-
գարում երկու խոշոր մարդ, երկու հանճար.
Յովհաննէս Այվազովսքի եւ Պետրոս Աղամ-
եան : Անհերքելի է, որ հայերի մէջ միշտ գո-
յութիւն ունեցել են տաղանդներ տարբեր տե-
սակի եւ մեծութեան, որոնք զըջի, վրձինի
կամ բեմական արուեստի շնորհիւ ընդհանուր
ուշադրութիւն են զբաւել : Նոյնպէս զանազան
ասպարէզներում իրանց ձիրքը ցոյց տուող ան-
ձինք միշտ անպակաս են եղել, սակայն այդ
երկու հսկաներ այնպիսի մի տարօրինակ ե-
րեւոյթ առաջացրին, որ ոչ թէ միայն իրանց
խաւար ու ողորմելի ազգին փառք ու պար-
ծանք կղան, այլ կարող էին նոյն իսկ ամէն մի
լուսաւորեալ ազգին պատիւ բերել : Ափսոս, Ա-
ղամեան : Նա աշխարհ եկաւ անժամանակ,
այսինքն երբ, նրա համար նպաստաւոր հող
չկար պատրաստուած. Հայոց ազգը չըմբռնեց
նրա մեծութիւնը, չհասկցաւ նրա նշանակու-
թիւնը, եւ նա մատնուեց այնպիսի դժբաղդ
վիճակի, որ երբ հաշուած էին նրա օրերը ան-
կողմում պատկած, վերջին մուրացկանի նման
կողմէնի հրի ողորմութեան էր սպասում «աղ-
գասէր» հայերից : Այս ամօթալի կնիքը անջինջ
կը մնայ մեր ազգի ճակատին :

Այվազովսքին երջանիկ մարդ էր : Երջանիկ
էր նախ եւ առաջ այն պատճառաւ որ ստի-
պուած չէր հայկական նեղ շրջանի մէջ գոր-
ծելու, նրա ասպարէզը լայն էր :

Ոչ թէ միայն հայոց փոքրիկ ասիական ազգը,

այլ նոյնիսկ Ռուսաստանի լայնածաւալ կայս-
րութիւնը մինչեւ այսօր չի ծնել մի երկրորդ
նկարիչ, որ իր հանճարի խոշորութեամբ հա-
ւասարուէր Այվազովսկուն : Ճշմարիտ է՝ Ռու-
սաստանը ունեցիր է անուանի եւ ականաւոր
զեղարուեստագէտներ, բայց նորանից ոչ մէկն
իսկ այնպիսի առատօրէն չէր վարձատրուած
երկնքից ստեղծագործական ուժով եւ բանա-
ստեղծական ոգւով, ինչպէս ի՞՞՞՞՞՞ հանդուցեալ
ձերուներն : Եւ նա մեծ ծառայութիւն մատու-
ցեց ռուսական արուեստին, թէ՛ իբրեւ ծովա-
նըկարչութեան նախահայր եւ թէ՛ ռուսաց
նկարչութեան հետ եւրոպացիներին ծանօթա-
ցընող : Նրանից առաջ ոչ մի ռուս գեղարու-
եստագէտ չէր ձեռնարկել պատկերահանդէսներ
բանալու արեւմտեան մեծ քաղաքներում, ինչ-
պէս Պարիզ, Լոնտօն, Հռոմ, Վենետիկ, Փլորին-
ցիա, Մադրիդ, Էւն : Նա իր ուղղութեամբ ու
մանդիկ էր : Իր ժամանակին մեծ անուն վաս-
տակեց ամէն տեղ : Բոլոր կրեւորիկները միա-
ձայն ընդունեցին նրա տաղանդի մեծութիւն
եւ ինքնուրուութիւն :

Ճշմարիտ է՝ շատ անգամ էլ իրաւացի կեր-
պով պախարակում էին անյաջող եւ շտապով
նկարուած պատկերներ հրապարակ հանելու
մասին, սակայն չէին ուրանում, որ այդ
մարդուն մէջ տարօրինակ կրակ կայ :

Բացի բոլոր անհրաժեշտ յատկութիւններէր
մեծ արտիստ լինելու համար, նոյպէս անսահ-
ման աշխատասէր էր, աշխուժ, հնարագէտ եւ
տոկուն : Նա իւր երկարամեայ կեանքի ըն-
թացքում բազմաթիւ սքանչելի գործեր ար-
տադրեց, համարեա բացառապէս ծովի տեսա-
բաններէր, որոնք ցրուած են Սախայից սկսած
մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա, բայց եւ պէտք
է խոստովանուել, որ կրկնակի բազմաթիւ ան-
կատար եւ միօրինակ նկարներ հանգէս հա-
նեց, որ իսկապէս ցանկալի չէր : Իբրեւ «մա-
րինիստ» իմ կարծիքով առաջնակարգ էր, բաղ-
դատելով եւրոպական հռչակ վայելող նկարիչ-
ներին հետ, իսկ իբրեւ ծովի երգիչ-բանաստեղծ
միակ էր : Այվազովսկու ամենարժեքի աշխա-
տութիւններ գտնուում են Ռուսաստանի գա-
նազան միւզէնիքում մէջ եւ թագաւորագուննե-
րի պալատներում : Նրանց թուում կան այնպիսի
ստեղծագործութիւններ, որ ընդհանուր գե-
ղարուեստի պատմութեան համար միշտ նը-
շանակութիւն պէտք է ունենան :

Ի՞նչպէս չանուանել հանդուցեալ արտիստին
«երջանիկ մարդ», երբ նրան յաջողուեց այն-
քան երկար ապրել, որ կարող եղաւ իւր խօս-
քը կատարելապէս վերջացնելու եւ հրաժեշտ
տուեց երկրաւոր կեանքին այն ժամանակ մի-
այն, երբ այլեւս բան չուներ ստիլու : Բաց ի
այդ իւր ամբողջ փառքը իւր աչքովը տեսաւ :
Իբրեւ մարդ բարեգործ էր եւ գթասիրտ :
Առանձնապէս սիրում էր իւր ծննդավայր թէ-
ողոսիան եւ այդ քաղաքի վրայ մեկերախտիք
ուներ : Թէոդոսիա, այդ փոքրիկ աննշան քա-
ղաքը յայտնի դարձաւ իւր մեծ, զաւակի շնորհիւ

Տաճկաստանում տեղի ունեցած կոտորածը մեծ վիշտ պատճառեց Այվազովսկուհուն եւ ցանկանալով զայրութիւն մի կերպ արտայայտել, Սուլթանից ստացած շքանշանը մի ժամանակ մտադրուեց վերադարձնել, բայց քաղաքական հանգամանքներ ստիպեցին միտքը փոխելու, այնու ամենայնիւ այդ շքանշանը իւր ծառային բաշխեց եւ այսպէս իւր վրդովմունքին բաւականութիւն տուեց:

Ոմանք ասում են թէ իւր ազգի համար Այվազովսկին մի մեծ բան չի արած: Եւ իւր գիւթիչ վրձինով մեծ պատիւ բերեց Հայոց ազգին. եւ այդ բանը թող իմ տալիս ինձ համարել անզուգական ծառայութիւն:

Պարեգ ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆՏ

ՆՈՐ ԼՈՅՐՆԵՐ

Բ.

Առ Գ Տ.

Երաժշտութիւնը, արուեստներու մէջ, առաջինն է որուն քաղցրութիւնը զիս կը վախցընէ: Անկարող եմ իրեն գիմադրելու: Զինամասի, տկար կը զգամ ինքզինքս անոր առջեւ: Կնիկի մը պէս անձնատուր կ'ըլլամ իր տիրական հմայքին: Անիկա կուգայ ինձի՝ պատկերներով բեղմնաւոր, իտէական գեղեցկութեամբ պատկերներով, որոնք իրարու կը յաջորդեն ցնորատու ներդաշնակութիւնով մը. դալկահար դէմքեր անպատում արտայայտութիւնով, աչքեր անձկութեան անսահման սեւեռումով, ու մազե՛ր, մազե՛ր որ կը նուազեն, որ կուլան, որ կ'աղօթեն, մարմիններ կոյսի սպիտակ ծարաւով մը դէպ ի երկինք սլացիկ. վազնջական ծիրանիներ միստիկ, տրտում իշխանուհիներու, զով մթութիւններու մէջ ծլած ձիւնասպիտակ, լուսեղէն ծաղիկներ, յոգնած երազելէ ու անկարող բաժնուելու մոգական հեռաւորութիւններէն ուր իրենց սրտերը կը յամենան, գինով անկարելի ըզձանքներուն քաղցրութիւնովը, թոյնովը: Երաժշտութիւնը կ'արթնցնէ իմ մէջս վիթխարի ուժեր, հուժկու կենսականութիւն մը, կամ սխրալի մեղկութիւններ, մոլեգին գորովանքներ, յուսահատ եւ տիեզերական գիրկընդխառնումի շարժում մը, ու երբեմն անէսանալու հեշտալի ծարաւ մը: Իմ մէջս կը մտնէ անիկա, ու կը լուսաւորէ էութիւնս մեծ աղւորութիւնով մը, աստղա-

զարդ գիշերուան մը պէս, կամ արեւի ու արշալոյսի ողորումով մը, որուն մէջէն սակայն անպատում թաղծութիւն մը կը ծաւալի: Բայց քանի մը տարիէ ի վեր, տարիներ ուր կեանքը ճանչցայ, ու սէրը, ու մոլեգին պաշտամունքը գեղեցկութեան, տարիներ ուր անհուն խենդութիւնը ու հիւանդութիւնը անցաւ հոգիիս մէջէն ու թունաւորեց բոլոր երանութիւններս, չե՛մ կրնար հանդուրժել երաժշտութեան, որովհետեւ տիրականօրէն միտքս կը բերէ անիկա հեռաւոր, մենաւոր էակը, սուգի ու ալօթքի առանձնոցը, ու սիրտս կը ճզմուի անկարելի սիրով մը:

Մեր քովի տունը կը բնակէին մայր մը, քոյր մը եւ եղբայր մը: Երբեք կեանքիս մէջ չեմ տեսած աւելի սիրայօգ ընտանիք մը: Լուռ, մտերիմ, կաթոգին, աւետարանական քաղցրութիւնով տուն մըն էր անոնցը: Իրենց սէրը իրարու համար այնչափ խորունկ, այնչափ տարածութիւն էր որ ա՛լ անգիտակցութեան կը հասնէր. ինքզինքնին կը մոռնային իրարու մէջ, կ'ամբողջանային իրարմով:

Ես պզտիկ տղայ մըն էի այն ատեն, հազիւ ինը տարեկան: Առջի վայրկեանէն զրացուհիս հմայքը աղբած էր վրաս: Ինքն ալ ինձի համար մայրական աղապատանք մը զգացած էր. ինձի սքանչելի պատմութիւններ կ'ընէր, ու կը պատմէր իր Պոլիս ըրած ուղեւորութիւնները, գիշերները մութ ծովին վրայ, ալիքներուն սեւ ու լուռ ու կակուղ թաւալումին վրայ, ու յետոյ իր պարահանդէսի տպաւորութիւնները կը պատմէր, առանց մորմոքի, քիչ մը յոգնած շեշտով. որովհետեւ թէեւ հազիւ 35 տարեկան, ա՛լ այդ հանդէսները ու փոփոզումները բացարձակապէս անտարբեր կը ձեռնէին զինքը: Երկարօրէն կը հարցընէի իրեն բոլոր մանրամասնութիւնները, ու ինքը ծաղրի ու գորովալիբ հեզնութեան ժպիտով մը կը ծըռէր ու կը նայէր հետաքրքրի աչքերուս մէջ:

— Ի՞նչ հագած էիր, սիրելի հօրաքոյր, ի՞նչ գոյն բոպա հագած էիր...

Ու յետոյ՝
— Տէքօլթէ, անանկ չէ՞. աղւոր էիր, անանկ չէ՞. քեզի կը նայէին ամենքն ալ, ու աղւոր կը պարէիր, անանկ չէ՞ որո՞ւն հետ կը պարէիր: Ինչո՞ւ համար ա՛լ չես պարեր, ինչո՞ւ համար ա՛լ այնպէս չես հագուեր, ա՛լ պալօ չես երթար...

Ու գրեթէ լալու չափ տխրելս տեսնելով , խնդալով , թեւեւրուն մէջ կ'առնէր զիս , գետնէն վեր վերցնելով կուրծքին վրայ կը սեղմէր զիս , ու անկուշտ կը համբուրէր աչքերս , ու կը խնդար , կը խնդար , ու զիս մխիթարելու համար կը գտնէր տարօրինակ անուշութեամբ բառեր .

— Բեզի ա՛յնչափ կը սիրեմ որ ա՛լ կը ձանձրանամ այդ բոլոր պարերէն , պալօներէն . մեծ հասնէ միասին կ'երթանք . ի՛նչ աղւոր պիտի ըլլայ հէ՞ , հէ՞ . . . ես կուպոյտ պիտի հագուիմ , սիրած գոյնդ , դուն ալ սքանչելի ֆոսք մը պիտի ունենաս . աղւոր ֆրանսերէն պիտի խօսիս , պիտի հաւնին քեզի . . .

— Բեզի ալ , հօրաքոյր :

— Այո՛ , ինծի ալ , անշուշտ , պարահանդէսին թագուհին պիտի ըլլամ . . . — Ու կը խնդար . . .

— Ինչո՞ւ անանկ կը խնդաս , հօրաքոյր :

— Ձես՞ ուզեր որ խնդամ :

— Ձէ՛ , բայց անանկ մի՛ խնդար , հօրաքոյր , աւմէն ատեն այնպէս չես խնդար . . .

Տարիներ անցան , ու հօրաքոյրս , — հօրաքոյր ուզած էր որ կանչէի զինք սկզբէն , թէեւ բնաւ ազգականութիւն չունէինք . — մօրս չափ անհրաժեշտ , ու նոյնչափ թանկագին էակ մը դարձած էր ինծի համար : Իր սիրոյն ու զըզուանքին ու համբոյրին մէջ անասելի , անբացատրելի հրապոյր մը կը գտնէի : Ամէն օր իր հոգիէն ցաւի ու տարփանքի մաս մը կը հաղորդէր ինծի : Իր շնորհալի մտածումին ու կանացի արտմութեան մթնոլորտին մէջ մեծցայ : Ձիս համբուրած ատենը ու ինծի հպած ատենը իր գրեթէ մանկական ու վախցած աչքերուն մէջ շատ անգամներ , առանց հասկնալու , նշմարած էի արցունքի մը զոզոզալը : Մինչեւ այսօր անոր կը պարտիմ ինչ որ ունիմ հոգիիս մէջ գեղեցիկ ու կանացի ու շիւրաբնիկ : Կնոջ մը զգայնութիւնը տուաւ ինծի , սխիւլու տանջող քաղցրութիւնը , ու երազուած բաներուն մեծ աղւորութիւնը : Առանց հօրաքոյրջա բազուկներուն որոնք տարփողօրէն բոլորուեցան վզիս շուրջը , առանց իր ցաւով ու երազով իտէականացած մտին հպումին , ու առանց իր աչքերուն որ աչքերուս մէջ հոգիիս զեռ անգլխակից արտմութիւնները փնտոցելին , երբեք թերեւս կեանքիս մէջ Սէրը չպիտի ճանչնայի : Անորմով արթնցան իմ մէջս , տարտամօրէն , բոլոր երանաւէտ խոովքները : Անոր կը պարտիմ հեշտալի միտաիքակենութիւնը որ այնչափ անգամներ սպառող տեսչերուս մէջ մայրակա-

նօրէն զօրացուցած է զիս : Իրիկունները , Աստուածածնի պատկերին առջեւ միասին կ'աղօթէինք , ես ծնրագիր իր հոյակապ լանջքին աշտարակոյ գեղեցկութեանը քով :

Մեր տունը ծովափին մօտ էր , ու ամառուան գիշերները , ընթրիքէն ետքը , դուրսը մայթին վրայ կը նստէինք զովնալու համար : Կը յիշեմ , տասնըվեց տարեկան էի այն ատեն : Յուլիսի հրաշալի գիշեր մը , եւ աղամանդէ երկնքէն , մաքուր ու աղւոր , նորատի կնոջ մը սիրոյ երազին պէս , լուսինը կը հոսէր վար , լուս , ձերմակ , անսահման : Այդ գիշերներուն անպատմելի բանաստեղծութիւնը խառնուած է է՛ն մաքուր ու երջանիկ յիշատակներու : Մովը , մեզմէ քանի մը քայլ անդին , արծաթ լոյսի հրդեհ մըն էր : Հեռաւոր ալիքներուն վրայ որ հազիւ թէ կը շարժէին , ձկնորսի նաւակ մը մեղի կը զրկէր միակերպ , խորունկ եւ անձկոտ թնդիւնը հարուածին որ նաւակին վրայ կ'իջնէր , շուարած ձուկերը բերելու համար ձգուած ուղեւորներուն մէջ : Դրան առջեւ նրատած էինք , լուսինով ողողուած , ու երջանիկ էի իր ոտքերուն առջեւ , թեւս իր ծունկին վրայ : Մեր առջեւի դռանին մէջ , երիտասարդ զոյգ մը , մեր դրացիներէն , թեւ թեւի կը ձեմէին , ու հեռուէն , հոգիի անորոշ ու անբացատրելի վրդովումով մը տեսայ որ երիտասարդը աղջկան մաղբը իր շրթունքներուն կը ստանէր , ու իր երեսը կը ծածկէր անոնցմով՝ որպէս թէ սեւ մետաքսէ անուշահոտ թաշկինակ մը ըլլար :

Յանկարծ հօրաքոյրջա դարձայ եւ ըսի .

— Հօրաքո՛յր , ինչո՞ւ չես կարգուած :

Շուարումի վայրկեան մը ունեցաւ . ապա , անտարբեր ,

— Ինչո՞ւ կարգուէի , ամուսնութիւնը չեմ սիրեր . կ'ուզեմ ազատ ըլլալ , եւ յետոյ ելբայրս կայ , մայրս կայ . իրենց սէրը կը բուէ ինծի , եւ յետոյ զիրենք ա՛յնչափ կը սիրեմ : « Տխուր չէ՞ բա՛մուռիլ տարիներով սիրած անձերէդ :

— Այո՛ , հօրաքոյր , բայց ամէն մարդ կը կարգուի , դուն բնաւ այդ գաղափարը չունեցա՞ր :

Խեղճը չկրցաւ բացարձակ սուտ մը ըսել , ու ձիգ մը ընկելով ,

— Այո՛ , անգամ մը : շատ հին բան է . բարեկամ մը ունէի , զիս շատ կը սիրէր . ֆրանսական փոխ-հիւստատուն էր այստեղի : Բայց մայրս ինծի համակարծիք չեղաւ . ես շատ

սիրած էի զինքը , քեզի շատ կը նմանէր , խո-
րունկ , խանդավառ ու տանջուած բան մը կար
իր ձայնին մէջ : Ու աչքերը այնչափ անուշ ու
այնչափ արտում էին որ շատ գիշերներ լա-
ցած եմ անոնց վրայ մտածելով . . .

Ու հետզհետէ աչքերը մեծցած ու հրավառ
իր քանդուած տարփանքին տնդովը՝ շարու-
նակեց .

— Ինչո՞ւ մայրս միջամտեց՝ չեմ գիտեր , անհաս
կանելի բաներն են կեանքի մէջ որ ամենէն
աւելի կը լացընեն . չկրցայ գիմադրել իր պա-
ղատանքին . ու խոստացայ ա՛լ չտեսնել , ա՛լ
մտնալ բարեկամս : Եւ սակայն անկէ ի վեր
յանցաւորի մը պէս պզտիկցած կը զգամ ինք-
զինքս : Իրար այնպէս հասկնալէ ու սիրելէ
ետքը , ինչո՞ւ ու ժը պակսեցաւ երկուքնուս ար-
չեմ գիտեր : Կը տեսնես , աղաս , աւելի քաջու-
թիւն պէտք է երջանիկ ըլլալու համար քան
թէ լալու համար : Տեսակ մը վատութիւն կայ
զոհողութեան մէջ , որովհետեւ մեծ սէրերը
միայն կը շինեն գերադասց գեղեցկութիւն-
ները : Չեմ գիտեր , կրնա՞ս կոր հասկնալ զիս :
Դեռ շատ պզտիկ ես , բայց երբ հանդիպիս
անոր զոր պիտի սիրես , երացուած աղջկան
որ քեզ կը սպասէ տեղ մը , տկար մի՛ ըլլար ,
ամենի հեղեղատի մը պէս անդիմադրելի եղբր
ու արեական ու գեղեցիկ : Ամենէն մեծ , ամե-
նէն աղւոր իրականութիւնը Զգացումն է , մը-
նացածը կեանքի մէջ չ'արժեք որ վրան մտա-
ծենք : Ռամիկ ու չոր հողիններուն ձգէ թուա-
բանական երանութիւնները , ու իրենց ան-
հոսպարժելի բարեխառնութեան պատգամներ :
Ցաւէն մի՛ վախնար , եթէ գեղեցկութիւն մըն
է որ կը լացընէ քեզ . անկարելի է որ աւելի
աղւորցած չըլլաս տառապելէդ ետքը : Թերեւս
ատենը չէր այս բաները ըսելու քեզի . բայց
այս գիշեր աչքերուդ մէջ տարօրինակ բաներ
տեսայ , կարծես թէ արգէն կը սպասես մեծ
ցաւի մը . օ՛ այդ պաղատողին արտմոթիւնը
աչքերուդ . ին՛ դճ սղաս . . .

Բառ մը չկրցայ պատասխանել . թեւերուն
մէջ առաւ զիս , ու գլուխս կուրծքին վրայ
երկարօրէն հեծկլտացի . . .

Այն տարին Պոլիս զրկուեցայ , Բոպէրթ
Քոլէժը , իբրեւ գիշերօթիկ աշակերտ : Դպրոցի
կեանքը , հեռաւորութիւնը , վերջերը ա՛լ մոռ-

ցընել տուած էին ինծի մանկութեան օրերը , ու
մանկութեան օրերու դէմքերը :

Շրջանս աւարտած ու գործի մարդ մը եղած
էի : Քսանը՛րինգ տարեկան՝ դատական խնդրով
մը պէտք եղաւ որ Իզմիր երթամ : Հօրաքոյ-
րիս յիշատակը մոքիս մէջ արթնցաւ այն ա-
տեն թարմ ուրախութիւնով մը : Կեանքիս մէջ
— շատ դէպքեր զիս համոզած էին ատոր — ո՛չ
մէկը անոր չափ ու անոր պէս սիրած էր զիս .
մինչդեռ ես , ո՛րչափ անգամներ , խենդի մը պէս
տառապած էի ջլգիկ , պղաճոտիկ հողիով աղջիկ-
ներու համար :

Առաջին հանդիպած բարեկամս մէկզի առի
ու սրճարան մը տանելով լուրեր հարցուցի
հօրաքրոջս վրայ .

— Շատ ախուր բան մըն է հարցուցածդ :

— ? ? . . .

— Մայրը մեռաւ . յանկարծակի երկու տարի
առաջ . ու հարուածին անակնկալ ահագնու-
թիւնը ջախջախեց անէացուց խեղճ աղջիկը :
Նալու իսկ անկարող էր : Օրերով բերանը չբա-
ցաւ : Պատուհանին առջեւը նստած , կը նայի
եղեր , ժամերով , ծովին ու հեռաւոր լեռներուն
ու հորիզոններուն : Ասիկա շարաթներ տեսեր է :

Գիշեր մը ասն մէջ ոտնաձայններ կը լսուին
սանդուղին վրայ : Եղբայրը ննջասենեակէն
դուրս կ'աճապարէ . իր քրոջ սենեակին դուռը
բաց գտնելով ներս կը մտնէ , — ոչ ոք . անկո-
զինը պարսպ : Խեղալեղ՝ վար կը վազէ , ու
փողոցը կը յաջողի հասնել իր քրոջը որ վրճ-
ուական քալուածքով դէպ ի ծովը կը գիմէ —
թեւէն կը բռնէ .

— Եկո՛ւր , քուրիկս :

— Չէ՛ , կըսէ , չէ՛ , թող որ երթամ , թող զիս ,
թո՛ղ , թո՛ղ , թո՛ղ . . .

— Եկո՛ւր ինծի հետ , եկո՛ւր , անուշ քոյրս ,
եկուր , առանց քեզի ի՞նչպէս կ'ուզես որ ապ-
րիմ , եկուր , եկուր . եկուր . . .

— Ո՛չ , կ'ըսեմ կոր , ձգէ զիս , ձգէ որ երթամ .
հոն քաղցր ու զով ըլլալու է : Չգէ՛ , աս ի՞նչ
դէշ մարդեր էք , ձգէ , կ'ըսեմ կոր , ի՞նչու հան-
գրաս չէք ձգեր զիս , միշտ ետեւէս էք . օ՛հ ,
ձգէ , ձգէ . . .

Եղբայրը կը ստիպուի բռնի գրկել ու տուն
բերել զինքը : Գիմադրելու անկարող , ազու
մը պէս լացեր է ան գիշերը : Հետեւեալ օրը
բժիշկներու խորհուրդով հիւանդանոց տարեր
էին զինքը :

— Հիմա հիւանդանո՞ցն է դեռ :

— Ո՛չ , տարի մը ետքը աղէկցաւ . հիմա ա՛լ
տունն է :

Սրտի կսկիծով մը մտիկ ըրի բարեկամիս :
Հետեւեալ օրը գացի անձամբ տեսնելու :

—Վերն է, ըսին , իր սենեակը . երբեք վար
չ'իջնար, երբեք մէկուէն հետ չի տեսնուիր: Բայց
կարելի է քեզ չի մերժիր:

Վեր ելայ : Գլխովեան քոյրի հագուստներ
հազած էր՝ սեփ սեւ, գերազանց մաքրութեամբ
ձերմակ թեւնոցներով ու վզնոցով : Ո՛րչափ
նիհարցած էր, ու այդ անմոռանալի աչքե՛րը՝
հալած , սպառած դէմքին մէջ : Ձիս անմիջա-
պէս ճանչցաւ , ու հանդարտ համակրութեան
շարժումով մը քովը նստեցուց զիս , ու տե-
ղեկութիւն հարցուց կեանքիս վրայ : Ես նոյն
հարցումը վախցայ ընելու . իր հագուստը, հա-
լած դէմքը , արհաւիրքով շեցուն աչքերը ,
Աստուածածնին պատկերը իր գլխուն վրայ ,
կը բաւէին արդէն : Ժամ մը ետքը բաժնուեցայ
իրմէ : Գուրբի ու ընդվզումի խենդութիւն մը
կը գալարէր զիս : Գարափին վրայ սրճարան մը
մտայ, բազմութեան մէջ, մարդերու մէջ ըլլալու
համար :


Շարժ մը ետքը իզմիրէն մեկնեցայ : Բայց
պատկերը, պատկերը այդ սենեակին ինձմէ չէ

բաժնուած , ինձմէ երբեք չպիտի բաժնուի . օ՛
այդ մինակութիւնը շարժներ, ամիսներ, տա-
րիներ, չորս պատի մէջ, ինքզինքիդ մէջ բազ-
մապատկուած . ու ա՛լ բան մը չյուսացողի ,
ա՛լ բան մը չսպասողի այդ ցաւազին
անդորրութիւնը, ու այդ աղօթքները ամբողջ
արեւոտ ցորեկներ , ամբողջ անքուն գիշեր-
ներ , մէկու մը որ երբեք , երբեք , եր-
բեք չի պատասխաներ : Վախերը կը դառ-
նան , մետաքսներու, բեհեզներու եւ անուրջի
գոյն շրջագգեստներու մէջէն կ'երգեն անու-
շահոտ ու վարդ մարմիններ, աչքերը կը վա-
ռին տարփանքով, ու սրտերը հեշտութեամբ կը
գինովնան, ու կեանքը սէրը կ'օրհներգէ , ու
յաւիտենապէս՝ ու զեղիս մէջէն , մորմոքիս
ու գորովանքիս մէջէն, անհուն սեւ ծաղկի մը
պէս կը բարձրանայ Անոր յիշատակը, — իր
սենեակը, իր անվախճան մենութիւնը, իր դա-
ժան համակերպութիւնը , ու ինքը ամբողջ
գալարուած , անէացած, բանտուած մոլեգին ու
յամառ աղօթքի մը մէջ . . .

Մանչէսթը ԶԱՐԵՀ ՎԱՐՍԱՄԵԱՆ



ՀԱՅ ԷՋԵՐ



ՏԱՂ ՀՈԳԻՈՑ՝ ՆԱԴԱՇ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ

Երազ է ու սուտ , եղբայրք , աշխարհիս բաներն ի լըման .
Ո՞ւր են թագաւորք 'ւ իշխանք պարոնայք ու սուլթան ու խան :

Շինեցին բերդ ու քաղաք, դարպասնին, ու շատ դատեցան .
Յետոյ գեմ անտէր թողին ու մտան ի հող 'ւ ի զընտան :

Նաղաշ, մի՛ խաբիր մեղօք, մի՛ դատիր անասնոյ նըման .
Մի՛ գիրկ աշխարհիս ածեր , մի՛ կարծեր թէ քեզ տի մընան :

Շուտով քեզ խնդիր կուգան , կու խոցեն ըզնոգիդ մահուան .
Հոգիդ բաժանի ի քէն , ու մընայ մարմինդ ի զընտան :

Աշխարհս գեմ վաւֆայ չունի , ոչ արեր է մարդոյ բարի ,
Անուրք մի խընդալ կուտայ , բայց յետոյ դ սոն է եւ լեղի :

Աշխարհիս Տի՛ հաւատար, զօրն ի բուն պի՛ սուտ կը խօսի .
Զինչ որ խոստանայ մարդուն՝ չի պահէ զիր խօսքն ի սեղի :

Շատոց խոստանայ հանգիստ, ու պահէ զօրն յերերմընի .
Շատոց մեծութիւն աւաց՝ պահէ աղքատ՝ և անօթի :

Խարէ թէ ուրախ պահեմ, ու առնեմ զօրերդ ի բարի,
Ի մէջն ի ծովուն տանի ու պահէ ի տարտարոսի :

Աւուրք մի վերայ անցնի, ու մահու օրն հասանի .
Յարեւուն դատարկ հանէ եւ առնէ ողորմ ու լալի :

Աւա՛ղ, զայն աղւոր մանկտիքն որ դարձան ի հող՝ և ի փոշի .
Իւրեանց ժամանակն անցաւ զերթ երազ մութն գիշերի :

Երբ զայս գիտես գերի, որ քու սէրդ ի սուգ տի փոխի,
Զաշխարհս դու մի՛ սիրեր առաւել քան զկարն աւելի :

Մալի հասրաթ մի՛ լինիր, մեծութիւն քեզ չի պիտի .
Ունիս կերակուր հանդերձ՝ աւելին քեղ ցաւ կուլինի :

Ա՛յ, ողորմելի նազաչ, ջանք արա՛ ու գործէ բարին ,
Զքու խրատն դու լըսէ որ այլոց ի գործ անցանի :

Գիտէիր թէ լողորդ էիր . նա՛յ մեղաց գետն կու տանի .
Ի հող աշխարհիս դատիս, շահ չունիս քան զեմն աւելի :

ՆԱՂԱՇ



ԵՐԿՈՒ ՈԳԻ

— 0 0 —

ՔԵՐՔՈՒԱԾ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

«Ես սիրում եմ նրան, ով իր բարութիւնը
իր խաչ ու ճակատագիրն է դարձնում .
այդ կերպ նա կը ցանկանայ իր բարութեան
համար ապրիլ եւ չ'ապրիլ .»

ՖՐ. ՆԻՅՁԷ

Ա .

Երկու ընկեր էին, երկու ուժ էին :
Երկու սրտեր էին նոքա, որոնք միացած,
բայց բաժան էին . մօտ ու շատ հեռու՝ միմ-
եանցից :

Երկու երկրային ուղիներ էին, որոնք ու-
նէին սիրտ եւ ուղեղ, եւ որոնց սիրտն եւ
ուղեղը շատ հաշտ ու շատ օտար էին միմ-
եանցից :

Եւ երկուքն էլ զողորջուն քայլերով մտան
գիտութեան տաճարը . եւ երկուքն էլ երկըր-
պագեցին գիտութեան կուռքին :

Մօ՛տ, շատ մօտ էին միմեանց երկու սրտերը .
մի էր նոցա հոգին, երբ գիտութեան ուժի ա-
ռաջ դեռ չէին զգացել իրենց ոչնչութիւնը . . .

Իացուեց կախարդական աշխարհի վարա-
գոյրը :

«Տիեզերք» էր կոչւում այն հսկայ գրաման
որը իւրաքանչիւր օր պարզում էին երկու սրը-
տերին՝ կեանքի մեծ Խորհուրդները : Եւ առե-
ցին նոքա տիեզերքը :

Անձա՛յր ու անձո՛ւն, չոր անապա՛տ էր այդ
տարածութիւնը : Սատոյցն ու բոցը շղթայիւ
ու շանթիւ էր հողագունտը :

Ու մենակ էին, անմեղ թիթեռ էին նոքա
վիժող լափող բոցերի մէջ :

Կասկածի վիշապը չոքեց կրծքերին . դիտելին նոքա ու չգիտէին : Մեծ, շատ մեծ ուժ քաշուժ էր նոցա զէպ ի վե՛ր ու վե՛ր . . . բարձրանում էին անձայր ու անհո՛ւն :

Մութ էր գեռ անվերջ խորշեր : Մշուշով պատած էր գեռ ան՛յն առարկաներ , որոնց տեսել էին երկու սրտերը : Եւ յուսահատուեց նոցանից մէկը , կորցրեց իր նեցուկը . . . նա մի ճիչ արձակելով գլորուեց լեռնային բարձրութիւնից :

Վերցուեց վարագոյրը : Երկրի ու կեանքի վիթխարի դրաման աչքի առաջն էր . . . տխուր էր նա : Այստեղ մշուշը չէր սեղմել տեսարանները , նոցա շղթայիլ էր հզօր արեւի արիւնագոյն սլաքները , ո՛րնք , որպէս նետեր , շանթում շամփրում էին անեղր արեղերքը :

* * *

Արտասուեաց ովկիանի ափին էր կանգնած : Սեւ սեւ ալիքներ , որպէս վիշապ , մօտենում էին՝ կատաղած , բոցոտ ու ժահւրոտ :

Չարսեց ոգին , միայն արտասուեց : Գազզած , փրփրոտ , հրոտ մեծ վիշապը , քարչեց ոգուն տարաւ շատ խո՛ր , խո՛ր յատակ : Եւ նա տեսաւ արեան ծովեր , բիւր զսհեր : Դողաց : Նա գուրս թռաւ , որոտաց : «Նա արե՛ւ եմ , արեւի նե՛տ . ես մարգարէ՛ եւ բալասան եմ վերքերի» . Իջաւ սարից , մի վիշտ առաւ , մի պուտ արցունք , մի պուտ արիւն , մի խոց առաւ , մի խաչ շինեց կախեց կրծքից . . . եւ նա գրկեց տիեզերքը , ու ժպտաց :

Բ .

Մովիբ անցաւ , լեռներ անցաւ՝ արտում տխուր , միայնակ , եւ ամէն տեղ՝ վի՛շտ ու թախիծ :

Մի սարի գագաթից նա տեսաւ մի դաշտ . պերճ ու կանաչ հագուստի տեղ դաշտը կրում էր չոր մացառներ , լերկ ժայռեր : Մի մեծ քաղաք տարածել էր անապատում : Սուր աւտամնաւոր հսկայ պարիսպներ շղթայիլ էին սզոտ աւերակը — աւերակ էր դա՛ դաժան ու մեռած . մի մեծ բանակ շրջապատել էր նորան . եւ նոքա , որպէս անգութ որսորդներ , պաշարել էին եղնիկի որջը . ոգին տեսաւ այդ , քայլից զէպ ի բանակը եւ խօսեց նրանց . «Ի՞նչ էք ուզում մարդկանցից՝ դուք մա՛րդիկ . գայլեր էլ չէ՛ք . թողէ՛ք դոցա , թողէ՛ք նոցա որ ապրին : — ձյմարիտ ես , ո՛վ մարգարէ . գնա՛ պատգամ ասա՛ նոցա՛ որ մենք հաշտ ենք , եղբայր ենք , ասին նրանք չար ժպտելով : Խնդաց ու գին : Գնաց , մտաւ քաղաքը , զարմացաւ :

Գերեզմա՛ն էր , լայն գերեզման : Դիակների կոյտեր տեսաւ , կմախքներ տեսաւ . Եհովայի շքեղ տաճարը Մողոթի տուն էր դառել՝ զոհ ուզում . . . օհ , ո՛րքան զոհ :

Եւ խուլ վիշտ էր եւ խոր խոց էր տիեզերքը :

Կացնե՛ց ոգին , խնկա՛ց ոգին , մի երգ երգեց , երգն էր ազատ ու հնչուն :

Լսեց նորան մարդկանց խուժանը . մարդարե՛ էր , անբի՛ծ էր :

. . . Եւ մարդակեր գազանների բանակը խուժեց քաղաքը . . . :

Անապատը ծարաւի էր . արիւն-արցունքը փրփրալով յագուրդ տուեց ծարաւ երկրին :

Սարսեց ոգին . կայծեր , անէծք՝ մանուկ , մաքուր շրթունքներինց ցայտեցին :

«Խոստմնազանց գազաննե՛ր , թող կայծակը ձեզ լափէ . արիւն-արցունք՝ բոցն՛ր դառած , ձեզ կլանէ ու լափէ : » Միճաղեցին նրջանիկները — միամիտ էր մարգարէն — բանտարկեցին նրան :

Թշուառութեան վիչ էր բանալը : Ժանդոտ ճիւղ ժանտախառն այնտեղ բուն էր դրիլ : Սոսկալի էր նրա համբոյրը տանջուած գերիներին — սուր մանգաղ հնձում էր արտը , եւ կուտակո՛ւմ , կուտակո՛ւմ :

Մի արտ էր նա , մի հսկա՛յ արտ :

Եւ մարգարէն դարձաւ նրանց , երգեց մի երգ . «Նա բժիշկ չե՛մ , ես արե՛ւ եմ եւ արեւի նետն եմ միայն . բացէ՛ք յայտնեցէք ձեր սիրտը ինձ — սրտի գրկում , նետի նշան դուք եղէք . սրտի տանջանքը , նետի սլաքը — մահն է կեանքը » :

Բանտի պատի մի մութ խորշից արեւի նեւերն էր ներս ցցւում . եւ նե՛տ էին , եւ յոյս էին , եւ մա՛հ էին — կեանք էին :

Գ .

Մի երկիր էր — գրախա եւ դժոխք : Երջանիկ եւ ուրախ էին այնտեղ մարդիկ . դժբաղդ ու տրտում էին այնտեղ մարդիկ :

Գրքիջն , արցունքն ընկեր էին , մի էին , բայց արցունքը հեղեղում էր քրքրիլ , եւ սորա առողջ , կոհակածեւ ելուէջներն ու խաղերը խեղդուում էին պղտոր հեղեղի գրկում :

Մի մեծ գետ էր հոսում այդ երկրի միջից . գետը երգ էր , երգն էր հառաչ ու քրքրիլ : Նրա մի ափում , պայծառ կանաչների , պալատների մէջ ապրում էին երջանիկները , միւսումը՝ սեւ ծխով քողաւորում , հսկայ շէնքերի թեւերի տակ ընկել էին մռայլ մարդկանց որջերը : Եւ երկուքն էլ ապրում էին . . .

Անցաւ մարգարէն երջանիկների ափը եւ երգեց :

«Ելէ՛ք , նայեցէք երջանիկներ՛ր , ձեր արիւնոտ գաներից . թշուառութիւն , վիշտ ու տանջանքը հեղեղում են ձեր քրքրիլը : Տիեզերքը՝ խոցուած խամբա՛ծ , հառաչում է ու շաչում . նա հրաբո՛ւն , նա վիշա՛յ պ է . կը կլանէ ձեր կեանքը . սիրեցէ՛ք միմեանց . հաւատար էք , եղբայր էք . . .

Լսեց նորան ամբոխը , լկտի հոհաց մի մաւգունո՛տ յառաջ գալով , որպէս պետ . խորտա կանգնեց ու գոռաց :

— Հետո՛ւ, դու սո՛ւտ մարդարեւ, դո՛ւ ժանտ ախտ ես ու ժահր ես— չենք վախճանում մենք արհաւիրքի տարերքից. մենք ապրում ենք, երջանիկ ենք. գնա՛ հետեւ, մի խանդարիլ մեր քունը. գնա՛ սիրէ դու ուրուական — մարմինն չունիս — «ես» չունիս :

... Եւ արիւնից երկիւղ կրող սիրոյ ոգին, լեռան գլուխը բարձրացաւ ու փչեց փողը...
Բամբեց ամպրոպը, թնդաց երկիրը...
Եւ տարրերի հատաչն ու ճիչը տիրեց երկրին. եւ պահ մի եւս — եւ ամէն ինչ լո՛ւտ ու մոլո՛ր : Եւ մոլո՛ր էր, թանձր վի՛շտ էր տիեզերքը...

...

Երկիր աշխարհ նա թափառեց, որպէս սիրոյ ուրուական. աշխարհ երկիր սեւ սուգ էր հազել. սուգը սիրոյ — մեծ սիրոյ :

Տիեզերքի մտայլ ճակատը խոր խորշում ներն էին ցանցել. մի խորշամբ հազար վիշտ էր պարուրել :

Սիրոյ ոգին տեսաւ աշխարհ ուր բոնու թիւնն էր թաղաւորում՝ արիւն-թարախ ճաւհի վրայ :

Փնայց յառաջ :
Ա. յնտեղ «ե՛ս»-ի, անեզր «ե՛ս»-ի, անասնական «ե՛ս»-ի, տիրող «ես»-ի պարը նա տեսաւ :

Տեսաւ անդունդ՝ խոր գերեզման մեծ ու տիրող ազգերի. հին անդունդը այժմ երկիր էր, հողն էր. հողն անհուն էր ազգերի :

Փնայց յառաջ :
Ա. յնտեղ որտեղ սիրոյ ուժը ընկճուել, խեղդուել, ոսկի հորթի պաղ ու փայլուն դահի տակ՝ ա. յնտե՛ղ, որտեղ մտքի մարդիկ՝ թարախարիւն մի խառնած, սեւ վիշտ դարձած, թալուկ մաշուած վարձկան էին, երգիչ էին ոսկի հորթի խնջոյքում :

Մութ ու մտայլ ճահիճներում տեսաւ ոգին մի ամբողջ թալուկ, տրտւած, կեղծ հրճուանքով, ընկնում էին ոսկի հորթի ափսոս գրեղը :

Ապրիլ պէտք էր...
Տեսան անա ոսկի կուռքի շուրջը պատել է դոյն դոյն, անձայր մի ամբողջ. ոստում էին, ժպտում էին, դառն լալիս, ոսկի հորթը խըլտիտ, գոռոզ, զարհուրելի քրքջում էր եւ տարերքի սոսկալի ողբը՝ միացած, մեծ մտահերգն էր :

Իա էր կեանքի կատաղի մարտը :
Եւ տիեզերքը թարախով լի մեծ ճահիճ էր ու մեծ վէրք :

Լացեց ոգին :
Նա տանջվում էր անեզրութեան հսկայ վիշտով. լալիս էր նա բնութեան անհուն սգով :

Եւ ժպտաց նա :
Բարութիւնը չէր նրա մենտորը : Երա «ես»-ը հսկայ էր, ինչպէս հսկայ տիեզերքը :

Մեծ «ես»-ը տարաւ սիրոյ ոգուն անեզրութեան խոցերի շաւիղի միջից... Եւ բժշկուեց նա :

...

Մի պուտարիւն, մի պուտ արցունք, խոց ու վիշտ էր նրա խաչը. լուծեց նրան թշուառութեան անձայր ծովում... հեշտանք զգաց :

Ոգին ժպտաց ու ծիծաղեց որպէս մանուկ... Եւ նա ախրեղ ցանկացաւ :

Սիրոյ հրեշտակը՝ քնքուշ թեւով, վարդ շրթունքով, սէր բերեց. սիրոյ աստուածը տաբաւ նրան ամպերից բարձր եւ սիրեց :

... Եւ նա մեռաւ, տանջուած, յագնած — ժպտալով :

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

«Լսեցէ՛ք, ես կոյճակի փայլը եւ սեւ ամպերից թափող ծանր կաթիլն եմ, իսկ կոյճակը կոչվում է գեր-մարդ :»
Ֆր. Նիթշէ

Ա.

Դաժան, մտայլ, գոռ ամպերը որոնող ու գունդ գէպ ի վեր ու վեր էին տանում : Եչող, շաչող փոթորիկը, նեցուկ, թեւ էր տիեզերքի տեղդոտ ոգուն. եւ նա տոկուն ու աշխուժ սլանում էր... :

Հասաւ մի տեղ, որտեղ խիտ մշուշը կուտակուել, քարացել էր. ժպիտն երեսին, թալուկ ու խոնջ, մի մեծ շունչ առաւ եւ շուրջը նայեց :

Մեն-մենակ էր՝ անյայտ ու անպարագիծ տարածութեան մէջ :

Եւ մոայլելով, հայեացքը ցած թողեց :
Չկար ընկերը. նա ա. յնտեղ, հազիւ նշմարուող փոքր երկրի գիրկն էր :

Եւ այդ կածանը խաւար ու անվերջ երևցաւ որոնող ոգուն : Լսեց նա որպէս անդրերկրային խուլ որոտումներ, գերեզմանային ընդհատուող ձայներ. նրանք, մերթ ուժեղ ու գոհ, մերթ մեռելային յուսահատական, հնչուած, ցայտում էին անհունութեան անատեսիլ վիհում : Որոնող ոգին՝ միայնակ ու թոյլ՝ զարհուրեցաւ այս վիթխարի ոչնչութեան վրայ, խաւարի անեզրութեան մէջ... սկսվում էր լուծուել խառցած մշուշը, եւ ոգին զգաց որ խորտակվում է :

Յանկարծ նա լսեց, որպէս փոթորիկ հեռաւոր ալիք, իր ընկեր ոգու երջանիկ ու դառն երգն ու արտունջը : Որոնող ոգու սիրտը, հանգած ու մեռած, այժմ բորբոքվում, զուրս թռչելու գոռում էր, երկրի գիրկն ընկնելու զգալ վիշտ ու հրճուանք :

Շա՛տ էր բարձրացել...
Ու ձգտող ոգին, կարծես զեռ խուլ անուշտուր, լսում էր ընկեր ոգու հառաչ-հրճուանքի վերջին հնչիւնները :

Մեծ օձը խայթեց :
Բոց ու անապատ էր նորա սիրտը, սպապակած էր. եւ արտասուեց :

Բայց այդ ըստ էին կայծակից շանթուած մտայլ ամպերը սարսափելով փախան ու կաթնա գոյն մշուշի միջից , որպէս արեւի յուսատու նետ երեւեց շղարշային մի մանկական զէմք ու երգեց .

«Բարձրացի՛ր, դու մե՛ծ ոգի, բարձրն է գազաթը՝ նպատակը . տիեզերքը չէ՛ կարող քեզ շունչ տալ , քեզ կեանք տալ . սէրը քաղցր է . բայց սէր չկայ անծայր ու խաւար անհու նութեան ծովում . . .

«Իրտակցութի՛ւն, զիրտակցութի՛ւն . . .»
Ժպտաց ոգին . սեւ թեւերով սեւ ամպերը թափահարեց . թախիծը ամպերի հետ արձիճ շառաւ, ցած իջաւ .

Եւ հեռացաւ տոկուն ոգին ժանտ ամպերից .
Եւ սլացաւ երգ երգելով, մի երգ ուրախ, քըրքը ջուն :

Բ .

. . . Եւ ահա նրան աչքը շլացրեց մի մեծ լուսի սուր նետերը :

Մի գազաթ էր :
Տեսաւ ոգին մի խումբ մուսա՝ յոխորտ խըրոխտ , զուլալ զուարթ . տեսաւ նրանց՝ շողուն չքեղ պսակներով ու հագուստով պարում էին, երգում էին՝ երգն էր վճիտ ու անհոգ . երգում էին ու երգ ձօնում գեղեցկութեան աստուածներին . ցայտուն ժպիտը անհոգ , ուրախ, քնքուն թեւով հով էր անում, զով բերում Ապոլոնի քուրմերին :

Գեղեցկութեան մուսաների սիրտը խաւարն է սքողել, եւ որպէս խոցեր , որպէս որդունք, շրջում էին ոլոր մոլոր , անեզրութեան կըմախքները . նրանք տրտում , թախծալի , երգում էին . երգն էր թալուկ ու տրտում . դա մի քերթող , կեղծ նուագ էր, մայր բնութեան խոր երգում :

Եւ բարձունքների մեծ «ես-երը» լուսով սքողուած , չէին տեսնում ժանտ ու մտայլ տիեզերքի խոցերին, չէին լսում իրանց սրտի քերթող երգին :

Չուարթ երգը, շողուն լոյսը, գեղեցիկ էր :
Եւ կախարդեց որոնողին : Դարձրեց հայեացքը գազաթնակէտի խոց սրտից . տեսնւրտ , նետուեց մուսաների շողուն գիրկը . երգեց իբ երգը :

Անցան օրեր . ճանճրալի էր այդ օրերը :
Աննպատակ ու միայնակ , ինչպէս կոյր բու, թագաւորն՝ անեզրութեան տաճարի բեկուած մեռած բեկորներին . երգել , հնչել սգոտ մի երգ . մա՛հ գուշակել տիեզերքին . . . նա չէր ուզում սուգ տարածող բու գառնալ , օ՛, չէ՛ր կարող . կոյր չէր ոգին :

Եւ տխուր էր այդ մեծութիւնը . փոքրկու թի՛ւն այդ մեծութիւնը : Ոգին կ՛ուզէր բարձր եթերքից թագաւորել գիտակցութեան անեզրութեան , եւ ճանաչել գիտակցել . . .

Եւ կատաղած՝ թափահարեց իբ թեւերը , եւ սլացաւ այդ երջանիկ ու ապարազ մուսաների վերուից :

Գազաճ ու տեսնորտ , նա գնում էր արձակելու տիեզերքի քար հանգոյցը :

Տեսաւ ահա՛ լայն տարածութիւն : Ահագին խոժանր խումբ խումբ բաժնուած , անհամբեր , հետեւում էին երկու վիշապների կատաղի կռուին :

— Դրանք կաշկանդող երկու մեծ ուժեր, Բարին ու Չարն են :

Մօտեցաւ ոգին՝ յուսահատ կուռղ վիշապների շուրջը հաւաքուած խումբ խումբ ամբոխին :

— Ինչո՞ւ են կռուում :
— Չարն ու Բարին կուռում են իրանց բռննապետութեան մեծ գահին համար . այսօր է վախճանը :

— Ո՞րն է սրանցից բարութեան վիշապը :
Ամբոխը ցոյց տուեց սպիտակ վիշապին :
Մօտեցաւ ոգին միւս մեծ խմբին .

— Ո՞րն է սրանցից բարութեան վիշապը :
Ամբոխը ցոյց տուեց սեւ վիշապին :
Եւ ոգին լսեց ամբոխի երգը , եւ դառն ծիծաղեց :

Բարձրութեան վրայ՝ անտարբեր, կուր ելջին սպասում էին , խոժոռ ու մտայլ : նոր հաւատի նոր մարգարէներ : Մօտեցաւ նրանց որոնող ոգին :

— Իսկ ձե՞ր բարութիւնը :
— Մեր բարութի՛ւնը Ուժն է . երկու վիշապից որը որ յաղթեց , նա մեր աստուածներից միսն է :

Չարմացաւ ոգին . տեսաւ մի տաճար , որտեղ բազմած էին՝ անգութ ու ժահրոտ՝ երկրի մեծ շարութիւնները :

— Մենք պաշտում ենք այն ինչ որ մեծ է ու գեղեցիկ . իսկ գեղեցիկ ու մեծ է ինչ որ Ուժ է :

«Մենք ուժ ենք պաշտում, դա է սրբութիւն :
Ոգին չհերքեց . չէր կարող հերքել : Ուզեց ինքը գտնել աւելի մեծ ուժ , որ կարողանար բաժանել անհաշտ ախոյեաններին . . . չգտաւ . պէտք էր խոնարհել մեծ ուժերի առաջ :

Բայց նա չէր սիրում խոնարհուել . ազատութիւն էր սիրում ոգին :

Եւ հեռացաւ՝ դառնացած , հպարտ :

Գ .

Մորիկը խօլ ամպերի զէմ էր կանգնել : Հերի՛ք էր, որքան չարնախանձ ամպերը շղթայել էին գիտութեան սահմանը :

Կատղած մորիկը հազար թեւերով , ամպերի գնդերը ցան ու ցրիւ անում , չէր թողնում նրանց ուժերը հաւաքուած , կայծակով վարնել կործանել յանուգն հսկային , որին ինքը սիրով գրկել, տանում էր վե՛ր, գէպ ի խորհրդաւոր քար-հանգոյցը :

Աւաար ու ճնշիչ էր այն սահմանը , որից անցնում էր , փոթորկի թեւերու վրայ , գիտութեան ոգին :

Յանկարծ տեսաւ նա, խաւարի մէջ՝ պսպղացող աչքեր ու մեծ գլուխներ :

Հազարներ էին :

Նրանք տենդոտ փայլուն դէմքով կամենում էին գրաւել որոնող ուզուն, տալով նոր դաւանանքներ անեզրութեան էութեան մասին :

Լսեց նա նոցա, հասկացաւ բոլորը, ու չհասկացաւ : Բայց պատերազմ էր, սոսկալի կռիւ, հսկաների մէջ . . .

Եւ ընկնելով խորտակում էին տիեզերքի կեղեւի վրայ . նրանց ողորկ ու փայլուն փռչին կուտակում ու կուտակում էր :

Իսկ այդ ամէնը ձանձրալի ու ճնշիչ էին . եւ զրանք նպատակ չէին կարող լինիլ :

Յուսահատ, անորոշ, դանդաղ, նա բարձրանում էր . . . է՛լ ո՛ւր բարձրանար . . .

Սիրուէթների տենդոտ հրաւերները նուազում էին, եւ շատ թոյլ, թալուկ էր նրանց աղմուկը այդ խորհրդաւոր խաւարի մէջ :

Տարերքի կռիւը դադարեց . միայն լուսթիւնն ու խաւարն էին հասել այդ բարձրութեանը :

Եւ չէր երեւում ոչ մի լոյս ու յոյս : Մենմենակ էր նա անհունութեան մէջ : Պարիսպ չկար : Գո՛հ չէր ոգին : Ուժ չէր ոգին . . .

«Այս է անա կատարը, դո՛ւ ես նպատակը, հասկելու, գո՛հ եղիր», լսեց մի հեռաւոր շշուէն :

Մի բոպէ ինքնիրան մոռացաւ ոգին եւ արձակած կարծեց քար հանգոյցը . . .

Բայց չէ՞ որ գո՛հ չէր . . . կասկածեց :

—Սա նպատակս չէ՛, ես չե՛մ կատարը», գոչեց նա յուսահատ կատաղութեամբ : Թէեւ շուրջո խաւար, ու ես չեմ տեսնում . բայց զգում եմ որ կան շատ ճանապարհներ գնալու տեղ կայ :


«Ասա՛ ինձ, ո՛վ անյայտ ու ցուրտ Ոգի, ո՛ւր է տանում այս խաւար ու ցուրտ ուղին . . .

Լուսթիւնը միայն եզաւ պատասխանը . եւ արաստուեց նա, եւ արտասուքը թոյն ու բոց էր :

* *

Ոգին բռնեց իր վերջին նեցուկը . նա կամենում էր իջնել երկրի գիրկը . յետնայից, եւ ի՛նչ տեսնէր . . . Բարձրացած բոլոր սարածութիւնը այժմ սեղմել էր շար մէջը . . . Ճշաց ուղին, կորցրեց իր նեցուկը եւ գահավիժեւեց սոսկալի բարձրութիւնից . . . Բայց ոչ դէպ ի երկիր, այլ դէպ ի մի խուլ, խաւար, խորովկէտանի ծոցը՝ Մեռաւ նա, — տիեզերքը անխճելով :

Թիֆլիս ՎԱՀԱՆ ՍՈՒՐԻԵՆՍԻՑ



«ՄԱՆՈՒԿԼԵԱՆ-ՇԱՀԻՆ» ԵՐԵՎԱՆԻ

— 0 —

Ի պատիւ Մանուէլեանի եւ Շահինի կազմակերպութեամբ երեկոյթը տեղի ունեցաւ յունիս 19ի իրիկունը, քաֆէ վոլթէռի մէջ : Տասնութը հոգի մասնակցեցան ճաշկերոյթին, որոնց մէջ կային Հայութեան ամէն դասակարգները ներկայացնող անձնաւորութիւններ, թրքահայ գրագէտներէն՝ Պ. Պ. Լեւոն Բաշալեան եւ Երուանդ Օտեան, ուսանայ մտաւորականութենէն՝ Պ. Պ. Մելիք-Կարապէտեան, Ռ. Բէրբէրեան եւ Տր. Զալեան, Հայաստանէն՝ բնիկ Մոկացի մը, մեր «Լօշտակ» աշխատակիցը, Բարիզի հայ գաղթականութեան ծանօթ գէմքերէն՝ Պ. Պ. Տր. Քօլօլեան, Մ. Միւրդատեանց, ու մէկ քանի ուսանողներ :

Պ. Յ. Իսքէնտէր, նախագահ Բարիզի Հայոց Հայրենասիրական Միութեան, հիւանդութենէ մը արգիլուելով՝ չէր կրցած ներկայ գտնուիլ ճաշկերոյթին, եւ իր շնորհաւորութիւնները զրկած էր սիրուն նամակով մը :

Պ. Յովհաննէս Շահնազար, մեր ողբացեալ ու անմոռանալի «Հայրենիք»ին տնօրէնը, Մանուէլութիւնը զրկած էր թեւադրական ու ազնուուրի նամակ մը որուն ընթերցումը բուն ծափերով ընդունուեցաւ եւ զորամբողջութեամբ կը հրատարակենք ստորեւ :

Շնորհաւորական նամակներ զրկած էին նումանապէս, Բարիզէն՝ Պ. Պ. Գէորդ Բաշինջաղեանց, Վ. Մեսրոպեան, Արամ Թահթաճեան, Պ. եւ Ս. Քերեւթեճեան, Վ. Պէքեարեան, եւն, Լիէժէն՝ Պ. Յ. Գառնակերեան, Պրիսէլէն՝ Պ. Մ. Թէլեան, Բատուայէն՝ չորս ուսանողներ :

Մանուէլութի հայ գաղթականութիւնը շնորհաւորական հեռագիր մը զրկած էր Մանուէլեանին եւ Շահինին . նամանապէս Վառնայէն՝ Պ. Յ. Փափագեան, եւ «Շաւիղ»ի խմբագրութիւնը :

Երեկոյթը որ սկսաւ ժամը 7ին եւ մինչեւ կէս գիշերէն յետոյ ժամը 2 տեւեց, անցաւ անընդհատական ու ամենաջերմ ոգեւորութեան մը մէջ որ կը բզկէր բոլոր ներկաները համակող եղբայրական համերաշխութեան մը ու ազնիւ ուրախութեան մը տիրապետումէն :

Ազանդերի պահուն, մէկ քանի բաժակաճառեր արտասանուեցան : «Անախտ»ի տնօրէնը, որ կը նախագահէր երեկոյթին, բացատրեց Մանուէլեանի եւ Շահինի կատարած գործին նշանակութիւնը, նախ իր ներքին մտաւորական զուտ արժանիքին տեսակէտով, յետոյ՝ այն փայլին տեսակէտով զոր այդ գործը կը բերէ հայ ցեղին բարոյական վարկին :

Պ. Լեւոն Բաշալեան ողջունեց, սրամիտ ու պատկերալից «սրբիչ»ով մը, երկու նորածագ հայ տաղանդները որոնց համահանդէս տօնաւորումը այդ երեկոյթը կը փոխէր Գիտութեան ու Գեղարուեստի հարսնիքի մը:

Տր. Զալեան, մէկ քանի հայրական ու ազնիւ բառերով, իր ուրախութիւնը յայտնեց ի տես հայ տաղանդի այս գեղեցիկ բողբոջումներուն, եւ իր յոյսը՝ թէ Մանուէլեան ու Շահին, այսպիսի վաղահաս յաջողութիւններէն չչլանալով ու իրենց մատուցուած մեծաբանքներէն չչփանալով, պիտի շարունակէին՝ հետզհետէ աւելի կորովով՝ իրենց ձեռքերը դէպ ի աւելի բարձրը ձգտեցնել:

Պ. Մելիք-Կարապէտեան զգացուց այն պարտքը զոր մեր ազգին արդի ողբալի վիճակին մէջ մեր ամէն կարգի տաղանդները ունին իրենց մտաւոր ուժին ետական զարգացմամբը չգօհանալու, այլ ամէն վայրկեան իրենց դժբաղդ ու ատով աւելի եւս սիրելի ցեղը յիշելու եւ անոր օգտակար ըլլալն իրենց գլխաւոր նպատակակէտը նկատելու:


«Լօշտակ» խօսեցաւ յանուն Հայ Հողին. ըսաւ թէ իր ցաւերուն ու չարչարանքներուն մէջէն, Մայր Հայրենիքը խորին փոփանք մը եւ գորովագին ու բախտութիւն մը կը զգայ՝ տեսնելով իր զաւակները որ քաղաքակիրթ ու ազատ երկիրներու մէջ իրենց տաղանդին ապացոյցները տալով իրեն պարծանք կը հանդիսանան. «այլտութեան ու թշուառութեան մէջ բռնի շղթայուած, ան չի հասկնար, ըսաւ, իր հեռաւոր ու դարգացած զաւակներուն ըրածը, բայց անոնց յաջողութեան լուրը, անոնց վաստակած համբաւին արծազանքը իր կաթողին ու պարզուկ սիրտը լոկի միամիտ բայց շատ հզօր հրճուանքով մը կը լեցընեն»: Ու «Լօշտակ» մաղթեց որ շուշանայ այն օրը ուր Մայրը իր վերջապէս կապանքէ զերծ թեւերուն մէջ իսկ իր զաւակներուն բողբոջիւ պիտի տեսնէ:

Մանուէլեան ու Շահին մէկ քանի յուզեալ բառերով իրենց շնորհակալութիւնը յայտնեցին իրենց ազգակիցներուն կողմէ իրենց մատուցուած այս համակրական մեծարանքին համար:

Ճաշէն յետոյ, արտասանութիւններ, երգեր ու պարեր տեղի ունեցան որոնց մէջ նորէն ամենէն սիրուն տեղը բռնեցին «հայկական պարերը» զոր «Լօշտակ» պարեց՝ ուրիշ Հայաստանցիի մը ընկերակցութեամբ:


Բոլոր մասնակցողները այն միխիթարար համոզումովը իրարմէ բաժնուեցան թէ, հակառակ այն բոլոր գանգատներուն զոր ունինք՝ եւ իրաւամբ՝ մեր բարքերուն մէջ մտած ու հաստատուած կարգ մը սղեղ եւ ցած տարրե-

րու նկատմամբ, Հայերը վայելչօրէն եւ առանց ո եւ է արկածի կարող են, երբ համասեռ ու ներդաշնակ խմբաւորումով մը հաւաքուին գեղեցիկ ու յստակօրէն դժուած գաղափարի մը շուրջը, ամենէն աննախանձ, ամենէն եղբայրական, ամենէն վեհօրի զգացումներու իրենց մէջ գոյութեան ապացոյցը տալ:



Ն Ա Մ Ա Կ

ՌԻՂՂՈՒՍԾ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ-ՇԱՀԻՆ ԵՐԵՎԱՆԻ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Ն




Կ'ուզէի ձեր քովը ըլլալ, ամենուզ հետ, շարաթ գիշերուան սեղանին շուրջը, Մանուէլեանին եւ Շահինին արեւուն բաժակ մը խրմելու համար: Որքան ալ որ ձեզմէ հեռու ըլլամ, արտով ձեզի հետ եմ սակայն, եւ ամէն կերպով յարմարագէպ կը գտնեմ գաղափարը որ ծնաւ Բարիղի հայ երիտասարդութեան մէջ համակրութեան գոնէ պզտիկ տօն մը կազմելու գիտնականին ու արուեստագէտին յաջողութեանցատթիւ: Անշուշտ բան մը աւելի չպիտի աւելցնենք իրենց փառքին վրայ, բայց այս համեստ հանդէսով պիտի զօրացնենք անգամ մը եւս իրենց հաւատքը թէ սիրուած են եւ միշտ պիտի սիրուին անկեղծօրէն: Չեմ ապահովցընիք զիրենք թէ համբաւուն այս նուիրագործումէն յետոյ ձեռքէ ձեռք պիտի յափշտակուին մեր հայ ընտանիքներուն մէջ, ինչպէս կ'ըլլան Փրանսայի օրուան մարդիկը, Բարիղի սալուններուն մէջ: Եթէ Պօլիս ըլլայի «Հայրենիք»ով պիտի ունենային իւրաքանչիւրը իրեն յատուկ տաք, խանդավառ, գովասանական «Օրբօրին»ը: Ահա բոլոր այն աղմուկը ու շոնոգը որ պիտի լսուէր եւ որ տեսական արեւոյթութեամբ մը գինովցնող բան մը չպիտի ըլլար: Թերեւս ալ, ազջիկ ունեցող մէկ քանի ընտանիքեր պիտի փութային գիրենք սուներնին հրաւիրել, եւ անոնք ալ, հոն երթալուն, պիտի գտնէին պատկառելի աղա մը թղթի սեղանի մը առջին ոչ նուազ ծանրութեամբ նստած քան իր ոչ պակաս պատկառելի «մատամը» թղթախաղի ուրիշ սեղանի մը շուրջը: Այս այն միջավայրը չէ, ուր մեր բարեկամները պիտի զգային գիտնական ու արուեստագէտ մը ըլլալու բոլոր առաւելութիւնները:

Բայց հոս, Եւրոպա, Հայերը կարծեմ թէ փոխուած են գոնէ վերջերս: Ես հաւատացած եմ որ տարբերութիւն մը կայ. եւ այս հանգէսը ազօր ապացոյցներէն մէկն է: Անոր կը մասնակցին ոչ միայն անձնական բարեկամներ, ոչ միայն անոնք որ մեծարանքի տուրք մը վը-

ճարել կ'ուզեն գիտութեան եւ զեզարուեստին, այլ այդ պաշտուածն աւելի բան մը ունեցողներ — ցեղակիցներ, ազգակիցներ — որոնք հայ ճըշմարիտ տաղանդներու կարօտն ունին օտար երկինքներուն տակ ուր սկսանք թափառել եւ չենք գիտեր զեռ որքան պիտի թափառինք : Օրէ օր կը ստուարանայ այն անձերուն թիւը, որոնք կը զգան թէ ազգային գրագէտ մը գիտնական մը, արուեստագէտ մը կը կազմէ ճշմարիտ սոց մը, իշխանութիւն մը, զրամագլուխ մը — որ միւս գրամագլուխէն վար չի մնար — եւ այս ի նպատակ նոյն իսկ այն ազգին որ քիչ անգամ գիտէ գնահատել այդպիսի աննիւթական զօրութիւններ : Ո՞ր ազգին կեանքին մէջ եկած չեն բողոքներ ուր գրագէտ մը, գիտնական մը, արուեստագէտ մը անոր օգտին աւելի բան կրցած է ընել, քան միլիոնատէր մը, քան պետական մարդ մը : Ինչ ալ ըսեն նիւթապաշտները, գաղափարն է, զգացումն է որ կը վարէ այս աշխարհս . եւ մեր վերջին արհաւիրքի տարիներուն մէջ, եթէ մեզ երկնուստ վիճակուած ըլլար Եւրոպա ունենալ այդ կարգի Հայերու համաստեղութիւն մը, ապահով ըլլանք որ անոնք պիտի կարենային ընդհանուր մարդկութիւնը յուզել, ի գութ շարժել մեր ազգային աղէտներուն վրայ աւելի արգիւնաւորութեամբ քան որ եւ է պետական մարդ մը իր բոլոր հանձնարողը : Ահա այս գաղափարն է որ յաճարակամաբ կ'ողջունեմ Մանուէլեանի եւ Շահինի վրայ եւ որ կուզայ շատ բնականօրէն միանալ անձնական բարեկամներու ուղղուած խորին խնդակցութեան մը հետ լաւաւ զոյն ազգային ապագայի մը զեղած իծաղ յոյսերուն մէջ :

Մանչէսթըր 3 . ՆԱՀՆԱԶԱՐ
16 յունիս 1900



ՎՈՏՎԻԼԻ ՅԵՐԵԿՈՅԹԸ

— 0 . 0 —

Յունիս 16ի շաբաթ օրը Վոսվիլ թատրոնին մէջ տեղի ունեցաւ Յերեկոյթը զոր «Անահիտ»ի անօրէնը կազմակերպած էր ի նպատակ Հայաստանի որբերուն, «Մարդկային եւ քաղաքացիական իրաւունքներու պաշտպան Ֆրանսական նիւթակազութեան» հովանաւորութեամբ :

Կազմակերպողին նպատակն էր ոչ միայն մեր որբերուն նիւթական օգնութիւն մը հայթայթել այս ձեռնարկով, այլ եւ այս հանդիսաւոր առիթով՝ Ֆրանսայի գեղարուեստական եւ գրական շրջաններուն մէջ հայ ժողովրդին համար համակրութիւններ արթնցնել : Այս նպատակը, իր երկրորդ մա-

սին մէջ մանաւանդ, յաջողութեամբ իրականացաւ : Բարիղեան պուլվաւին ամենէն փայլուն թատրոնը ճիւղաբար արամազրութեանը ներքեւ գրուեցաւ այդ ձեռնարկին . Ֆրանսայի ամենէն մեծ գրագէտը հաճեցաւ բանախօսութիւն մը արտասանել այդ ցերեկոյթին, եւ Բարիղի գլխաւոր թատրոններուն ամենէն հռչակաւոր արուեստագէտները, սիրալոյսաբար պատասխանելով Չօպանեանի հրաւերին իրենց տաղանդը շնորհեցին ի նպատակ Հայ որբերուն :

Յունիս 14ի չորեքշաբթի օրուան «Ֆիկառօ»ին մէջ հրատարակուած սրտաշարժ յօդուածով մը (*) Անաթոլ Ֆրանս կը ծանուցանէր այդ ցերեկոյթը, եւ Ֆրանսայի ժողովրդին հրաւեր կը կարգար օգնութեան հասնել զարհուրելի ոգեւարի մը մէջ զալարուող ժողովրդի մը ամենէն դժբաղդ ու ամենէն յուզիչ անդամներուն : Եւ նոյն յօդուածն էր որ մէկ քանի յաւելումներով, եւ բանախօսութեան ձեւի վերածուած, Անաթոլ Ֆրանս կարգաց ցերեկոյթին սկիզբը : Յօդուածը մեծ ապաւորութիւն յառաջ բերաւ ո՛չ միայն Ֆրանսայի, այլ եւ ամբողջ Եւրոպայի մէջ . եւրոպական շատ մը թերթեր անկից մասեր արտասպեցին, ու Պիլճիքայի ու Հոլանտայի մէկ քանի լրագրիներ անոր ամբողջական թարգմանութիւնը հրատարակեցին : Իսկ բանախօսութիւնը ամենախորին յուզումնք մը յառաջ բերաւ ցերեկոյթին ունկնդիրներուն մէջ . «Պ . Անաթոլ Ֆրանս, կը գրէ Պ . Շարլ Մարթել «Օնօն»ին մէջ, հոյակապ յայտագրին բացումը կատարեց բանախօսութեամբ մը ուր յատկանշական միջադէպի մը միջոցով հայկական ջարդերուն սկզբնական գաղափարը բացատրելէ յետոյ, ցոյց տուաւ թէ թուրք կառավարութիւնը միակ պատասխանատուն էր կառավարական Ֆրանսային մեղսակցութեամբը : Ժողովուրդներուն ոչինչ կարելի է մեղադրել, եւ յանցանքը մեր ժողովրդինը չէ եթէ զինքը պարտազանց կացուցին հանդէպ իր աւանդութեանց եւ իր պարտականութեանց . յետոյ, ստուգաբանական նօթերու, — վկայութիւններ կամ նամակներ — պարզ ընթերցումովը բանախօսը նրկարագրեց շարժարանքներն եւ սպանութիւնները : Այս հակիրճ հաստատումներուն տրպաւորութիւնը այնքան բուռն եղաւ որ Անաթոլ Ֆրանս ներողութիւն խնդրեց բարիղեան հաճոյսովայրի մը մէջ այդպիսի արհաւիրքներ երեւան դնելուն : Բայց ոչ բերուն համար գութ խնդրելէ առաջ, պէտք էր ըսել թէ մայրերը ի նչպէս մեռան Վերջապէս այդ որբերը ներկայացուց, եւ անոնց մասին իր հաւաքած տեղեկութեանց համեմատ զանոնք մեզի ցուցուց արթնամիտ արիւթեամբ, վաղահասօրէն ուշիմ, ամեն կերպով արժանի մեր կարեկցութեանը եւ մեր համակրութեանը : Այս բանախօսութիւնը, խմբագրուած Անաթոլ Ֆրանսի

(*) Այդ յօդուածին թարգմանութիւնը կը հրատարակենք «Անահիտ»ի այս թուով :

զմայլելի ոճովը, ուր այս անգամ գերագոյն հեղինակութիւնը տեղի կուտար Թիբրասիոսի յուզմունքին, երկարասեւ ծափահարութիւններով ողջունուեցաւ(*)»

Յայտագիրը անսովոր ճոխութիւնմը կը ներկայացնէր. մեծ մասամբ հրաշակերտներէ կազմուած, գործադրուեցաւ առաջնակարգ արուեստագէտներու ձեռքով: «Այս ցերեկոյթը կը գրէ Պ. Մառթէլ, ոչ միայն գթութեան ձեռնարկ մը, այլ եւ ամենամուրբ գեղարուեստական գործ մը եղաւ»: Ֆրանսայի չորս պագային թատրոնները իրենց լաւագոյն արուեստագէտներով ներկայացուած էին. Օբերան տուած էր Նոթէն ու օրիորդ Ֆրանսու, Օբերան-Քոմիքը Պէյլը, Օր. Տառմիէրը եւ Օր. Ժեովիլի Ռէպըլը: Թէպէտ-Ֆրանսէն՝ Մուսէ-Մուլլին, Բոլ Մուսէն, Սիլվէնը, Ալպէս Լամպէս որդին, տիկին Սըկոն-Վէպէնը եւ Օր. Մոռենոն, Օտէնը՝ Օր. Բոռա Լաբարսըրին եւ Ռամօն: Չօպանեան խնդրած էր Մուսէ Սիւլլիէն որ այս հայկական ցերեկոյթին հաճէր խաղալ «հայ» դեր մը, միակ հայ դերը զոր ֆրանսական թատրոնը կը պարունակէ, Բորնէյլի «Պոլիկոս»ին դերը, որ մեծ ողբերգութիւն ամենէն վսեմ ստեղծագործութիւններէն ալ մէկն է, եւ առաջարկած էր որ չորրորդ արարը ներկայացնէ, ուր կը գտնուի նշանաւոր մենախօսութիւնը՝ Դեկիոս բռնաւորին դէմ ուղղուած զայրագին բացագանչութիւններով, եւ ուր Պոլիկոս իր կորովի հուզիւն ծայրագոյն արութիւնը կ'ապացուցանէ՝ դիմադրելով նոյն իսկ իր սիրած կնոջը հրապոյրներուն ու աղաչանքին: Մուսէ-Սիւլլի եւ տիկին Սըկոն-Վէպէն շքեղօրէն ներկայացուցին այդ տեսարանը՝ եւ սարսուռ մը անցաւ հանդիսականներուն վրայէն՝ երբ Մուսէ-Սիւլլի գոռաց՝

«Վա՛ դը արեւնուշտ, անագորո՛յն Կեկիոս, — Շատ տտենէ ի վեր է որ Աստուած իրենները քու ձեռքը լքեր է. — Հիմա տե՛ս քու բարեբախտ ճակատագրիդ հաւաւոր վախճանը. — Սկիւթացին պիտի լուծէ Պարսկին ու քերիստոնեաներուն վրէժը. — Շատ շանցած քու ժամը պիտի հնչէ. — Ոչինչ կրնայ քեզ ատկից զերժանել. — Եւ շանթը որ պիտի վրագ իշխայ, — Ամպը պատուելու պատրաստ, — Այլ եւս չէ կրնար կանգ առնել — Զոքումի մը սպասումէն:»

Բոլ Մուսէ, Սիլվէնը եւ Օր. Մոռենոն, բանաստեղծութիւններ արտասանեցին: Օր. Լաբարսըրի, Օր. Ժեովիլի-Ռէպըլ, Օր. Տարմիէր եւ Պ. Պէյլ, անակնկալ արգելքներով բռնուած, անկարող եզան ցերեկոյթին ներկայ գտնուելու:

Տիկին Ռեթան, որ վստահաբար առաջին դերասանուհին է Ֆրանսայի, եւ որ այնքան ազնուօրէն իր թատրոնին մէջ հիւրընկալեց այս ձեռնարկը, իր «բերբրթուարին գոհարներէն մէկը ընտրած էր, Լօլօթ»ը, Մէնաքի նուրբ մէկ ֆանթեզիին, զոր խաղաց իր սրամիտ շնորհի անբաղդատելի արուեստովը:

(*) «Թան» լրագիրը եւ «Իլլիւ Պէլէօ» շարածաթերթը հրատարակեցին այդ բանախօսութիւնը:

Գորչէն մենախօսութիւն մը արտասանեց: Տիկին Լիթվին, ուստի մեծանուն երգչուհին, «Լիզօլթի մահ»ը երգեց՝ Պ. Նիարիոֆենի ընկերակցութեամբ դաշնակի վրայ: Եւ Անթուան, ֆրանսական արգի թատրոնին մեծ վերանորոգիչը, ներկայացուց, տիկին Սիւզան Տերպէի, Օր. էլէն Անտրէի եւ Օր. Ռընէ Մորէնի հետ, Ժիւլ Ռընարի «Բուալ տը Բարօթ»ը, յուզմունքի, դիտողութեան, ոճի գլուխ-գործոց մը:

Չօպանեան ուզած էր այդ յայտագրին մէջ պնել «հայկական մաս մը», Հայոց բանաստեղծութեան եւ երաժշտութեան վրայ գաղափար մը տալու համար Ֆրանսացուց: Ռամօնի խնդրած էր Արովեանի «Երեւանի բերդ»ը կարգաւ, տը Մաքսէն՝ Պէշիկթաշլեանի «Կոյսին քնարը», տիկին Սըկոն-Վէպէրէն՝ իր «Օբօր»ը, իսկ Պ. Վ. Սվաճեանը հրաւիրած էր իր կտորներէն երեք հատ նուագել: Ռամօն, հիւանդ, չկրցաւ կարգալ իր հատուածը. Սվաճեան, տը Մաքս, տիկին Սըկոն-Վէպէն մեծ յաջողութեամբ կատարեցին իրենց դերը, մանաւանդ տիկին Սըկոն Վէպէն որ «Օբօր»ը արտասանեց, սեւեր հագած, եւ անհուն սրտագին յուզումով մը:

Ցերեկոյթը վերջացաւ Չօպանեանի մէկ բանախօսութեամբ որ նիւթ ունէր «Հայ ցեղին դերը Պատմութեան մէջ»(*):

Ահա ինչ որ կը գրէ «Լա Ֆրոնտ»ի մէջ Օր. Ռընէ Ռամպօ «հայկական մաս»ին եւ Չօպանեանի բանախօսութեան համար.

«Այս մարդասիրական ձեռնարկը միանգամայն յայտնութիւն մը եղաւ հայ հանճարին: Թրքական լուծին տակ կքած ազգին բանաստեղծներն ու երաժիշտները, արուեստի եւ դաշնակութեան խորին զգացումով մը, մեզի արտայայտեցին իրենց հայրենիքին տառապանքներն ու անձկութիւնները եւ անչէջ սէրը զոր անոր համար կը տածեն: Շահեկան բանախօսութեամբ մը, Պ. Չօպանեան հասոտտեց այն սպաւորութիւնը զոր ունեցած էինք արդէն: Խօսեցաւ այն մեծ արուեստագէտներուն վրայ որ Հայաստանի պարճանքը կը կազմեն, ու ներթոյն իր ազգին կենսունակ ուժն ու կորովը:»

Ու Պ. Շարլ Մառթէլ կը գրէ «Օնօն»ին մէջ՝ «... Հանդէսը «հայկական մաս մը» կը պարունակէր: Պ. տը Մաքս խորազգացօրէն արտասանեց Պէշիկթաշլեանի «Կոյսին քնարը», Ազգային Մուսային ողբն ու յոյսը. տիկին Սըկոն-Վէպէն հայրենասիրական բոցով լուսավոսեց Պ. Չօպանեանի «Օբօր»ը, ուր զգացմանց ու բացատրութեանց ամբողջ ծաղկեփթթումի մը մէջ՝ ներկային աւերակներէն կոչ մը կ'արձակուի փառաոր ապագաներուն: Պ. Սվաճեան դաշնակի վրայ ածեց իր հեղինակութիւններէն երեք կտոր, փափուկ «Ճայգանուագ» մը, շնորհալի ինքնատպուութեամբ «Տկճոր» մը (musette) եւ

(*) Այս բանախօսութեան թարգմանութիւնը պիտի հրատարակենք «Անահիտ»ի յաջորդ թուով:

«Արտաւազը թագաւորին որսորդութիւնը» ուր երաժիշտը իր գործիքէն ապշեցուցիչ նուագախումբական ճութութիւններ հանեց :

«Պ. Չօպանեան, այս Յերեկոյթին կազմակերպիչը, զայն փակեց բանախօսութեամբ մը ուր, անթերի բացատրութիւններով, շնորհակալութիւն յայտնեց արուեստագէտներուն ու հասարակութեան : Յետոյ, — եւ յառաջ եկած յուզմունքը շատ մեծ եղաւ, — իր ազգին վերէժը լուծեց այն զրպարտութիւններէն զոր անոր ազէտքներուն վրայ թափեր էին, եւ ցուցնելու համար թէ՛ հակառակ քաղաքագէտներուն, ան արժանի էր իր բարեկամին՝ Ֆրանսային, անոր փառաւոր պատմութիւնը համառօտաբար գծեց : Իր պերճախօս ատենաբանութիւն աւարտելով, Պ. Չօպանեան բացատրեց թէ Պետութեանց շնորհուած երկաթուղիի արտօնութիւնները փրկանքի գինն էին զոր թուրքիա կը վճարէր Եւրոպային՝ ազատ համարձակ Հայերը ջարդել կրցած ըլլալուն փոխարէն : Բանախօսն իր ձառը վերջացուց բառով մը՝ «Արդարութիւն» : Եւ օրուան բառն էր ատիկա : »

Թէպէտ այս Յերեկոյթը հովանաւորուած էր Տրէյֆիւսեան խնդրոյն մէջ մեծ դեր մը կատարած «Նիզակակցութենէ» մը, բայց հակառէյֆիւսեանները ատկէջ երբեք չեն թաղրեցին որ ասով հայկական խնդիրը Տրէյֆիւսեան խնդրոյն կապուած ըլլար : ամէն ոք հասկցաւ թէ շատ ընական էր որ հայ գործիչ մը, որ ֆըրանսայի ամէն զատակարարի ամէն կուսակցութեան ներկայացուցիչներուն արդէն զիմած է իր ազգային դատին համար, այս անգամ ալ զիմէ Նիզակակցութեան մը որուն ծրագրին գլխաւոր կէտերէն մէկն է կեղեքուած ժողովուրդներուն փրկութեանը օգնել, եւ որուն արդէն զիմած էին Ֆինլանտացիներն ալ : «Ժուռնալ»ը, «Էքօ տը Բարի»ն, «Տէպան», որ հակաարէյֆիւսեան թերթեր են, Յերեկոյթին ազգաբարութիւնը հրատարակեցին : Հ. Շարմըթեան, որ հակաարէյֆիւսեան մըն է, մեծ հաճութեամբ տողբումաններ զրկեց, Չօպանեանի խնդրանքով, Անաթոլ Ֆրանսին, իր բանախօսութեանը պատրաստութեան համար : Եւ իր յառաջիկայ «Պիւլլըթէն»ին, ինչպէս եւ «Քրիստոնեայ Արեւելքի Հանդէս»ին մէջ պիտի արտատպէ «Ֆիկարո»ի յօդուածը, որուն մէջ՝ Անաթոլ Ֆրանս գրուած է Հ. Շարմըթեանի հայասիրական գործը :


Կը կարծենք թէ այս Յերեկոյթը բարոյական կարեւոր օգուտ մը բերաւ մեր դատին : Նիւթական հասոյթը համեստ եղաւ, եղանակին անյարմարութեանը պատճառով : Բայց այս առաջին փորձ մըն էր լոկ . Յերեկոյթէն անմիջապէս յետոյ որոշուեցաւ յառաջիկայ ձմեռ կազմակերպել աւելի մեծ ու շքեղ ներկայացում մը ի նպաստ հայ որբերուն՝ ամէն կուսակցութեանց պատկանող բարձր դասու Չըրանսուհիներու հովանաւորութեամբ, ներկայացում որուն յայտարարը պիտի պատրաստէ չարձեալ «Անահիտ»ի սնօրէնը :

Յերեկոյթին ներկայ եղողներուն մէջ կային շատ մը ֆրանսացի հանրածանօթ անձնաւորութիւններ . յիշենք, ի միջի այլոց, Թիկին Սեվոն, Լիւտովիք Հալէվի, Հանրի Պօէր, Ռէնաք, Թրարիէօ, Չիբրիանի, Պ. եւ Թիկին Ռիշէ, Պ. եւ Թիկին Տրոանպուռ, Թիկին Շելիկա-Լեվի, Պ. եւ Թիկին Ս. Տելլան, Անաթոլ լը Պրաշ, Տրեքլօ, Պ. եւ Թիկին Վիքթոր Պետառ, Պ. Ժան Բսիքառի, եւն, եւն, ու մէկ քանի պաշտօնեաներ՝ նախարարութիւններէն :

Յերեկոյթին հասոյթը եղաւ 3251 ֆր. 70 ս., որմէ 1180 ֆ50ս. ը ծախքերուն յատկացուելով, կը մնայ 2071 ֆր. 20 ս. :

«Ֆիկարո»ի յօդուածին ու Յերեկոյթին արպաւորութեան տակ, Անաթոլ Ֆրանսին, «Լիկ տէ տրուա տը լ'օմ»ին եւ Չօպանեանին բաւական թուով անձեր նուիրատուութիւններ զրկեցին, որոնցամտողին գումարը մինչեւ յունիսի վերջը կը բարձրանայ 2312 ֆր. 55ս. ի, ուրեմն ընդամենը գոյացած է 4383.75 ի գումար մը որուն վրայ դեռ աւելնայ թերեւս նորանոր նուիրատուութիւններով կազմուած փոքր գումար մըն ալ :

«Լիկ տէ տրուա տը լ'օմը», որ ստանձնեց Յերեկոյթին հաշիւներուն քննութիւնը եւ որուն ջով հաւաքուած են բոլոր դրամները, քիչ ատենէն պիտի զրկէ այդ գումարը Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանին՝ որբանոցներուն հասցուելու համար :



ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

— 00 —

Տօթոր Տիւն, հայկական ջարդերէն քիչ ատեն ետքը կը զրուսմ գանուելով, իմացաւ թէ Մոսթիկօ անուն ֆիւրտ մը, որ իր բաժնին բաւական մեծ թուով քրիստոնեաներ մեռուցած էր, կախուելու դատապարտուեր էր : Հետաքրքիր ըլլալով տեսնել մարդ մը որուն այս քան արտասովոր արկած մը կը պատահէր, «պախիշի»ը վճարեց ու մտաւ բանտը ուր փակուած էր Մոսթիկօ : Քիւրտին գոռողութիւնը աննկուն մնացած էր : Տօթորին պատմեց այն սպանութիւնները որոնցմով ինքզինքը սրբագործած ու միանգամայն քիչ մը հարստութիւն զիգած էր :

— Տուները թալլեցինք, բաւա, եւ զրամը, գորգերը, արջառն ու կիները աւինք տարինք : Ճամբորդներ ալ կողոպտեցինք :

Եւ իր սրտին մէջ ինքզինքը փառաւորեց :

— Մեր շահատակութիւնները մեծ ու յանդուգն եղան, ու մարդոց բերանը անոնց պատմութիւնովը լիցուեցաւ : Անանկ գործեր ըրինք

որ տասերկու պետութիւնները պիտի զարմանան, եթէ ականջնին հասնի :

Կը բաղձար որ իր փառքը, որ խալմաներուն մէջ հաստատուած էր, սարածուէր նաեւ անհաւաններուն մէջ : Իր երեւակայութիւնը կը կրկնապատկէր մեծ պետութիւններուն թիւը : Եւրոպան, ըստ իրեն, բաւական ականջ չունէր լսելու իր սիրագործութիւններուն պատմութիւնը :

— Գիւղերու վրայ յարձակեցանք, շարունակեց, եւ մարդիկ մեռուցինք, որովհետեւ եթէ մենք չմեռցնէինք անոնք մեզ պիտի մեռցնէին : Ահաւասիկ նրբամիտ խօսք մը հերոսի : Մոսթիկօ ըսել կ'ուզէ թէ ով որ կը հարուածէ՝ հարուածուելու կ'ենթարկուի եւ անով արդար ինքնապաշտպանութեան վիճակի մէջ կը գտնուի : Այս մտքով էր որ Բ. Դուռը կրցաւ ըսել թէ Հայերը Թուրքերուն դէմ ապստամբած էին :

Տօքթոր Տիլոն հարցուց Քիւրտին .
— Ուրեմն Հայերը ձեզի զիմադրեցի՞ն, երբ իրենց դաւարն ու կիները կը յափշտակէիք :
Մոսթիկօ պատասխանեց, այնչափ անկեղծութեամբ որչափ խորամանկութեամբ .
— Ընդհանրապէս բնաւ զիմադրութիւն չըրին : Այդ քրիստոնեաները զէնք չունէին (իրենց արգիլուած էր զէնք կրել), եւ աղէկ գիտէին որ եթէ զէնք ունենային ու մենէ մէկը մեռցնէին, իրենց համար աղէկ բան մը չէր ըլլար, որովհետեւ Թուրքերը պիտի գային եւ սպաննուողին վրէժը լուծէին : Թուրքերն են որ զիրենք կ'առնէն եւ ոչ թէ մենք : Քիւրտերը միայն դրամ եւ աւար կ'ուզեն : Թուրքերը թէ՛ իրենց հողը եւ թէ՛ կեանքը կ'ուզեն :

— Շատ լաւ, պատասխանեց տօքթորը, բայց դուք ալ չափը անցուցեր էք :
Տեսնելով Հայերու սպանիչ մը որ կախուելու դատապարտուած է, չուտ մը անանկ կարծեց թէ այդ պատիժին պատճառը իր ոճիրներն էին :

— Կ'երեւայ թէ Հայերը չափազանց կեղեքեր էք, շարունակեց, խիստ շատ գիւղ թալլեր, խիստ շատ տուն կողոպտեր էք. խիստ շատ մարդ մեռուցեր ու կին պղծեր էք եւ վերջապէս օճիքնիդ ձեռք տուեր էք, անանկ չէ՞ :
Մոսթիկօ այս խօսքերը լսեց արհամարհոտ ժպիտով մը, եւ պատասխանեց՝ ուսերը թօթուելով .
— Ձեր ըսածները բնաւ յարաբերութիւն չունին բանտարկութեանս ու դատապարտութեանս հետ : Հայերը թալլած ըլլալուս համար չէ որ պատիժ կը կրեմ : Ատիկա ամենքս ալ կ'րնենք : Արդէն երբ ինձի չեն զիմադրած՝ քիչ անգամ սպաննած եմ :

— Ա՛, ըսաւ տօքթորը, Հայերը որ եւ է մաս չունի՞ն ձեր գործին մէջ :

— Ձիս մատնեցին, պատասխանեց բանտարկեալը. եւ բնուեցայ : Բայց եթէ կախուիմ, թրքական պահականոցի մը վրայ յարձակելուս եւ կողոպտելուս ու հոս, էրզրում,

գտնուող թուրք հարիւրապետի մը կինը բռնաբարելուս համար պիտի ըլլայ եւ ոչ թէ Հայերը սպաննած ըլլալուս համար : Հայերը ի՞նչ են որ անոնց համար նեղութիւն կրեմ :

Այս խօսքերը լուսաւորեցին տօքթորին միտքը, որ հասկցաւ թէ ի՞նչու համար Մոսթիկօ կախուելու դատապարտուած էր, փոխանակ ձի մը ու զէնքեր ընդունելու, որոնք Թուրքիոյ մէջ սրբազան համարուած մարդասպանութիւններու սովորական վարձատրութիւններն են :

Մոսթիկոյին պատմութիւնը հրահանգիչ է : Գաղափար մը կուտայ 1895ին էրզրումի, Պիթլիսի, Վանի, Մամուրէթ-իւլ-Ազիզի, Հայէպի, Աքանայի, Էնկիւրիի եւ Իզմիտի վիլայիթներուն մէջ անցած դարձածին վրայ, երբ երեքհարիւր հազար քրիստոնեայ ջարդուեցաւ : Ոմանք ինքզինքնին պաշտպանեցին : Ատիկա կ'ըսեմ իրենց ի գովեստ : Ձէյթունցիները, Տաւրոսի մէկ սարին վրայ ամրացած, յաղթականօրէն ետ մղեցին հրետանիներով զինուած թուրք բանակ մը եւ զէնքերնին վար գրին վեց պետութիւններու զեպաններէն երաշխաւորուած պատուաւոր անձնատուութեամբ մը : Բայց գիւղերէն շատին մէջ անդէն Հայերը ոչխարի պէս մորթուեցան : Այս տհաճ իրողութիւնները զոր կը յիշեմ, Ֆրանսայի, Անգլիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ եւ Թուրքիոյ զեպաններուն Բ. Դրան տուած Յիշատակագրին մէջ հաստատուած են : Ուրեմն կարելի է վերյիշել զանոնք՝ առանց պիտութիւններու համաձայնութիւնը վրդովելու երկիւղի : Ատիկա կ'ընեմ այստեղ՝ ոչ թէ վրէժխնդրութեան փափաքով մը, այլ արգահատանքի մտածումով մը : Հայերուն վիճակը, դեռ մինչեւ այսօր, ողբալի է : Պէտք է որ մեր սրտերը յուզուի ստեղծեմ. եւ եթէ թող տուինք որ Հայերը խոյլխոզուին, պարտաւոր ենք գոնէ օգնութեան հասնիլ տրդաքներուն : Տաւրոսի ու Արարատի որբերուն ի նպաստ կը կոչեմ վկայ մը զոր կարելի չէ հերքել, Առաքելական Նախագալիբ հայր Շարմըթանը : Ահաւասիկ ինչ կ'ըսէ այդ ուղղամիտ ու վեհագի անձը .
«Արիւնհեղութիւններէն ի վեր, որոնց՝ երկու տարուան մէջ՝ երեք հարիւր հազար մարտիրոս զոհ գնաց, հալածանքը կը շարունակուի, թըշուառութիւնը աննկարագրելի կ'ըլլայ եւ սովը հեազհետէ կը տարածէ իր նախճիրները ու կ'ամայացնէ ամբողջ գաւառներ :»

«Օ՛հ, այդ սո՛վը, յայտնի է որ ուզուած եւ կազմակերպուած սով մըն է, ինչպէս էին ջարդերը. խեղճ Հայերուն արգիլուած է թողուլ իրենց կործանած ու աւարի տրուած գիւղերը, կամայական աքսորի մը մէջ երթալ փնտոելու համար ապրուստի միջոցներ : Անօթութենէ ու անտուաղութենէ մեռնելու զուտապարտուած են հետո՛ւ օտարներու եւ իւրապատաներու չքէն, որոնք կրնան իրենց Տէրութիւններուն իմաց տալ այս ժողովրդին ստակալի վիճակը :

«Այդ պայմաններուն մէջ որբերուն թիւը երթալով կ'աւելնայ, այն աստիճան որ պետական իշխանութեանը ստիպուած է զբաղիլ անոնցմով: Միայն մէկ գաւառի մը մէջ քառասուն հազար կը հաշուէի այն երկու սեռէ խեղճ տղոց թիւը, որոնք առանց հպուստի, առանց հացի, առանց ննցուկի, ցուրտէն ու թշուառութենէն կը մեռնին, նոյն իսկ շուկաներու մէջ ծախուելու սուկալի հեռապատկերն ալ չունենալով, որովհետեւ մարդկային մարմին ծախողները պէտք եղածէն աւելին ունին արգէն (Հ. Շարմիստ, Արեւելքի դպրոցներու Գործը, թիւ 234):

Այդ որբերուն համար է որ ձայն կը բարձրացնուի մասոր: Իմացայ որ Փրանսա ապաստանած հայ հայրենասէր մը, Պ. Արշակ Չօպանեան, խորխոր ու գորովալից հոգիով շատ բարձր բանաստեղծ մը, հանդէս մը կը կազմակերպէր իր թշուառ հայրենիքին թշուառ որբերուն համար: Բսին նաեւ ինծի որ պաշտելի տաղանդով գերասանուէի մը, Տիկին Ռէժան, որ բուրջնորհները կը միացնէ իր անձին վրայ եւ իր սրտին մէջ, այդ հանդէսին կը բերէր իր արուեստին հմայքը:

Առանց աւելի իրն սպասելու եւ առանց մէկու մը խորհուրդ հարցնելու, խնդրանքի քանի մը սող գրեցի եւ զրկեցի «Ֆիկարօ»ին, ինչպատա այդ տղոց որոնց համար Աւետարանական միտ Սթէյթթընը ըսած է թէ՛ աշխարհի ամենէն մըտախոհ ու քաղցր տղաքներն են եւ թէ՛ անոնց յուզիչ սեւ աչքերուն պողատանքին կարելի չէ զիմանալ (Հայաստանի Բարեկամները, Փետրուար 1900):

Այն նոթերը զոր կրցայ ձեռք ձգել երկու երեք օրուան մէջ այդ որբերուն վրայ որոնք գրեթէ իրենց չափ աղքատ որբանոցներու մէջ ամփոփուած են, ի վեր կը հանեն մէկ քանի յատկանշական ու սրտայոյզ գծեր զոր կ'ուզեմ ընթերցողին ներկայացնել:

«Երկու պղտիկ մանչ Բրիէն կարբերդ եկան, կը գրէ տղթոր Պարնըմ, եւ ազաչեցին ինծի որպէսզի զիրենք որբանոցին մէջ ընդունիմ: Ո՛չ հայր ունին ո՛չ մայր: Անձկագին աչքերուս մէջ կը նային: Իրենցմէ մէկը կ'ըսէ:

—Տարի մը միայն ա՛ռ իս քու որբանոցիդ մէջ, որպէսզի կարգալ սորվիմ ու մարդ ըլլամ: Եթէ գրել ու կարգալ չսորվիմ, երբեք մարդ պիտի չըլլամ: Այդ մէկ տարուան մէջ կրնամ նաեւ կօշիկ նորոգել սորվիլ եւ անանկով հաց հանելու միջոցը կ'ունենամ:

«Մեր որբանոցին մէջ ա՛լ սեղ չկայ, կ'աւելցնէ տղթոր Պարնըմ, բայց կարելի՞ է ճամբել այս տղեկին պէս այդքան խոստմալից պղտիկ էակներ: Զիրենք նորէն թշուառութեան ու մուրացկանութեան գիրկը նետելու գաղափարը մարդուս սիրտը տակնուվրայ կ'ընէ»:

Ամերիկացի միտիոնար մը կարբերդէն կը գրէ:

«Այս պղտիկները հասած մարդիկ են արգէն: Մեր որբերուն մէջ յաճախ կը հանդիպինք ութը ինը տարեկան լաճերու որոնք իրենց պատասխանատուութեան մասին առնական ըզդացում մը կը թուին ունենալ: Օրինակի համար կը յիշեմ պղտիկ տղեկ մը որ շատ երջանիկ էր մեր որբանոցին մէջ եւ որ ինծի իմաց տուաւ թէ երկար ատեն չի կրնար մնալ հոն:

«—Պէտք է երթամ աշխատիմ, ըսաւ ինծի, մեծ մայրս ապրեցնելու համար:

«Այս պղտիկ մարդը ութը տարեկան էր:»

«Այդ տարիքը ունեցող մանչեր ու աղջիկներ որբանոց բերին գեւ օրօրոցի մէջ եզող իրենց եղբայրներն ու քոյրերը, եւ մեծ խնամքով հոգ կը տանէին անոնց:»

«Որբանոցի տղաքը շատ անդամներ հրաման խնդրեցին չուտելու՝ սովեալները կերակրելու համար, եւ եղաւ որ ամբողջ շաբաթ մը, միայն իրենց բրինձն ու հացը կերան, մնացածը աւելի թշուառներու թողնելու համար:»

Տղթոր Ռէյնուլաս կը գրէ Վանէն:

«Իմանալով որ գեղի մը մէջ Հայեր անօթութենէ կը մեռնին ու իրենց օգնելու միջոց չունենալով, հաւաքեցի երեք հարիւր որբերը որոնք իմ հսկողութեանս տակ կը գտնուին եւ հարցուցի թէ՛ կ'ուզե՞ն օր մը կերակուրէ զրկուել որպէսզի իրենց բաժինը զրկենք այն զեղացիներուն որոնց մասին այնչափ ցաւազին լուրեր առած էինք: Անմիջապէս երեք հարիւր պղտիկ ձեռքեր բարձրացան ի նշան հաւանութեան:»

«Կը հարցընէք թէ թրքական կառավարութիւնը ցորեն բաժնեց հայ գիւղացիներուն, ինչպէս խոստացած էր: Ի՞ժբախտաբար ստիպուած եմ պատասխանելու ձեզի թէ՛ ոչ միայն կառավարութիւնը օգնութիւն չզրկեց, այլ վերջին երեք տարիներու տուրքերուն ամբողջական վճարումը կը պահանջէ:»

Ահաւասիկ այն սրտայոյզ էակները որոնց ինչպատա խօսք առի այսօր:

Քրիստոնեայ Նւրոպան, Փրանսան ի գլուխ, պէտք է կերակրէ ու հագուեցնէ տղաքն ու աղջիկները Արեւելքի քրիստոնեաներուն որոնց չօգնեց եւ որոնք ջարդուեցան յամօթ իրեն: Բառասուն տարի առաջ՝ Մարտիթենը, որ հալածանք կրեցին, ինչպէս այսօր Հայերը, իրենց նայուածքը գարձուցին պաշտպան ազգին: Լիբանանցի ծերունի մը, իր տանը առջեւ Տրիւզ ձիաւորներէն դարնուած, ու մեռած կարծուելով հոն ձգուած, ելաւ դետնէն, կանչել տուաւ իր կրտսեր որդին, եւ երբ տղան իր մօտը եկաւ, ձեռքէն բռնեց եւ ըսաւ:

—Յուսու՛ք կ'ուզեմ որ մեծ երդում մը ընես ինծի: Երբ Փրանսայի քրիստոնեաները իրենց Լիբանանի եղբայրներուն օգնութեան գան, գերեզմանոց պիտի վազես, տապանիս վրայ պիտի ծռիս ու ականջս ի վար աւետիսը պիտի մըմնջես՝ որպէսզի ես ալ, հողին տակ, Լիբանանի ուրախութեամբը ցնծամ:

Այս ըսելով մեռաւ: Եւ քիչ ատենէն Եռսուֆ Բարաւ կրցաւ երթալ ըսել իր հօրը, որ հողին տակ պառկած էր:

— Հա՛յր, քունդ խաղա՛ղ ըլլայ, հա՛յր, քունդ ուրա՛խ ըլլայ, յոյսդ պարապ չելաւ, Ֆրանսացիները եկան ու մեր ժողովուրդը մխիթարուեցաւ:

Այդ օրէն ի վեր Տաւրոսի սարերէն մինչեւ Արարատի սարահարթերը երեք հարիւր հազար զոհեր ինկան, ու հիմա իրենց զայրացած ուրուականները մեզի կ'աղաղակեն:

— Չեկա՛ք: Մենք մեռանք ու մեր տղաքը պիտի մեռնին: Որպէսզի հանգիստ քնանանք, հաց տուէք մեր որբ զաւակներուն:

ԱՆԱԹՈՂ ՖՐԱՆՍ

«Ճիկառօ», 13 յունիս 1900



ՀԱՅԵՐՆ Ի ԲԱՐԻՉ



Տիկին Թ. Բերբերեան . — La Fronde թերթին յունիս 21ի թուոյն մէջ կը կարգանք հետեւեալ նօթք՝ «Միջազգային համաժողովներուն մէջ թշուառ Հայաստանն ալ մեզի նորէն իր տառապանքներուն մէջ երեւցաւ: Թըքահայ կնոջ կացութեան մասին խօսեցաւ տիկին Թադուհի Բերբերեան, որ ուժեղ ու խիստ գոյներով նախ ներկայացուց տաճկական Հայաստանը եւ ապա հայ կնոջ կրած բոլոր զրկանքներն, առեւանգումները, եւն: Տիկին Բերբերեան իր դասախօսութիւնը եզրակացուց սա մտածմամբ թէ ցորքան տաճկական Հայաստանը ենթարկուած մնայ քաղաքական, տնտեսական եւ բարոյական բնութեան, կարելի պիտի չըլլայ խօսիլ հայ կնոջ՝ իբրեւկին քաղաքացիական իրաւունքներու մասին, քանի որ այդ քաղաքացիական իրաւունքներէն զրկուած է առհասարակ ամբողջ Հայութիւնը թրքական պետութեան մէջ:»

Պ. Ռ. Բերբերեան . — Bulletin de Sociologie internationale կը գրէ՝ «Բարիկի Ընկերաբանական Ընկերութեան նախագահին եւ Պ. Ռընէ Վորմսի առաջարկութեամբ, յունիս 14ին այդ ընկերութեան անդամ բնտրուեցաւ Պ. Ռուբէն Բերբերեան (հայ): Պ. Ռ. Բերբերեան ժողովին զեկուցում մը ներկայացուց «Նախնական ժողովուրդներուն գործաւորական երգերուն ու պարերուն մասին՝ տնտեսագիտական նիւթապաշտութեան տեսակէտով»:»

Պ. Գ. Մեծասուրեան . — Journal d'Agriculture pratiqueի յուլիս 19ի թուոյն մէջ Պ. Գ. Մեծասուրեան, ճարտարագէտ-հողագործ՝ Բարիկի Հողագործական Էնսթիթիւէն, հրատարակած է շահեկան յօդուած մը նոր դիտուած հիւանդութեան մը մասին (Խոճկորներու հիւանդութիւն մը Ռուսմանիոյ մէջ), որուն դարմանումն ալ նշանակած է:

«Հայկական գրադարան Բարիկի . — Հայ երիտասարդներու խումբ մը մայիս 21ին հաստատեց Բարիկի մէջ (Rue Campagne Première, 9) «Հայկական գրադարան» մը, նպատակ ունենալով Բարիկի հայ գաղթականութեան եւ Մայր-Հայրենիքին միջեւ բարոյական յարաբերութիւններ հաստատել: Ընթերցարանը ուր հրատուէր չափ հայերէն եւ օտար թերթեր կ'ընդունուին, բաց կը մնայ ամէն օր ժամը 4էն 6ը, կիրակի օրերը առտուան 10էն 12: Թերթ կարգալու գացողները 10 օանթիմ կը վճարեն իւրաքանչիւր անգամ, ամսական՝ 1 ֆրանք: Եարթին անգամ մը բանախօսութիւններ տեղի պիտի ունենան գրական եւ գիտական նիւթերու վրայ:

Պ. Ա. Թահրանեան . — Պ. Թահթանեան, որուն «Կնճին» ծրագրի ձեւին մէջ մնաց դժբաղդաբար, տիեզերական արուեստահանգէսի գեղարուեստից բաժնին մէջ ցուցադրած է հայկական եկեղեցիի շահեկան ծրագիր մը, որուն մասին մանրամասն տեղեկութիւններ պիտի տանք «Անահիտ»ի յառաջիկայ թուով:

Շահին եւ Չախարեան . — Էտկար Շահին ընդունեցաւ ոսկի մետալ՝ Արուեստահանգէսին մէջ իր ցուցադրած փորագրանկարներուն համար: Եմանապէս՝ Պ. Չաքարեան, իր գեղեցիկ «Նաթիւր-մոռթ»ներուն համար:

L'Estampeին մէջ, Պ. Շառլ Շէնշոլ կը գրէ՝ խօսելով 1900ի սալոնին մէջ Շահինի ցուցադրած փորագրանկարներու մասին. «Էտկար Շահին . — մին այն նորածին փառքերէն որոնք անմիջապէս տիրական կը դառնան»:

«Անցեալ տարի տասերեք արուեստասէրներ մէկանց ինծի ըսին՝ Շահինին գործերուն հետեւելու է»:

«Եւ այդ տասերեք հոգին ո եւ է ձախորդութիւն չբերին արուեստագէտին»:

«Իբեցեք վեց կտորները զոր դրեր է Սալոնը ցուցադրուած միեւնոյն շրջանակին մէջ պիտի անկարող ըլլաք ըսելու թէ ո՞րն է լաւագոյնը»:

«Օր մը «Պառաւը» պիտի նախընտրէք, հետեւեալ օրը «Շաթօ-Ռուժը» եւ այսպէս յաջորդաբար»:

«Ամբողջին համար մէկ բառ մը կայ միայն՝ «Ապշեցուցի՛չ»»:

Le Journalի յուլիս 2ի թուոյն մէջ, Պ. Կիւսթավ Ժիֆուու հետեւեալ կը գրէր՝ «Թուրքիոյ բաժնին մէջ, միակ արուեստագէտ մը կայ, Պ. Էտկար Շահին, նկարիչ ու փորագրող, որ Բա-

րիզի մէջ արդէն արդար համբաւի սկզբնաւորութիւն մը ունի : Եկարչութեան մասին մէջ ցուցադրած է երկու գործ , «Փողոցի անկիւն» , եւ «Մոնմարթը» , որոնք կ'ապացուցանեն իր ուշադիր դիտողութիւնը՝ փողոցի տեսարաններուն , էակներու շարժումներին :

«Տուցակին մէջ, Պ. Չաքարեան «միջազգային բաժնին» մէջ նշանակուած է : Յոյն է կարծես, եւ այս պարագային մէջ պէտք է ըսել որ իր տաղանդը պատիւ կը բերէ Յունաստանին . իր «նախընտրութիւնները գմայլելի են , շինուած՝ նկարչութեան սիրահար նկարչի մը ձեռքով որ իր արուեստը Շառտէնի պատուական դպրոցէն ուսած է . պտուղները , սփռոցները , ձերմակ փայտէ պզտիկ սեղանը , դոյլը , բողկուկները , ամենասիրուն երփնագեղութիւն մը ունին , գորշ միջնուրտի մը մէջ որ ամէն բանի ներգաշնակութիւն ու կեանք կուտայ» :

Երկու հայ նկարիչներուն ազգայնութիւնը ճշդել տալու համար , «Անահիտ»ի անօրէնը նամակ մը գրեց Պ. Ժեֆոուային : Մեծանուն քննադատը իր սխալը սրբագրեց հետեւեալ հատուածով որ կրեցաւ իր Le Journalի յաջորդ յօդուածին մէջ .

«ՀԱՅՆԱՍՏԱՆ» . — Պ. Չաքարեան , որ այնքան հեղեցիկ «նախընտրութիւններ կը ցուցադրէ՝ միջազգային անուանուած բաժնին մէջ , յոյն չէ եղեր , ինչպէս ինձի ըսած էին , այլ հայ : Պ. Էտկար Շահին որ թրքական բաժնին մէջ արձանագրուած է նմանապէս հայ է , Այս կէտին ճշգուտը շատ արդարացի կերպով ինձմէ ուղած են մէկ քանի անձեր , որոնցմէ կը յիշեմ Պ. Պ. Չերազ , Ժ. Մ. Ապտուլլահեան , Արշակ Չօպանեան :

«Այս վերջինը ինձի կը գրէ՝ «Հայ ժողովուրդը այս միջոցին դժբաղդ պայմաններու մէջ զբաղուելով , Արուեստահանդէսին մէջ չկրցաւ իրեն յատուկ անկիւն մը ունենալ՝ որպէսզի հոն համարմբէր իր մտաւորական կամ ձարտարադրժական կարողութեանց այլազան արտայայտութիւնները . ստիպուեցաւ տարադնել իր գործը՝ մէկ քանի օտար ազգերու բաժնիներուն մէջ :

«Հունգարական եւ պարսկական Տուցարաններուն ընդհանուր յանձնակատարները երկու Հայ են, Պ. Լուքաչ տը Պելա եւ Պ. Քիթապճի խան զօրավարը . ու հայկական արուեստի ու ձարտարադրժութեան արտադրութիւններ . ցուցադրուած են ուսակա՝ , թրքական , պարսկական , եւն բաժնիներու մէջ : Բայց ինչ որ կ'ուզեմ որգիտնան ամէն բանէ առաջ , այն է թէ այդ երկու նուրբ ու մեծ արուեստագետները , Շահին ու Չաքարեան , զորոնք բարձրօրէն գընահատած էք , հայ են : Այն պահուն ուր պաշտօնական Եւրոպան հայ ժողովուրդը կը լքանէ հրէշային բռնապետութեան մը ձեռքը՝ որ կը ջանայ ամէն միջոցներով զայն բնաջինջ ընել , մեռնալու արախ պիտի ըլլայինք տեսնելով որ գոնէ մտաւորական Եւրոպան արդարութեան

հարկ մը կը մատուցանէ այս ժողովուրդին որ արժանի է — միշտ պիտի կրկնեմ — աշխարհի համակրութիւնը գրաւելու , ոչ թէ միմիայն ուրովհետեւ դժբաղդ է , այլ մանաւանդ որովհետեւ քաղաքակրթութեան տարր մըն է : »

«Գրութեանն ու պատգմանը համաձայն
ԳԻՒՍԹԱՎ ԺԷՖՈՒՌԻԱ

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

ԲԱԶՄԱՎԷՊ . — « Բաղմավէպ » ին վերջին մէկ քանի թիւերուն մէջ հրատարակուած ուսումնասիրութեամբ մը , Հ. Արսէն Ղազիկեան կը ձգտէր ի վեր հանել Հ. Արսէն Բագրատունիի «Իլիական»ի թարգմանութեան գեղեցկութիւնները : Արդ , երբեք ներբողեան մը այնքան ձախող ու ներբողեալին համար նոյն իսկ վնասակար չէ եղած որքան այս ուսումնասիրութիւնը : Փոխանակ բընագրին ու հայերէն թարգմանութեան բազմաթիւութեամբ՝ ցոյց տալու այն ձարակութիւնը , երկու լեզուներուն հաւասարապէս խորին տիրացումը եւ այն մագիստրական կատարելութիւնը որով Բագրատունին Հոմերի լեզուին գեղեցկութիւնները վերարտադրած է նարեկացիի լեզուով , փոխանակ վերլուծելու տաղաչափի անդուգական կարողութիւնները զոր Բագրատունին պարզած է այդ արոյրէ եւ արծաթէ տողերուն հոյակապ շարքին մէջ : Հ. Արսէն Ղազիկեան միմիայն մատնանիչ կ'ընէ բան մը զոր ինքը կը համարի Բագրատունիին ամենամեծ յատկութիւնը եւ որ ընդհակառակն Բագրատունիին գործած սխալներէն մէկն է , եւ սխալէ աւելեալն մը , «յանցանք մը» : Հ. Ղազիկեան կը յիշէ «Իլիական»ին վերագիրները (արծաթթաթիկ , քաջաղեղն , ամպրոպային , եւն) որոնք բնագրին մէջ միշտ նոյն բառով կը յեղձուին , կը յիշէ նաեւ այն բոլոր տողերը որոնք բնագրին մէջ նոյնութեամբ կը կրկնուին զանազան էջերու մէջ , եւ ցոյց կուտայ թէ Բագրատունին այդ վերագիրներէն իւրաքանչիւրը հինգ վեց ձեռով թարգմանած է հայերէնի եւ թէ բնագրին մէջ նոյնութեամբ կրկնուած այդ բոլոր տողերը իրարմէ բոլորովին տարբեր կերպով հայացնելու «թուռ տը ֆոռս»ը գործած է : Հ. Ղազիկեան կը կարծէ որ ասի թարգմանական արուեստին կատարելութեան գաղաթնակէտն է եւ միանգամայն ապացոյց մը հայերէն լեզուին գերազանց ձոխութեան : Հիմնովին սխալ է այս տեսութիւնը : Հո-

մերի լեզուն, այնչափ՝ եթէ ոչ աւելի՝ ձօն է որչափ հայերէնը, եւ Պիտիադրատեանք որ հաւաքեցին ու վերջնական ձեւովը խմբագրեցին «Իլիական»ն ու «Ոգիսական»ը, մտքերնուն չանցուցին յեղյեղուած վերագիրներուն եւ կրկնուած սողերուն միօրինակութիւնը ջընջել. այդ միօրինակութիւնը, այդ կրկնութիւնը, հին գրականութեանց մէկ յատկանիշը ու մէկ միամիտ ու սիրուն գեղեցկութիւնն է. ո եւ է թարգմանիչ պարտաւոր է այդ յատկանիշը եւ այդ գեղեցկութիւնը անհղժ պահպանել: Տաղաչափն ու հայերէնագէտը գրադէտէն ու գեղեցկագէտէն աւելի զօրաւոր են հանդիսացեր Բագրատունիին մէջ, եւ փոխանակ թարգմանութեան արուեստին հիմնական մէկ կանոնին հետեւելու ջանադիր ըլլալու, իր տաղաչափի եւ հայերէնագէտի անսպառ ուժերուն ազատ ասպարէզ է տուեր: Հիացումը զոր ունինք Բագրատունիին համար, ասով չ'աղօտանար անշուշտ. բայց անօգուտ չենք նըկատեր ճշդել սա կէտը թէ մեր մեծ մարգերուն ճշմարիտ յատկութիւններուն վրայ պէտք է որ հիանանք եւ ոչ թէ սխալներուն:

Լ'ԱՐՄԵՆԻ — Պ. Մինաս Չերազի հայրենասիրական թերթին յունիս 1ի թուոյն մէջ հետեւեալ սողերը կը կարգանք «... Պարսկական թատրոնին պարուհիներուն մէջ աչքի կը զարնէ «գեղեցիկ Ջիպան», մանկամարդ Հայուհի մը, որուն այնքան շնորհալի որքան պարկեշտ խաղացուածքը եւ ակնախտիդ գեղեցկութիւնը հասարակութեան հիացումը կը գրաւեն:»

«Գեղեցիկ Ջիպան» իրօք շատ շնորհալի, շատ նրբաձեւ ու ճապուկ Հայուհի մըն է, որ կը պարէ Սրբէլքի վաւաչոտ պարեր, որոնց մէջ գլխաւոր դերը կը կատարեն ծիծերը, փորը, եւ... հակափորը: Չկրցանք բացատրել «պարկեշտ» բառին գործածութիւնը այդ պարերուն, որոնց միակ գեղեցկութիւնը, անոնց համար որ կ'ախորժին այդպիսի գեղեցկութիւններէ, ճիշտ իրենց անպարկեշտութեանը մէջ կը կայանայ: Կ'ուզէինք գիտնալ թէ «պարկեշտ» (décent) բառը ի՞նչ իմաստ ունի պ. Չերազի բառարանին մէջ:

«ՄՇԱԿ» — Թղթակցութիւնը զոր Պ. Ա. հարոնեան հրատարակած է «Մշակ»ի յունիս 21ի թուոյն մէջ՝ Վոտվիլի հայկական ցերեկոյթին մասին, կը պարունակէ կարգ մը սխալներ, որոնց ոմանք արդիւնք են տգիտութեան, եւ մէկ քանին՝ անուղղամտութեան:

«Մունէ-Սիւլի, կը զրէ պ. Ահարոնեան, իր խաղի համար ընտրել էր Կորնելի ամենայայտնի տրագիտիաներից մէկը, «Պօլիէօկա», որի վերջին գործողութիւնը կատարեց»։ Սրդ, Մունէ-Սիւլի խաղաց «Բոլիէօքթ»ի չորրորդ արարուածը, եւ ոչ թէ հինգերորդը:

Այնքան է որ պ. Ահարոնեան չէ կարդացած Բոննէյլի գլուխ-գործոցը:

Բարձրահայեաց ու սրամտալ տողերով քըննադատելով իմ բանախօսութիւնս, պ. Ահարոնեան կը գրէ. «... Բայց ի՞նչ անուն տանք պ. Չօպանեանի այն վարմունքիները նա իբրև յայտնի տաղանդներ օտարների առջ թուում էր նաև անուններ որոնց մասին հազիւ թէ Հայը լսած լինի. Ի՞նչպէս հաշտեցնել, օրինակ, Լօրիս Մելիքոֆ եւ Մանուէլեան, Սվաճեան: Համաձայն ենք, պ Մանուէլեան մի վերին աստիճանի աշխատաւոր ուսանող է, որ վերջերս իր կատարած մէկ քանի աջող բժշկական փորձերով մեծ յոյսեր է տալիս եւ համարում է գիտական ասպարէզում լաւ սկզբնակ, բայց միթէ այսքանը բաւակա՞ն էր եւ իրաւո՞ւնք էր տալիս Պ. Չօպանեանին համարեա աշխարհահռչակ դարձած հայ անունների հետ յիշատակել նաև Մանուէլեանին:» Որչափ տող, այնչափ սխալ: Ես Մանուէլեանը, Շահինը եւ Սվաճեանը Լօրիս Մելիքովին ու Այվազովսքիին հետ մէկտեղ չ'անուանեցի. հայ մտքին այդ երեք «նոր» արտայայտութիւնները յիշեցի «իբրև ասպարէզումներ ջարդերէն անմիջապէս յետոյ հայ ցեղին մտաւորական կորովին մշտավառ կենսականութեանը», եւ դաւնոնք յիշեցի ոչ թէ իմ անձնական համակրութեանս վրայ հիմնուելով այլ «իբրև բարիդեան հեղինակութիւններէ գնահատուած անձնաւորութիւններ»: Պ. Ահարոնեան լուրջ քըննադատի դեր չի կատարեր իմ բացատրութիւններս խեղաթիւրելով: Իսկ «որոնց անունը Հայը անգամ հազիւ թէ լսած լինի» բառերը կրնան ենթադրել տալ թէ Պ. Ահարոնեան հայ մամուլին չի հետեւիր. երկու երեք տարիէ ի վեր, Մանուէլեանի, Շահինի եւ Սվաճեանի անունները ամենէն յաճախ յիշուած են ներքողուած անուններն են մեր թերթերուն մէջ, եւ եթէ կովկասեան մամուլը նուազ հետաքրքրուած է անոնցմով, յանցանքը իրենն է: Պ. Ահարոնեան կ'ասպարէզանէ իր այս գրուածքովը թէ Մանուէլեանի մասին չ'ձիւռ արձակելու յանդգնելէ առաջ՝ եւ ոչ իսկ իղձամբտութիւնը ունեցած է անոր կատարած աշխատութիւնները մօտէն ուսումնասիրելու, եւ եթէ այդ բանն ընելու համար գիտական բաւականաչափ զարգացում չունի, գոնէ ձեռնհաս անձերէ տեղեկութիւն առնելու այդ աշխատութեանց մասին: Մանուէլեան կատարած է ոչ թէ «բժշկական» աշխատութիւններ, այլ «հիւսուածաբանութեան եւ ընդհանուր բնախօսութեան» հետազօտութիւններ. իր գործը կը կայանայ ոչ թէ «մէկ քանի աջող փորձերու» մէջ, այլ գիտական ամենակարեւոր «վարկածի» մը գիւտին առաջնորդող ինքնուրոյն ու շատ փափուկ խեղարկութեանց մէջ. եւ թէ եւ տակաւին ուսանողական շրջանը չէ լրացուցած, Մանուէլեան այսօր «ուսանող» է ինչպէս պ. Ահարոնեան զայն կ'անուանէ, այլ Եւրոպայի բարձրագոյն գիտական շրջանակներուն մէջ կը համարուի «գիտուն» մը, եւ իր որոշ ու շատ

պատուաւոր տեղը ունի արդի գիտութեան մէջ . իր գործը դասագրքերու մէջ անցած է արդէն , — բան մը որուն չեն յաջողած հասնիլ բազմաթիւ ալեւոր բրոքիստորներ : Այնպէս որ ո եւ է հայ բանախօս որ հայ ցեղին մտաւորական արտայայտութեանց վրայ խօսելու առիթ ունենայ , պարտաւոր է այսօր Մանուէլեանի անունը յիշել իբրև արդի Հայութեան նորագոյն շրջանին ամենէն նշանակալից ու փառաւոր անուններէն մէկը : Փոխանակ ուրիշներուն «չափ»ի դասեր տալու , Պ. Ահարոնեան պէտք է որ նախ ինք իր չափը գիտնայ եւ «համեմատութեանց զգացում» ըսուած բանը քիչ մը ունենայ :

Երբ վերջապէս Պ. Ահարոնեան կը մեղադրէ ինծի «Հայութիւնը չափազանց գոված ըլլալ» , երբ կը գրէ «մեր բերանով մեզ գովելը օտարների առջ իր անպատեհութիւնը ունի , որի չափազանցութիւնը մանաւանդ ինչպէս այդ տեղի ունեցաւ երեկ՝ բացասական հետեւանքներու հասնելուց գուրկ չէ» , ուղղամբտութեան խոշոր պակասի մը ապացոյցը կուտայ զարձեւալ : Ես իմ ազգս «չափազանց գովելու» սովորութիւն երբեք չեմ ունեցած . բանախօսութեանս մէջ , տրտունջ յայտնեցի որ Եւրոպա մեր դժբաղդութեանց առեն չյիշեց այն «խոնարհ բայց նշանակալից եւ արի բաժինը զոր մեր ցեղը ունեցած է քաղաքակրթութեան գործին մէջ» , եւ այդ «խոնարհ բայց արի բաժինը» բացատրեցի Քրանսացի հասարակութեան որ մեր ցեղին անունը հազիւ ըսած էր ջարդերէն առաջ եւ հիմակ ալ ընդհանրապէս մեր ազէտքներով միայն մեզ կը ճանչնայ : Ասոր եւ «իմ ցեղս չափազանց գովելուն» մէջ անհուն տարբերութիւն կայ : Եւ բոլոր ունիկներէն , միայն Պ. Ահարոնեանն է որ կրցեր է նւթադրել թէ իմ բանախօսութիւնս «բացասական հետեւանքներ կարող էր ունենալ» , օղակին ու անիմաստ ենթադրութեան մը տեղ , Պ. Ահարոնեան աւելի պարկեշտ բան մը կ'ընէր եթէ պարզապէս արձանագրէր այն ընդունելութիւնը զոր Քրանսացի հասարակութիւնը ըրաւ իմ բանախօսութեանս , եւ փոխանակ իր անձնական վճիռներուն՝ «Ոոտ»ի կամ «Լա Փոտնա»ի Քրանսացի քննադատներուն տպաւորութիւնը հաղորդէր «Մշակ»ի ընթերցողներուն :

— Նոյն «Մշակ»ին յունիս 27ի թուոյն մէջ կը գտնեմ Պ. Ս. Մալումեանի մէկ թղթակցութիւնը , որ կը պարունակէ հետեւեալ շնորհալի սողերը Հայութիւնը Եւրոպային ճանչցընել փորձող բարիզաբնակ մէկ քանի Հայերուն մասին .

«Կարգալով Մօրանի գիրքը , ես ակամայ յիշեցի մի քանի յօդուածներ , որ առիթ ունեցայ աչքի անցկացնելու Պարիզի հրատարակութիւնների մէջ՝ հայ գործիչների եւ գրողների մասին : Անկողմնակալ դիտողին ապշեցնում է մի երեւոյթ . — որքան եւրոպացի գրողը կամ ուսումնասիրողը «բարեխիղճ» է , ձգտող թափանցել ճշմարտու-

թեան մէջ եւ ընդունակ բացատրելու մի ժողովրդի կեանքի երեւոյթները , այնքան հայերը , որոնք ուղում են ծանօթացնել Եւրոպային իրանց ազգին հետ՝ «անբարեխիղճ են եւ անընդունակ» : Ով պիտի աւելի լաւ ճանաչէր հայերին , հայերի կեանքը , հայկական մտաւոր շարժումները , եթէ ոչ նոյն իսկ ինքը հայը : Բայց տեսէք որ ամեն անգամ , երբ ձեզ առիթ է ներկայանում կարգալու ու է գրուած հայերու մասին , գրուած կամ «թելադ ուած» հայի ձեռքով , — ասում եմ «թելադրուած , ուրովհետեւ շատ անգամ այդ յօդուածները լոյս են տեսնում օտար պսելգոսիմներով — դուք պոնում էք ասնձարձակ անբարեխիղճութեան չտեսնուած ապացոյցներ : Վերջերս , օրինակ , Պարիզի մի լրագրում տպած յօդուածի մէջ , ուր խօսվում է «հայ կանանց» մասին , հեղինակը , — կեղծանուն մի հայ , կամ թելադրուած մի հայից — թուելով հայոց մեծ գրողներին , տալիս է եւ մի անուն , որը ես չեմ էլ ըսել , ինչպէս եւ չէք ըսել երեւի եւ դուք , հայ ընթերցող : Եւ եթէ մեր մեծ գրողները նրանք են , որոնց անունն անգամ չը գիտենք՝ մենք հայ գրողներս , — ապա ուրեմն երեւակայեցէք միւս «ճշմարտութիւնները» , որ ծանօթացման անուան տակ , մի խումբ գրական ցամաքներ հարդում են եւրոպացիներին , գոհ «ազգին մատուցած իրանց ծառայութիւններից : Երեւի » պատկերը լրացնելու համար է , որ Քրանսիակ մի ուրիշ հրատարակութեան մէջ մի ուրիշ հայ պատիւ է համարում «միջակ գրող» անուանելու հայոց մտաւոր կեանքի այնպիսի սիւներին , որոնց Պ. Մօրան անուանում է մեր մտաւոր շարժման հողին » :

Պիտի չորակեմ այն զգացումները որ Պ. Մալումեանը կրցած են մղել այնքան ծանր ու կոշտ բացատրութիւններ գործածելու բոլոր այն Հայերուն մասին որ Բարիզի մէջ հայասիրական շարժում մը ստեղծելու համար ջանքեր ըրած են . պիտի յիշեմ միայն որ այդ Հայերուն մէջ , ի միջի այլոց , Իսքէնտէրի պէս անձնուէր ու ազնիւ անձ մը եւ Տիգրան Երկաթի պէս հոյակապ տաղանդ մը գտնուած են : Պ. Մալումեան որ օեւ է անուն չ'որոշեր եւ ամենուն մէկանց կ'ուղղէ իր դատաւիտումը , ատով նախատած կ'ըլլայ մեր ազգին ամենէն յարգելի զէմքերէն երկուքը . պիտի չգրադիմ , ըսի , այս վարմունքը որակելու . պիտի ցոյց տամ միայն թէ երբէք յարձակում մը այնքան ստայօղ , այնքան անգոյ , այնքան անխմաստ հիմունքի վրայ չէ կրթւում , որքան Պ. Մալումեանինը : Բարիզի մէջ ոչ մեկ Հայ օտար կեղծանունով յօդուած չէ հրատարակած . կը հրաւիրեմ որ պ. Մալումեան մէկ հատիկ պարագայ մը յիշէ իբրև հաստատում իր ըսածին : Իսկ յաճախ պատահած է որ Հայերը մղած ըլլան Քրանսացի գրադէտներ՝ Հայոց մասին գրելու . պ. Իսքէնտէրի թելադրութեամբ՝ Բլէմանսօ , Ալպէս Լը Ռուա , Ռոշֆօռ , Տիգրան Երկաթի թելադրութեամբ Մոռիս Պառէս , եւ իմ թելադր-

կը համարձակի անուանել եւ անոր մէջ երեւցած Սվաճեանի ու Եարճանեանի բանաստեղծութեանց համար շուարած պախալի հեգնութիւն մը կը հնչեցնէ, պարագան աննշան, զրոնեհիկ, ամենօրեայ է եւ ոեւ է ուշադրութեան անարժան: «Տեքատենդական» անուանել քերթուածներ երկու գրողներու որոնք իրարմէ ա՛յնքան տարբեր են (մին դասական, երկրորդը բոլորովին «մոտեմո» խառնուածքով), եւ «տեքատենդական բառը արասասնել ա՛յնքան զուարճակի արհամարհանքով մը (մինչդեռ գիտենք որ պախալներու հնարած այգանիմաստ բառովը որակուած ամբողջ շարք մը եւրոպական բանաւրատեղծներ, Պոտշէն, Վեպլէն, Մեթիլլինք, Ժիւլ Լաֆոտկ, Մալամե, Ռոտենպաք, եւն, թէպէտ հիւանդագին ներշնչումով բայց ամենաբարձր գեղեցկագիտական արժէքով արուեստագետներ են, եւ թէ այդ վարպետներուն հետեւողին մէջ պէտք է նկատել լոկ յաջողած կամ չյաջողած ըլլալը, որովհետեւ արուեստի մէջ գեղեցկագիտական նկատողութիւնները միայն տեղ ունին եւ ոչ թէ ռամիկ առողջապահութեան մը քարոզները), այս բոլորը ինքնին կը պարզեն ողբալի անձեռնհասութիւնը անտաշ ու դատարկ մտքի մը որ իր չհասկցած բաներուն վրայ վճիռ արձակելու կ'ելլէ: Ատով չէ ուրեմն որ պիտի զբաղիմ:

Պիտի ի վեր հանեմ միայն պ. Հախումեանի մէկ մեղադրանքը որ բարոյական ինդերոյ մը մասին է եւ զոր լուսաւորելը կարեւորութենէ զուրկ չեմ նկատեր: Պ. Հախումեան կ'ենթադրէ որ «սանձարձակ ու արբշիռ կատաղութեամբ» անպատուեր եմ Ալթունեանը, որուն մասին ակնարկութիւն մը ըրած էի «Մեր ուսանողները» տիտղոսով յօդուածիս մէջ, եւ զոր պ. Հախումեան կը ներկայացնէ իբրեւ անձ մը որ ամբողջ Պարիզում թէ՛ հայ եւ թէ՛ ֆրանսական շրջաններում յայտնի է եղել իր համեստութեամբ չարքաշութեամբ եւ հասարակական անկաշառ զրացմունքներով: Ալթունեանը՝ այժմ իսլաւազար՝ յիմարանոց մը կը գտնուի, եւ իրօք տաժանելի է ինծի համար գէշ խօսիլ այդ ցաւագին կացութեան մէջ գտնուող անձի մը մասին նախորդ յօդուածիս մէջ արգէն իր անունը յիշած էի միմիայն ուսանողական Միութեան վերջերս ցոյց տուած անհոգութիւնը ապացուցանելու նպատակով, եւ իր վրայ չէի ծանրացած, բայց վերջապէս մարդու մը յիմարացած ըլլալը պատճառ մը չէ որ իր անցեալը վարդազոյն տեսնենք: Ալթունեանը բաւական ուշիմ ու գործունեայ երիտասարդ մըն էր, որ սակայն անկարգ մը, մակարոյծ մը, եւ անաւոր «քոսմոքոն» մը եղաւ. տարօրինակ փառամոլ մը, «էնթոիկան» մը, խօսք խառնող մը եւ շահախնդի մըն էր. օր մը, սակից 8—9 տարի առաջ, իր պաշտպաններուն հետ գժտած եւ իրաւագիտական ուսումնասիրութիւնները

զաղրեցուցած էր ու յանկարծ հանրային գործիչ դառնալու հիւանդութենէն բանուած էր, հիւանդութիւն որ անձնական գործ մը չունենալէն առաջ կուգար: Տարին տասը ընկերութիւն կը հիմնէր, միշտ իր գլխուն, առանց ու է խումբէ պաշտօն ստանալու, եւ միշտ դիտաւորութիւն ունենալով այդ ընկերութիւններուն վճարուած քարտուղարը, գլխաւոր օգտուողը ըլլալ, ու միշտ կ'երթար, ինք իր գլխուն, շատ մը Հայերէ եւ Ֆրանսացիներէ գումարներ հաւաքելու: Բարիզի Ուսանողաց Միութիւնը սակից հինգ վեց տարի առաջ երկու անգամ գինքը հանդիսաւորապէս իր անդամացութենէն արտաքսած է պատուիրելով որ այլեւս յանուն ուսանողութեան չգործէ երբեք, բայց Ալթունեան անդրդուելի կերպով շարունակեց զօռով «ծառայութիւն մատուցանել» այնպիսի մարդոց որոնք իր ծառայութիւնը կը մերժէին: Ջարդերէն յետոյ մանաւանդ, Բարիզի մէջ հայասէր Ֆրանսացի չմիացորուն զուոր ամ առած չըլլար՝ մէկէ շատ աւելի անգամներ, միշտ հայ կարօս ուսանողներուն օգնելու նպատակով, բայց այդ պատրուակով իւրաքանչիւր հայասէրէն իր անձին համար մասնաւոր գումարներ ալ փրցնելով. այսպէս՝ անսակ մը յաւիտենական մուրացկան գարձած էր, միակը հայ ուսանողներուն մէջ (որոնք օտարներու առջեւ ընդհանրապէս գիտցան ծածուկ պահել իրենց աղքատութիւնը եւ իրենց գիմուսները սահմանափակեցին Հայերուն մէջ): Ծայրայեղօրէն շողքորթի, քծնող, գժուձ խօսելու եւ վարուելու ձեւ մը ունէր, ու ցնդալիանօրէն աներես՝ մէկ անձին տունը օրը երեք անգամ երթալու չէր քաշուեր. «Ապտուծ ու սիւրոյն, աղատեցէք մեզ սա մարդուն ձեռքէն», կ'ըսէին Մառիյեէ, Բոլ Մըլոն, Վանտալ եւ ուրիշ Ֆրանսացիներ, որոնք ա՛լ զգուած, ձանձրացած էին այդ մշտական խնդրանքով մը իրենց շուրջը անդադար սողացող արարածէն: Ահաւասիկ այն տիպարը, որուն Պ. Հախումեան հոգիի աւետարանական գեղեցկութիւններ կը վերագրէ:

Պ. Հախումեանէն չեմ սպասեր որ գեղեցկագիտական նրբութիւններէ բան մը կարենայ հասկընալ. բայց մարդու մը բարոյականին վրայ վճիռ արձակելէ առաջ՝ պիտի փափաքէի որ իր խնդրոյ նիւթ առած մարդը լրջօրէն ուսումնասիրէր. ոչ հանձար պէտք է ատոր համար ոչ ալ դրական նուրբ զարգացում. պէտք եղածը քիչ մը լրջութիւն է, եւ քիչ մը պարկեշտութիւն:

ARMENA. — Considérations (Etudes sociales). — Florence, Imprimerie de G. Barbera. — Paris, Librairie Fischbacher, Rue de Seine. — Գին 4 Փրանք.

Տարօրինակ, խառնաշփոթ, փոթորկալոյց, ու խոռովիչ գիրք մըն է աս : Հեղինակը, Հայուհի մը որ «Արմենա» կեղծանունին տակ կը սքոզուի եւ որ Փրանսերէնն ընտրած է իբրեւ արտայայտութեան գործիք, ցոյց կուտայ նախ շատ ընդարձակ ու մանրակրկիտ հմտութիւն մը, եւ խորին տիրացումը Փրանսական լեզուին որուն բոլոր նրբութիւններն ու բրտութիւնները, դասական փափուկ կազմածքն ինչպէս եւ թանձր «առկօ»ն իւրացուցեր է : Չղուտ, հետաքրքիր, մշտաշարժ միտք մըն է յայտնապէս, որ եւրոպական նոր քաղաքակրթութեան բոլոր երեւոյթներուն վրայ պարտացուցեր է իր քիչ մը կրքոտ ու միակողմանի, բայց ինքնուրոյն տեսողութեամբ մը խուզարկող նայուածքը, եւ որ հակառակ եւրոպայի մէջ կազմուած, եւրոպայով անած ըլլալուն՝ մինչեւ սկիզբներուն ծուծը Արեւելցի մնացեր է : Գրքին նիւթը, կամ աւելի ճիշդ՝ գրքին յղացման պատրուակը, գրքին քիչ մը կցկտուր ու հեւհեւ էջերն իւրարու կապող ընդհանուր գաղափարը, Հայաստանի ջարդերուն ու եւրոպական վատութեան քառմնելի ու զազիր պատմութիւնն է : Եւրոպայի մէկ անկիւնէն, Արմենա անձկութեամբ ու զարհուրանքով հետեւեր է հեռուն հայրենիքին մէջ մարտիրոսացող իր ազգին տառապանքներուն, ու միեւնոյն ատեն մօտէն՝ իր աչքերովն իսկ՝ դիտեր ու հաստատեր է իր շքնականօրէն շահամոլ հաշիւներուն, իր վայելապաշտ եսականութեան մէջ քարացած կոռուրական ու դրամատիրական եւրոպային լիբր անտարբերութիւնը այդ անասման ոճիքին հանդէպ . եւ այս գիրքը, տաք, ինքնաբուխ, գրեթէ անգիտակից ցայտքով մը ելած՝ ուժգին յուզմունքներով պայթելու չափ բեռնաւոր սրտէ մը, անսքող, համարձակ, անպատկառ, գրեթէ բիրտ արտայայտութիւնն է իրեններուն հրէշային դժբաղդութիւնէն իր զգացած ցաւին եւ այն մոլեգին, զայրացկոտ, խելայեղ զղուանքին զոր քաղաքակրթ եւրոպային անսքողութիւնը իրեն ներշնչեր է : Այդ երկրորդ տեսակէտն է մանաւանդ որ կը տիրէ գրքին մէջ . հեղինակը չէ տեսած ջարդերը, հեռուէն, ու մտային ծանօթութեամբ մը միայն կը ճանչնայ իր ազգն ու իր հայրենիքը . մինչդեռ եւրոպան իր բոլոր զգայարանքներովը զններ, հետազօտեր, թափանցեր է, անոր բոլոր կեղծաւորութիւնները, խողովութիւնները, ցածութիւնները երկարօրէն դիտեր ու ճանչցեր է, եւ անոնց իրեն ազդած հսկայ գանկլանքն է գլխաւորապէս որ այդ գիրքը տուն տուեր է իրեն : «Աստուածաշնչական մեծ անէժք մըն է այդ գիրքը, կը գրէ Քլեմանսօ, «Տէրէշարթուրուզ»ի մէջ հրատարակուած ընդարձակ յօդուածի մը մէջ, զոր կ'արձակէ Արեւելքը որուն արիւնը

կը հոսի բերաւոր վէրքերէ, դէպ ի Արեւմուտքը որ աչքերուն կապոց մը կը դնէ եւ Բան մը չտեսայ կ'ըսէ : »

Գրքին այս ընդհանուր գաղափարը ամենագեղեցիկ ու բացարձակապէս արդար ու ճիշդ գտնելով հանդերձ, չեմ կրնար անշուշտ համակարծիք ըլլալ անոր ընդլայնումներէն, սեսութիւններէն, մեկնութիւններէն ոմանց : Նախ՝ այս հմտութեամբ ու ձեռով իսկականապէս եւրոպացի միտքը, արեւելեան կրօնամոլութեան խորք մը պահած է որ երբեմն միջնադարեան հայ վարդապետներուն համակերպեալ ու երկնաբաղձիկ ողբը կը բերէ իր շրթունքին վրայ ուր պիտի նախընտրէի կանացի սրտի մը բնազդական ցաւին ու կատաղութեան ճիշդ գտնել լոկ . «Ձեր երախաներուն կանուխէն սորվեցուցէք, կ'ըսէ՝ ուղղութիւնով հայ կրիւրուն, դէպ ի երկինք յոռել իրենց աչքերը, եւ ըսէք իրենց՝ Տղա՛ք, հոն է ապագան, հոն է Հայրենիքը : Այո՛, երկրիս վրայ հայրենիքը ուրիշ բան չէ բայց եթէ ծերութիւն, ձախորդութիւն, հիւանդութիւն, մահ : Այո՛, պէտք է ապրի՛ միմիայն ելքը ի նկատի ունենալով . պէտք է պատրաստել մեր մուտքը երկնաւոր կայաններուն մէջ : » Չեմ սիրեր նմանապէս այն բոլոր հատուածները ուր Արմենա համարութիւն, հանդարտութիւն կը քարոզէ, կ'ըսէ որ չարքաչ ու համեստ աշխատաւորներ միայն ըլլան Հայերը, — էջեր, եւ ո՛չ գերամարդեր — ու իր ասեղութիւնը կը յայտնէ վրիժառութեան, ինքնապաշտպանութեան համար փորձուած ու եւ է բուն միջոցը դէմ : Անհաշիւ եւ անխոհեմ շարժումներէ խորշանքը կը հասկնամ, բայց կարելի չէ որ ընդունիմ մշտական համակերպութիւնը, եւ երկնքին յոյսը, որ հաւատացեալները կրնայ մխիթարել, լուծում մը չէ չարչարուող ազգի մը համար . Արմենա, որ վեհանձն ու բորբոքեալ հոգի մըն է, անտարակոյս օր մը պիտի ըմբռնէ որ հայ ցեղին համար այլեւս մէկ իսկալ մը, մէկ դործ մը, մէկ դեր մը կայ, — իր վրէժխընդրութեան պատրաստումը, իր ազատումին ծրագրումը . եւ այն՝ դպրոցով, եկեղեցիով, արհեստանոցով չէ այլեւս որ պիտի կարենայ իրագործել : Չեմ սիրեր նաեւ այն հակահրէական էջերը զոր Արմենայի գիրքը կը պարունակէ . Հայերը պէտք չէ մոռնան որ հրէայ ժողովուրդը, ինչ իրականութեան թիւններ ալ ունենայ աշխարհիս ամենէն չարչարուած ժողովուրդն է . եւ այդ ցեղին հարուստներուն գարշելիութիւնը պէտք չէ որ մոռցնել տայ անոր անհամար աղքատներուն անհուն ու զարաւոր թշուառութիւնը, որուն պէս հայ ժողովուրդն ալ երբեք չէ ունեցած . պէտք է չմոռնանք մանաւանդ թէ այդ ժողովուրդը արտագրեց Մովսէսը, Սասնին, Դաւիթը, Յիսուսը, Սբիտոզան, Գարլ Մարքսը եւ Հանրի Հոյնէն . ինչ անհամաձայնութիւններ, ինչ հակասակութիւններ ալ որ գտնուին մեր երկու ցեղերուն

միջև : մենք պէտք չէ մոռնանք որ անոնք աշխարհիս ամենէն մեծ ցեղերէն մէկն են եւ թէ մանաւանդ անոնք մեզի եղբայր են դժբաղդութեան մէջ : եւ մենք ասենազեղեցիկ բան մը պիտի ընենք աշխարհիս առջեւ , եթէ անտեսելով հրէայ դրամատէրներէն մեր աղգային դատին մէջ կրած վնասներնիս , ցոյց տանք այդ հալածուող ժողովրդին՝ այն գթութիւնը զոր աշխարհ մեզի զլացաւ : Չեմ հասածայնիր վերջապէս Արմենային այն բոլոր էջերուն մէջ ուր պաշտօնականներու պային ողորմելիութիւնը ձաղկելու ատեն համայնապարփակ արհամարհանքով մը կը քամահրէ բովանդակ այժմեան մտաւորական եւրոպան , ամբողջ արդի արեւմտեան քաղաքակրթութիւնը : Այդ խոշոր ժեսթին յանդգնելու համար , Արեւելքը այսօր ո եւ է տիտղոս չունի : Արեւելքը եղաւ քաղաքակրթութեան մայրը , եւ եւրոպան անկից փոխառաւ իր արդի մտաւորական գործին հիմունքը , բայց այսօր Արեւելքը անհուն դիակ մըն է այլասեռած , թմբած , նեխած , ստրկութեան , տգիտութեան , կրօնամոլութեան մէջ փտտած , մտաւորական ու բարոյական անկարողութեան մատնուած . ու մարդկային կորովին ամենէն բարձր ու ամենէն ազնիւ արտայայտութիւնները եւրոպայի մէջ կը խտանան այսօր : վայելամուտ պուռժուս դասակարգի մը եւ ծայրայեղ դօրէն եսական դիւանագիտութեան մը պօղաւրի պատկերը պէտք չէ մոռցընէ մեզի բոլոր հոյակապ ճիգերը զոր եւրոպայի մտաւորականութիւնը ի գործ կը դնէ մարդկային ցեղին ազնուացմանը համար եւ որոնք երկրպագիտ վրայ գրեթէ միայն Արեւմուտքի մէջ է որ (Ամբիկան ալ Արեւմտեան աշխարհին մէկ ճիւղը համարելով) կը կեդրոնանան հիմա . ու գրեթէ սրբապիղծ կը գտնեմ Արմենան երբ կը հեղնէ եւրոպական գիտութիւնը եւ արուեստը . «ճըղճիմ քապոթինութիւն մը՝ Արուեստին մէջ . . . Սուս Գիտութիւն մը , գոռոզութեամբ համակ կազմուած , եւ որ մարդս կը յիմարացնէ , եւն» : Գիտութիւնը որ գերագոյն բարեխարն ու բացարձակ տէրը պիտի ըլլայ աշխարհիս , եւ որ միակ կրօնքը պիտի դառնայ վաղուան մարդկութեան եւ զլխաւոր ներշնչարանն արուեստին ու բանաստեղծութեան , եւրոպային զաւակն է : Այն պահուն ուր Արեւելքը ուրիշ բան արտադրած չունի բայց եթէ Համբոներ կամ Թուաններ որ իրենց սփածիներով կամ պոքսըրներով արեւնի քերթուածներ միայն յօրինելու կարող կը հանդիսանան , մարդկութեան մարգարէները , իմաստունները , երգիչները , մոզերը , որոնցմով երբեմն Արեւելքը հւպարտացաւ , Արեւմուտքի մէջ է որ Բարի Գործը կը շարունակեն , հետո՛ւ տիղմէն ու արիւնէն , եւ վեր անոնցմէ : Անոնք այսօր իպսէն , Թալսթոյ , Անաթոլ ճրանս , Մեթերլինք կը կոչուին ու մարդկութեան Աստուածաշունչին գեղեցկագոյն էջերէն մին կը խմբագրեն , Պիո-

թըլո , Գահալ , Վիրիով կը կոչուին ու ընութեան դէմ մարդուն մղած դիւցազնական պայքարը կ'ընդլայնեն , Ռոտէն , Գառիէն , Վերեսչակին , միւսթլէր , Սէն-Սանս , Գոթլէն , Ռէժան կը կոչուին եւ մարդակերտ Գեղեցկութեան սահմանները կ'ընդլայնեն , Պիպըլ , Ժոռէս , Անաէլ , էլիզէ մըքլիւ կը կոչուին եւ մարդկային ընկերութեան ներդաշնակաւորումը կը պատրաստեն : Արեւելքը այսօր այլեւս իրաւունք չունի Արեւմուտքին դէմ յոխորտալու , որովհետեւ բացի ճարտարարուեստի կամ նոյն իսկ արուեստի մէկ քանի հնաւանդ թէեւ միշտ թանկագին արժանիքներէ (չինական անօթներ , ճարտական կերպասներ ու զծագրութիւններ , պարուկական գորգեր , եւն ,) , մտաւորական ու բարոյական կարգին մէջ ոչինչ ունի եւրոպայի դիմացը կանգնեցնելու . իր վերանորոգումը եւրոպայէն պիտի ընդունի . եւ համեստ , խոնարհ , երախտագէտ պէտք է որ ըլլայ եւրոպային հանդէպ . իր այն մէկ քանի անկիւնները (Ճարտն , երգիպոս , Հնդկաստան , եւ արդէն մասամբ Ճաճկաստան) որ վերջերս ընդհանուր մեռելութենէն վեր ցցուեցան կեանքի յանկարծական զարթումով մը , այդ բանին կարող եղան՝ լոկ շնորհիւ եւրոպային , որուն քաղաքակրթութեան մուտքը իրենց մէջ՝ զիրենք ցնցեց , ելեքտրացուց , կերպարանափոխեց : Ու մասնաւորապէս եթէ Արեւելքի մէջ կայ ցեղ մը որ բնաւ երբեք իրաւունք չունի եւրոպային հանդէպ այդ ամբարտաւան լեզուն գործածելու , հայ ցեղն է . նախ՝ որովհետեւ անցեալին մէջ , Արեւելքի մեծ օրերուն , հայ ցեղը՝ հակառակ իր բոլոր ճիւղերուն՝ խոշոր ու ինքնատիպ քաղաքակրթութիւն մը չէ կրցած ինքնիրմէ ստեղծել ու եւրոպային ոչինչ կրցած է ուսուցանել , երկրորդ՝ որովհետեւ արդէն , — ինչպէս յաճախ կրկնած եմ , — Հայը , հակառակ Արեւելքի ցեղ մը ըլլալուն , եւրոպացի է աւելի քան ասիացի՝ իր խառնուածքով , ձգտումներով , կատարած ու կատարելիք դերովը : Հայը պէտք է միշտ ինքզինքը եւրոպական մարդկութեան մէկ հեւաւոր հատուածը նկատէ , եւ գանգատ յայտնելու պահուն իսկ՝ պէտք է գանգատի ոչ թէ իրիւ արեւելցի մը որ Արեւմուտքին նզովք կ'արձակէ , այլ իբրեւ եւրոպական ընտանիքին մէկ դուսը մնացած զաւակը որ տրտունջ կը բառնայ իր մօրը :

Այսպէս Արմենա անարդար է Արեւմուտքին նկատմամբ , ուր միմիայն կը տեսնէ վայելողներու , չհասարակողներու , խաբերաններու եւ խոզերու կամ սողուններու զատակարգը որ վաղանցուկ ու փտտած կեղեւն է , փոխանակ տեսնելու ներքին մասը , մտածող ու զգացող մասը , սիրան եւ ուղեղը , բուն եւրոպան : Բայց Արմենա անարդար է մանաւանդ , երբ Հայցը դժբաղդութեանց հանդէպ եւրոպային անտարբերութիւնը նշաւակած ստեն՝ բոլորովին զանց կ'անէ յիշել այն ազնիւ անհատականութիւնները որ Արեւմուտքի բոլոր եր-

կիրներուն մէջ բողոքեցին Դահիճին դէմ ու պաշտօնական Եւրոպային դէմ որ մեղսակից կը հանդիսանար : (Կլատաթոնի անունը միայն անգամ մը, անուղղակի յիշատակած է , եւ ա՛յ յգչափ) : Ճիշդ որովհետեւ մենք լքուեցանք, անիրաւուեցանք, կոխտուեցանք, մեզի դէմ եղած անիրաւութեանը մասին մեր արձակած բողոքին ամենէն գեղեցիկ , ամենէն ազնիւ ու ամենէն դիտակցօրէն վեհ ձեւը տալու համար , մենք պարտաւոր ենք որ եւէ անիրաւութենէ խուսափել : Ո՛րքան աղւոր պիտի հնչէր Հայուհիի մը բերնին մէջ , անէծքին ու ողբին քով , օրհնութեան բառ մը տիկին Սմբուէթներուն ու Սելվահներուն , Լիբաիւաներուն ու Շարմաններուն , Մաքքոյներուն ու Անաթօլիո Լաթինօներուն , Արեւմտաքի մեր բոլոր քոյրերուն ու եղբայրներուն որոնք սրտանց մեզի հետ եղան մեր ցաւի օրերուն , եւ որոնց յանցանքը չէր եթէ չյաջողեցան մեզ ճողոպրել աղէտքէն :

Ուրիշ կէտ մը որ Արմենայի դրքին մէջ ինծի տհաճոյ կը թուի, իր այն ձգտումն է որով Պրանսայի համար իր զգացած սէրը կը կեղրոնացնէ հին կաթոլիկ Պրանսային , եւ յեզափոխութեան Պրանսային համար իր արհամարհանքն ու ատելութիւնը միայն կը պահէ :

«Պրանսա՛ , կը գոչէ , ազնիւ , ասպետական , վսեմ դիւցազներգութիւններով հարուստ Պրանսա՛ : Պրանսա՛ մեծ ժան ա՛րքքին : Ինչո՞ւ լռեցիր անարգարութեան առջեւ : Ատենօք քու ձայնիդ որոտումները աշխարհ կը ցնցէին , սրտերը թռնո՞ղ կը հանէին , զըռեհիկ հողիներն իսկ կ՛արթնցնէին , ամէն մէկ նեարդը կ՛ելեքտրացնէին , ամէն բան կը յափշտակէին ցնորաբեր , անդիմադրելի աւելնի մը մէջ : Երբ , իբրեւ ազատութեան ախոյեան , իբրեւ Աստուծոյ զինուոր ներկայանալով , երկսայրի սուրդ կը ճօճէիր , փայլակներ կը ցատքէին անկից որ բոլոր բերերուն մէջ կրակ կը վառէին :

«Երբ ոճիրներ , դաւաճանութիւններ գործուէին , ժողովուրդները անձկագին հորիւզոնը կը զննէին . ի՞նչ պիտի ըսէ , ի՞նչ պիտի ընէ Պրանսան՝ կը մտածէին : Իր ամենափոքր բառերը հաշուի կ՛առնուէին , իր ամենէն աննշան շարժումները հետեւողներ կ՛ուռնեային : Վեհափառ իրաւարար մը , դերագոյն Հարցուկ մը, անազնեցիկ Դուշակ մըն էր ան , եւ իր պատգամները մրբիկներ կը յարուցանէին կամ ցնծութիւններ կը ծնուցանէին : . . . Աւա՛ղ , իր խօսքը այլեւս չի թնդար . մեր հինգ հարիւր հազար զոհերը ատոր արիւնոտ ապացոյցներն են : . . . Եթէ Հայուն յօճախը մարեցաւ՝ պատճառն այն է որ «Եկեղեցւոյ անդրանիկ աղջիկը» (*) թողուց որ զինքը ձեռքնականընէ , ուղղէ ու վա-

(*) Պրանսան :

րէ (որպէս թէ քրիստոնեայ Պրանսան անկարգ կնիկ մը ըլլար) Միաբանութիւնը այն մարդոց (*) որոնց մեծ կանոններէն մէկն է «մարդուն չար կամ բարի գործելու ազատութիւնը ճանչնալ» , եւն , եւն»

Ոչինչ աւելի անճիշդ է եւ անիրաւ քան այս դատումը . Պրանսա միշտ նոյն վեհանձն ու ասպետական երկիրը եղած է , ինչպէս թեանց ատենը ինչպէս եւ Մեծ Յեղափոխութենէն ի վեր : Նախկին չըջանին , քրիստոնէական եղբայրակցութեան դադափարն էր որ զինքը մըղեց Եւրոպային հրաւէր կարգալ՝ Արեւելքի քրիստոնեաներուն օգնութեան երթալու . Յեղափոխութենէն յետոյ , մարդկային եղբայրութեան գաղափարն էր որ զինքը վառեց իր ուժերը բոլոր բռնաւորութիւններուն դէմ արձակելու , լուծէ փրկելու համար բոլոր կեղեքուածները : Եւ այս երկրորդ շրջանի Պրանսան աւելի մեծ է քան առաջին շրջանինը , որովհետեւ Յեղափոխութեան Պրանսային պայքարը աւելի ընդարձակ , աւելի մաքուր , աւելի մարդկային իտէպլէ մը կը ներշնչուէր , եւ աւելի ալ բեղմնաւոր եղաւ , քանի որ ինչպէս թեանց պատերազմները ապարդիւն մնացին , մինչդեռ Յեղափոխութեան Պրանսային քարոզած «ազգայնութեան սկզբունքին շնորհիւն է որ այս դատումը մէջ իրենց գերութիւնէն փրկուեցան շատ մը ազգութիւններ . եւ եթէ մենք օր մը ազատ Հայրենիք մը ունենանք , ատի պիտի ըլլայ նորէն իշնորհս Յեղափոխութեան Պրանսային արեւմտեան քաղաքակրթութեան մէջ ցանած ազատական սկզբունքներուն :

Վերջին դիտողութիւն մըն ալ՝ Արմենայի ոճին մասին : Այդ ոճը , որ , տրուած ըլլալով հեղինակին ազնուական ու վեհանձն խառնուածքը , կրնար ու պարտէր անընդհատօրէն մաքուր , խորխտ ու մեծաշուք գեղեցկութիւն մը պահպանել , յաճախ կը լրջօրէն գուհիկ ու ապատեհ «առկոյ» ի մը ներմուծումովը , եւ շարագրութիւնն իսկ , որ ա՛յնչափ կուռ ու կատարեալ է գեղեցիկ հատուածներուն մէջ , յաճախ անախորժ ընտանեկանութիւններու , սրճաբանի խօսակցութեան ցատքաբառերու , զուարճախօս լրագրի վարնոց սրամտութիւններու կը զիջանի . եւ այսպէս , դարմանալի հակասութեամբ մը , Արմենա կ՛երթայ յաճախ փոխ կ՛առնէ կոպիտ , ցեխոտ , չողիքոտ , թարախատ բառերը բողբերով , դիւանապէսներով , դրամատէրներով , մակարոյձներով , կաւատներով ու դատարկապորտներով խճողուած պուլվատին՝ մինչդեռ ճիշդ այդ պուլվատին նկատմամբ իրզգուանքը դուրս թափելու համար այդ գիրքը գրելու մղուեր է :

Սակայն , այս բոլոր դիտողութիւնները զիս չեն արգիլեր Արմենայի գիրքը նկատելէ իբրեւ ամենէն հզօր , ամենէն տարօրինակ , ամենէն վրդովիչ գրքերէն մէկը որ կարդացած

(*) Պրանսա-Մասնները :

ըլլամ^(*) : Ու թերեւս ալ այդ բոլոր թերու-
 թիւնները , այդ հակասութիւնները , այդ ան-
 կապակցութիւններն ու աննորոգաշնակու-
 թիւններն են որ , խառնուած , հալած , ձուլուած ,
 յուզմունքի ամենի կոհակին մէջ որ գերքը կ'ո
 ղողէ , անոր այդ վրդովիչ ու արտակարգ հան-
 դամանքը կը կազմեն : Պէտք է ընդունիլ խառ-
 նուածքները այնպէս ինչպէս որ են , եւ վերինք
 դատել իրենց բնութեանը համեմատ . կարեւո-
 րը՝ կենդանութիւնն է , ինչ ձեւի մէջ ալ յայտ-
 նուի ան . եւ Արմենայի գերքը աւելի
 է կեանքով . կրնանք անոր մորթին ու հա-
 գուստին վրայ մեր առարկութիւնները ներ-
 կայացնել , բայց անոր մէջէն վազող արիւնը
 տաք է եւ կենսախայտ . եւ այդ կը բաւէ որպէս
 զի սիրենք այդ գերքը : Ու վերջի վերջոյ ,
 առաջին տպաւորութեան ընդհարումէն յետոյ ,
 երբ ամբողջութեանը մէջ նկատենք այդ գերքը
 եւ ջանանք զայն ըմբռնել այն հոգեկան ու մը-
 տաւոր վիճակին մէջ ուր երկնուած է ան ,
 կ'ըմբռնենք անոր տրամաբանութիւնը որ բարդ
 է բայց ոչ զուրկ միութենէ : Արմենա հոգին ու-
 նի Միջին Դարու միաութեան մենակեացնե-
 ըուն , այն խտտոգի սրբուհիներուն կամ դաժան
 ճգնաւորներուն որոնք իրենց վանքին մթու-
 թեանը կամ իրենց անսպասին միտելութեանը
 մէջէն աչու ընին գերերկրաւոր գեղեցկութեան
 մը յառած , պիղծ , տգեղ ու անարգ կը տեսնէին
 ամէն ինչ որ աշխարհի կեանքը իրենց ոտքե-
 ըուն տակ կը փռէր , եւ որոնք իրենց զգուանքն
 արտայայտելու համար հոգեղէն կեանքին դէմ
 ու իրենց անէծքը երկրի մեծերուն ու բռնա-
 ւորներուն դէմ , աշխարհիկ լեզուին ամենէն
 բիրտ , ամենէն բարբարոս , ամենէն գարշահոտ
 բռնաբար մերթ փոխ կ'աննէին : Անոնց պէս , Ար-
 մենա կ'առէ պնդամտութիւնը , սալոններուն
 կեղծիքը , աշխարհիկ կեանքին բոլոր արուես-
 տակութիւնները , մտքի մարդոց բոլոր յա-
 ւակնութիւնները . իր ոգեպաշտութիւնը զինքը
 կը մղէ մինչեւ գարշիլը «միս ուտելու» սովորու-
 թեան , զոր ինքը՝ «ղիակ ուտել» կ'անուանէ ,
 եւ զոր կը համարի ոճիր մը կեանքին ու բը-
 նութեան դէմ գործուած . զգուանքով կը խօսի
 քորսէին վրայ , որ Աստուծոմէ կերտուած ձեւերը
 կը ձմրթիկէ , կը տգեղցնէ , կը ծամածուէ . կը հայ-
 հոյէ Վոլթէնեան հեզնութեան , Նիցչէական մե-
 ծամուրթեան , Ռընանեան սկեպտուութեան

(*) «Այս օրերս կարգացի , կը զբէ «Լա Նուվել Ռովիւ» ի
 մէջ տիկին Ժիւլէթ Ատամ՝ մեծանուն Ֆրանսացի քա-
 զաքաղէտ գրագիտուհի , արաստվոր գերք մը որուն
 հեղինակը աղջիկ մըն է՝ Լաին Ինծի , եւ նոյն իսկ ինչ
 որ աւելի զարմանալի է՝ Ռիւելուհի մը . . . Իրքեք չեմ
 տեսած այդքան աւելի՝ այնքան չափաւորութեան մի-
 ացած : Իրգիծանքն ու յուզմունքը այնտեղ իրարու կը
 խառնուին , ցնցող տպաւորութիւն մը թողլով : Ասէն ինչ
 որ այս դարուս մէջ մտածուած ու գրուած է՝ այնտեղ
 շոշափուած է՝ ինքնավստահ ձեւքով մը , փայլուն գրչով
 մը արտայայտուած՝ ճարտար կամ անակնկալ ձեւի մը
 մէջ : Կարելի է անոր յօրինուածքը քննադատել , մէկ
 քանի գաղափարներուն մասին վերապահութիւններ ընել ,
 բայց անկարելի է ուրանալ թէ այդ գերքը վարմացնող
 ու մտքաբարկան գործ մըն է :

զէն կը քարոզէ պարզ , միամիտ , նախնական ,
 մաքուր , «աւետարանական» կեանք մը , որ
 սահի՛ իրեն նպատակակէտ ունենալով երկնաւոր
 կայաններուն մէջ ժամանումը :

Ահաւասիկ այն նողկանքի պատկերը որով
 Արմենա կը ներկայացնէ արգի Եւրոպան .

« . . . Այս ղեղումները , այս ամէն լուծի գո-
 ոող թօթափումները , այս մարմնեղէն վայ-
 ելմանց հրատոչոր ծարաւը , վաստակի , դրա-
 մի , շահի , ապօրինի բաներու այս արջառա-
 քաղցութիւնը , սա թղթախաղը , «սրտո»ները ,
 «քուս»երը , Պորսայի յափշտակութիւննե-
 րը , սա ցածութիւնները , շորթումները , աւա-
 բառութիւնները , սա բանամայական սե-
 բուղիները , սա բոլոր գործի մարդիկը , կա-
 տաղիաւազակներ , եւ սանձարձակ սա պեր-
 ճանքը որ ամենէն ողորմելի խեղճութեան
 կ'առնի թերանայ ու կ'անարգէ զայն . շնա-
 կանութիւն , ժխտում ամէն բանի , անուիլի
 սարսափ մահուրնէ , ունայն վերացումներ ,
 անսարքերութիւն , գողութիւն , վախկոտու-
 թիւն , ջախջախիչ տուրքեր , անյազ արքու-
 նագրաւում , պիւտճէ , պատերազմական զար-
 հուրելի ու անցեալին մէջ անձանօթ հնա-
 ըումներ . արդարութեան դէմ լկտի մեղան-
 չումներ , այնպէս որ այսինչ երկրին մէջ
 կարելի չէ գիտնալ թէ օրէնքը ոտնակոխ ե-
 ղա՞ծ է , ոչ այն պալատին մէջ ուր օրէնքը կը
 հիմնուի , ոչ այն պալատին մէջ ուր օրէնքը կը
 գործադրուի : Ըղճիմ քապոթիւնութիւն
 արուեստներու մէջ , յարաբերութեանց մէջ ,
 սալոններու մէջ . բեմական խաղեր՝ ջղերուն
 խաղտումին համար շարահիւսուած . բարո-
 յական զգուշապահութեան բացարձակ տգի-
 տութիւն , բազմակնութիւն , մորմոնակա-
 նութիւն , բազմայրութիւն , ամուսնական
 կապերու թուլացում , անկարողութիւն ,
 ամուլ էգիր , խարդախուած , նենգուած , թու-
 նաւորման հասնելու չափ խաբեբայուած
 սննդատուութիւն մը . գիւղիկով շինուած
 ուտեստ մը , ճաշակելիքի մեղեխսիրութիւն
 մը , մարդկային սաամոքաներ՝ գիւղականարաննե-
 րու փոխուած . . . Յլփացածներուն փորո-
 ախքին մէջ կարծրութիւն : որ իրենց կ'ար-
 գիլէ հացերնուն պատառիկ մը փրցնել տալ
 անօթութեան սասկոյններուն . սպասաւոր-
 ներ որոնց հետ անարգանքով , անհոգու-
 թեամբ կը վարուին , եւ որոնք բնականա-
 բար անպարկեշտ են եւ առանց անձնուր-
 րութեան . տէրեր , որոնք իրենց ծառաներէն
 կը պահանջեն առաքինութիւններ զոր ի-
 բենք չունին : Դիտուեն որ ամէն բան թր-
 րանոցէն կ'անցընեն՝ նիւթը գննելու համար ,
 այն աստիճան որ ա՛լ իրենց աչքերուն մէջ

տեղ չի մնար զայն որդեորդ իմացականու-
թիւնը նշմարելու: Շատ լաւ կը ճանչնան բը-
նակարանը եւ շատ գէշ՝ բնակիչը. ծառը ձմեռը
միայն կը տեսնեն. անոր ծագիկն իրենց տեսո-
ղութենէն կը վրիպի: Առւտ գիտութիւն մը,
համակ գոռոզութենէ կազմուած, այնպիսի
գիտութիւն մը «որ մարդս կը յիմարացնէ» .
... Բնազանցութիւն մը որ ուրիշ բան չէ
բայց եթէ Յոնիական, Ելէական կամ Անաբ-
սաբորեան վարկածներուն անգագրուած յեղ-
յեղանքը (ատկից դուրս չեն կրնար ելլել
արդէն): Փառքեր որ կորզուած են շնորհիւ
այն իրողութեան որով «ժողովուրդները
միջոտ ներողամիտ են անոնց համար որ ա-
մենէն կարծր գոհողութիւններու կ'ենթար-
կեն զիրենք, այն միակ պայմանով որ
յաջողութիւնը վարձատրէ այդ գոհողու-
թիւնները»: Ախտադարմանութիւն մը որ
ուրիշ բան չէ բայց եթէ խարխափող ու
մարդասպան քիմիագիտութիւն, բացի ա-
ռողջարանութեան եւ հականեխութեան մէկ
քանի պատուէրներէ . գրեթէ ոճրագործ վի-
րաբուժական յանդգնութիւն մը, որ կը
կտրատէ, կը յօշէ, կ'անդամահատէ, կը
փրցնէ ու կը քաշկուտէ . . . Պճնազարգեալ
կիներ, որ չըջազգեստնին խշրաացնելու
համար ջանք կը թափեն, պաճուճուած, սե-
թեւեթուած, մանր մունր զարգերով, շնոր-
հալի քուրջերով ծածկուած, խնկարկուած,
փառաւորուած, բայց դատարկամիտ, շաղ-
փազի, անտանելի կերպով նանրախօս, պա-
րապ ուղեղով՝ հակառակ սքանչելի ընդու-
նակութիւններու, կամ ծնգած ներդեւած՝
ինչպէս բարբարոսօրէն պնդասեղմուած ի-
րենց մարմինը, ամբողջապէս անգիտակ ի-
րենց վսեմ ճակատագրին: Եւ աւելի քան
երբեք խորապէս ստորնացած, ստրկացած,
արհամարհուած . . . Պոռնկութիւնը ամէն ան-
կիւն թոյլատրուած, հովանաւորուած, զար-
գացած, կատարելագործուած, բացէ ի բաց
ծանուցուած, ամէն քսակի յարմարցուած
(պէտք է բան մը ընել վերջապէս զինուո-
րականներուն համար), ամէն դասակարգնե-
րուն մէջ տարածուած, պետական հաստա-
տութեան մը կարգը բարձրացած: Անամօթ,
նոյն իսկ եղեռնական բողբոջութիւն մը,
որ իր մահացու ցանցերը մինչեւ անդամ
նուիրական մանկութեան վրայ կը նետէ:
«Հրեշտակ պատրաստող» կնիկներ որոնք
իրենց շահաբեր գործը կը կատարեն այդ
բաներուն դէմ միջոցներ ձեռք առնելու
պաշտօն ունեցող իշխանութիւններուն գրե-
թէ հայրական նայուածքին տակ: Ապակա-
նարար վիտանք մը նարկիսներու, հակաբնա-
կան տարփամոլներու՝ երկու սեռէն ու ամէն

տարիքէ, թունաւոր սունկեր որոնք կը բազ-
մանան երբ բարոյական սանձարձակու-
թիւնը իր գազաթնակէտին հասած է: Ոճրա-
գործութիւն մինչեւ այն աստիճան որ տը-
ղաքներ իրար կը սպաննեն. յիմարութիւն,
ու մասնաւորապէս անճնասպանութեան յա-
րաճուն խենթութիւնը, սատանապաշտու-
թիւն, ապիրատութիւն՝ որոնք մոլեգին
«քրեշնտոյ»ով մը ու զարհուրեցուցիչ համե-
մատութիւններով կ'աւելնան: Ճաթրուք,
խախտուածք, խանգարում, քայքայում, լղբ-
ճուկութիւն, փիսութիւն, խոզութիւն, վա-
տուութիւն, մազաս, թուք, շեռ՝ ծայրէ ծայր:
Այս դարուս վերջին հոնտիւնին հասած
Եւրոպա՛, ահա քու բարբերուդ իրական,
վաւերական պատկերը, ահա ինչ որ քու
մէջդ կը տիրէ. եւ ես եմ, Ասիացի մը, բար-
բարոս, անգրագէտ ալջիկ մը, որ ասոնք քու
ծեր քաղաքակրթեալի ծեփուած, գաճուած
երեսից կը թքնեմ: Կը կարծես որ մենք
Հայերս՝ քեզի համար յարգա՞նք կրնանք
ունենալ: Մեզի համար ի՞նչ ըրիր, գարշելի՛
խորթ մայր: Մեզ քենէ զատող փակոցը մեր
կործանած երգիքներուն փլատակներովը
կազմուած է. քու եւ իմ հայրենիքիս մէջ-
տեղը մեր մեռելները, մեր անդամանելի
աւերակները կան զիջուած . . . »

Եւ հին միանճնուհիներուն պէս, Արմե-
նա ունի միանգամայն անպարագիծ ու ան-
սպառ գործին ու գթութիւնը որ անոնց
կուրծքը կը լեցընէ՛ն՝ տկարներուն, պղտիկնե-
րուն, ճզմուածներուն, տառապողներուն համար
եւ խելայեղ պաշտումը ամէն բանի որ մա-
քուր, գերեզկրաւոր, ներքին, հոգեկան, խոր-
հրդաւոր է, ու մշտական երկրպագութիւնը արե-
շիւ մտքին՝ չտեսնուած, գուշակուած, բաղձա-
ցուած, հեռաւոր ու համայնասփիւռ Աստուծոյն
համար: Ու այս բոլորը արտայայտելու համար
Արմենա կը գտնէ ամբողջ հոգիով շինուած այն
նոյն բացատրութիւնները զոր ունէին միջնա-
գարեան երազանքին օրերուն տժգոյն ու
ցաւազին կոյսերը:

«Բրիստոս պիտի լուծէ մեր վրէժը, կը
սաղմոսէ՛ իր գիրքն աւարտելու համար: Ե-
րէկուան, այսօրուան քամահրուածները,
մոռցուածները վաղը պիտի փառաւորու-
ին . . . Մենք Աստուծոյ կ'աղօթենք ոչ թէ
այլասեռած քաղաքակրթեալներու պէս, այլ
սիրով համակուած . . . Հայաստանը, իր դա-
ւակներուն, իր հաւատքին, իր օրէնքին մէջ
արիւնոտած, ամէն մէկ անդամը կտրատուած,
ցաւէն կը մռնչէ. ա՛լ արցունք չունի թա-
փելու . «դժբաղդութեան գինովութիւնը
խելքը գլխէն տարեր է»: Բայց օր մը պիտի
արթննայ իմ հայրենիքս . դողացէ՛ք, որով-

հետեւ ձեր վրայ պիտի կաթկթի, գունատ Արեւմտաքի վա՛տ պետութիւններ, արիւնը որ իր մարտիրոսի ճերմակ զգեստներէն կը վազէ : . . Յիսուս աշխարհիս դատաւորը պիտի ըլլայ՝ երբ հասնի կատարածը ժամանակին. ան կոչուած է ազգերուն դատաւորը, աշխարհիս գատաւորը, ողջերուն ու մեռածներուն դատաւորը : Սուրբ Հայաստանը, իր սուգերը, իր որբերը, իր ձագերուն ձագերը համբելով, աչքերովն այդ բոլոր աւերակներու կուտակումներն ընդգրկելով, մէկիկ մէկիկ հաշուելով իր կրած բոլոր մահացու անարգանքները, — եւ մեծ, զեղեցիկ, վեհափառ, նուիրագործուած՝ ցաւէն, որ իր հոգին կը քարացնէ, գէմքը կը մարմարացնէ, — ծունկի պիտի գայ եւ Աստուծոյ երկընցընելով իր արիւնթաթախ թեւերը զոր դուք կտրտեցիք, սապէս պիտի աղօթի, անցնողներուն համար .

« Գթա՛ , Տէր՝ Նախ իմ դահիճներուս , որովհետեւ անոնց ոճիրները գիրենք թերեւս յաւիտեանապէս կը հեռացնեն քու բարութեան, արդարութեան, անբռնութեան խորաններէդ :

Գթա՛ , Տէր : Գթա՛ իմիններուս որ մնացին օրհնէ՛ այդ ձագուկները, քու արարածներիդ, իմ նահատակուած որդիներուս ու աղջիկներուս զաւակները : Անոնց չըթուէքէն , մտքէն , սրտէն հեռացուր ստութիւնը , վրէժխնդրութիւնը , ատելութիւնը : Թող ըսին , ինչպէս որ՝ կ'ըսեմ, ես՝ իրենց մայրը, — Գըթութի՛ւն , ո՛վ Տէր : Ողորմութիւն , օրհնութիւն , միաբանութիւն , ո՛վ տէր , իմ հոգեվարք խեղճ ժողովրդիս . կտորէ՛ վերջապէս իր զերութեան կապանքները . տո՛ւր իրեն վերջապէս սուրբ , անմահ Ազատութիւնը . անոր արդարութեան ծախաւը յագեցուր քու Արքայութեանդ կենսախայտ աղբիւրին մէջ »

Ես կը բաղձայի որ իր յառաջիկայ գրքին մէջ մեր ժամանակին ու մեր հոգիին աւելի մօտ գտնէինք Արմենիան : Կարող է ատոր : Իր միջնադարեանութեանը մէջ արդէն շատ տարբեր կը գտնեմ մեր մթնոլորտէն . ու իր միտքը, տարօրինապէս ձապուկ , այդ անցեակի կեղեւնի ամբողջապէս թօթափելու ատակ կը թուի ինձի : Ուժ մըն է որ կը յայտնուի այս նախընծայ գրքով . ես կը ցանկայի որ այդ ուժը դէպ ի հին օրերը սաւառնումներով իր թափին լաւագոյն մասը չկորսնցնէր այլեւս : Մենք հիմա իր բոլոր անդամներուն մէջ ջախջախուած , ամբողջ մարմինը վէրքերով ծածկուած ժողովուրդ մըն ենք , կարօտ՝ հոգեկան խրախոյսի, կազուրբիչ ձայներու, արի եւ ազնիւ

ճիգերու : Անձնուէր ձեռքեր պէտք են մեզի՝ մեր վէրքերը կապելու համար, ներդաշնակ ու հլօր ձայներ՝ մեր ցաւը աշխարհին երգելու , ու կրակոտ հոգիներ պէտք են մեզի որպէսզի մեզ սրտապնդեն պայքարին մէջ զոր պարտաւոր ենք մղել, դժնդակ ու մութ ձագբաներուն մէջէն, ոչ թէ « երկնաւոր կայանը » հասնելու համար որ նոյն իսկ եթէ գոյութիւն ունենար, բաւական զոհացում մը պիտի չըլլար մեր հոս քաջած չարչարանքներուն փոխարէն , այլ հասնելու համար մեր երազին այստեղ , մեր հոգին վրայ, մեր ձեռքովը, մեր եղբայրներուն ու մեր զաւակներուն համար լիալիբ ու խրոխտ իրականացումին : Աստուած շատ հեռուն է, եւ Արմենիա՝ եթէ արդար ըլլար՝ անոր ալ քիչ մը մաս պիտի հանէր այն անէծքներէն զոր միջակ ու չար դիւանագէտներու խմբակի մը դէմ կ'արձակէ, քանի որ ա՛ն ալ լուռ ու անտարբեր մնաց զինքը դարերէ ի վեր բազկատարած աղերսողամբողջ ժողովրդի մը խողխողումին առջեւ :

Արմենիա . որ այնքան զորովալից խանդաղատանքով մը, այնքան մսի ու արիւնի սիրով մը կը գուրգուրայ իր ցեղին վրայ , պիտի ըմբռնէ այս հրաւերին նշանակութիւնը : Կնոջ մաքուր , անշահախընդիր , դաշնակաւոր ու կաթոգին ձայն մը որ հիմա կորովի , եզբայրութեան , քաջութեան եւ յոյսի երգը հնչեցնէր մեզի, ամենէն անգին բարիքը պիտի ըլլար մեզի համար : Այս Միանձնուհիի գրքէն յետոյ պիտի սպասենք ուրեմն Արմենայէն՝ Քրոջ Գիրքը , վէրքեր կապող ու վհատ սրբաները ամբապնդող Քրոջ Գիրքը :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

ՔԻԻՐՏԸ

— 0 —

Հայաստանի ամենախուռ անկիւան մը զաւակ ըլլալով եւ Քիւրտի հեռ ունեցած բազմազան յարարերութեամբ անոր բնաւորութեանը, գաղափարներուն ու գործերուն ծանօթ , կաբեւոր կը համարիմ, այժմեան մեր տագնապալի օրերուն մէջ, մեր եւ այդ տարրին մէջ ծագած ատելութեան աստիճանի հասնող գժտումին կորստաբեր տխուր հետեւանքներուն հանդէպ ,

ուրուագծել մեր վաղեմի գրացիայան ու մը-տերմական յարաբերութիւններն եւ ցոյց տալ թէ մենք՝ ընդհանրապէս ո՛րքան սխալ ենք հասկցեր Քիւրտն իր էութեան մէջ :

Մենք մեր ձեռնարկած ազգային կենսական խնդրոյն մէջ ցանկալի արդիւնքի մը հասնելու համար, այնքան պէտք ու պարտք ունինք ուսումնասիրել մեր հարեւան ցեղերը, մասնաւորաբար Քիւրտը, որքան վիրաբուժ մը վիրաւորի մը հետ գործ ունենալու համար անդամնազննութիւն ուսումնասիրած ըլլալու պէտքն ու պարտքն ունի : Պէտք չէ վերջապէս անգիտանալ որ Քիւրտը՝ որ շատ հին ժամանակներէ ի վեր սփռուած է մեր հայրենեաց ամէն մէկ անկեան մէջ, մեր կողքին, մեր մէջ եւ մեզմով ապրած է, կեանքի ինչ ինչ պայմաններու մէջ անխզելի կապերով այսօր մեր ամբողջութեան անդամ մը կը կազմէ :

Քիւրտը՝ տգիտութեան թանձր մատխուխի մը մէջ թաղուած, զուրկ գրաւոր մատենագրութենէ, չունի զեռ ոչ ազգայնութեան եւ ոչ հայրենիքի որոշ գաղափարը, չգիտէ ո՞վ են եւ զած իր նախահայրերը եւ ո՞ւր իր որբանը : Մենք՝ որ կը թուութեան բաւական բարձր աստիճանի վրայ կը գտնուինք, ցաւալի է խոստովանիլ որ մենք ալ որոշ կերպով զեռ չենք գիտեր անոր պատմութիւնը : Կը շատանանք միայն մէկ քանի պատմութեան հետախոյզներու յայտնած սա յեղեղուկ կարծիքովը թէ՛ Քիւրտը Հայոց եւ Մարաց խառնուրդ նոր ցեղ մըն է», բայց թէ ե՞րբ կամ ի՞նչ հանգամանքներու տակ այս խառնուրդը տեղի ունեցած է եւ կամ այդ զանգուածի գունափոխուած տարրը Հա՞յն է թէ՛ Մա՞րը, գլխաւորաբար, այս մասին որոշ ոչինչ գիտենք. եւ սակայն, այս հարցերու լուծումն ու պարզաբանումը մեզ համար խիստ շահեկան է : Սահմանափակ կըրթութեամբս յաւակնութիւն չունիմ հոս այս դժուարին խնդիրներու լուծման մէջ միւրձիլ միակ նպատակս է կարող անձանց լուրջ ու չաղրութիւնն ու ջանքերը հրաւիրել այս մասին :

Քաղաքակրթութեան տեսակէտով, Քիւրտը ունի հետեւեալ երեք բաժանումները — վրանաբնակ կամ թափառիկ, կիսա-հաստատաբնակ եւ հաստատաբնակ : Առաջին երկուքը բաժնուած են ցեղերու, «Աշխրթ» (քաջատոն) մակդիրով, եւ կը կառավարուին «էլ-աղասի»ներով (ցեղապետ), իսկ վերջինները կը կառավարուին «չես»երով (կրօնապետ) : Հաս-

տատաբնակները կը վարեն նահապետական տափակ ու խուլ կեանք մը եւ կը կազմեն Քիւրտի վատասիրա մասը : Ասոնք են որ միշտ հլու հպատակութիւն մըն են ցոյց տուած թրքական իշխանութեան եւ անոր զինուորներ մատակարարած : Իրենց տգիտութեան մէջ ասոնք Քիւրտի խորամանկ դասը կը կազմեն եւ կը գործեն օձու սողոսկուն, գաղտագողի բնաւորութեամբ : Աշխրթներն են որ վարած են միշտ ուսումնասիրութեան մասնաւորապէս արժանի կեանք մը, ուստի յաջորդ տողերս ալ ասոնց պիտի վերաբերին գլխաւորաբար :

Շատերէն Քիւրտը ճանչցուած է «վայրենի», եւ շատերէն ալ քիչ մը մեղմացած «կիսավայրենի» տողովորդ. ես անհամարձակ կերպով պիտի ըսէի՝ աւելի ճիշդ կը լինէր ընդունիլ «վայրենացած» հասարակութիւն : Վայրենին չունի բարոյական եւ զուրկ է գեղեցկի ու բարւոյ ճաշակէն : Մինչդեռ Քիւրտը՝ թէպէտեւ զուրկ գրականութենէ, սակայն ունի մարդկային իւրաքանչիւր բարեմասնութեան համար պարզ, գողտրիկ եւ վսեմ բանաւոր արտայայտութիւններ, որոնք կանոնաւոր գրականութեան մը գոհարները կրնան կազմել եւ կատարելապէս կը բնորոշեն զինքը : Քիւրտը բարոյական մարդ է իր խորին տգիտութեանը մէջ : Կա՞յ արդեօք բարոյագիտական աւելի բարձր, աւելի վսեմ արտայայտութիւն մը քան Քիւրտի այս պաշտամունքը՝ «Ատապ ըժ տին չէղըրա» (կը թուութիւնը կրօնքէն լոււագոյնն է), եւ կամ «Ատապ ու հայեա նիվիէ տին ա» (կըրթութիւնն ու պարկեշտութիւնը կրօնքի կէսը կը կազմեն) :

Բաճֆի՛ որուն քաջ ծանօթ էին յարատեւ բնութիւնէն Հայու կրած այլասեռումն ու գոնափոխումը, մտնելով քրդական ամենամթին խաւերուն մէջ եւ ծանրախոն կերպով ուսումնասիրելով նշմարած է այնտեղ Հայու ամենաբնտիր մասին, մարած հայ նախարարութեանց հետքեր :

ԼՕՇՏԱԿ

(Շս րունս կեղի)



ԵՐԵՎԱՆՅՔ ՄՔ

Ի ՊԱՏԻԻ ԼԵՒՈՆ ԲԱՇՍԼԵՍԼԻ

— 00 —

Պակասաւոր ու սքողեալ նկարագրութիւնը որով «Նոր Կեանք»-ի բարեգեան թղթակիցը կը ներկայացնէ «Բաշալեան երեկոյթը» որ տեղի ունեցաւ Մայիսի սկիզբներն ի Բարիզ, զիս կը ստիպէ իր ճշմարիտ նկարագրովը ցոյց աւելայր հետաքրքրաշարժ դէպքը, որով՝ առանց այս պարագային պիտի չլիջանէի զբաղիլ : «Նոր Կեանք»-ի թղթակիցը կ'ըսէ թէ իմ նախագահութեանս տակ ի պատիւ Բաշալեանի երեկոյթ մը տեղի ունեցած է Բարիզ, եւ «թէ այդ երեկոյթի երկրորդ մասին մէջ՝ Պ. Սուրէն Պարթեւեան, համազրական (!) ուսումնասիրութեամբ մը որոշած է Լեւոն Բաշալեանի տեղը հայ արդի գրականութեան մէջ» : Պ. Պարթեւեան կրնայ որ մը հրատարակել իր ուսումնասիրութիւնը, եւ այն ատեն հայ հասարակութիւնը, որ չի գիտեր այս պատմութեան ներքին մանրաւանութիւնները, պիտի զարմանալի գտնէ որ այսպիսի բանախօսութիւն մը իմ նախագահած մէկ երեկոյթիս մէջ արտասանուած ըլլայ : Անօգուտ չեմ նկատեր ուրեմն այժմէն լուսաւորել մեր գրական պատմութեան այդ քիչ մը կնճոտ ու այլանդակ զրուագին հոգեբանութիւնը :

Իմանալով որ Բաշալեան Բարիզ կեղծ է քանի մը շարքի մնալու համար, Բարիզի հայ Ուսանողաց Միութեան Դիւանը գաղափարը ունեցեր էր ի պատիւ իրեն գրական երեկոյթ մը սարքելու : Բաշալեան իմ հին բարեկամներէս մէկն է, իրեն հետ ունեցած եմ ութը տասը տարուան գրական camaraderieի շատ սիրուն յարաբերութիւններ, իր գրականութեանը համար — հակառակ խտնուածքի եւ գրական դաստիարակութեան հիմնական տարբերութիւններու, — եզրայրական համակրութիւն մը զգացած եմ եւ երբեք առիթ չեմ փախուցած զայն հրապարակաւ յայտնելու : Բայց այս Բաշալեանի ի պատիւ երեկոյթի մը կազմակերպումին լուրն ինծի բերողները կ'աւելցընէին թէ արդէն որոշուած էր որ այդ երեկոյթին մէջ Պ. Սուրէն Պարթեւեան Բաշալեանի գրականութեանը մասին տեսութիւն մը պիտի պարզէր : Անմիջապէս յայտնեցի որ այս պարագան անկարելի կը դարձնէր այդ երեկոյթին իմ ներկայութիւնս : Պ. Պարթեւեանը մեր գրականութեան նորագոյն շրջանին ամենէն հզօր դէմքն է՝ «Անահիտ»ի Ձարեհ Վարսամեանին եւ «Նոր Կեանք»-ի «Պարոյր»ին հետ : Խորագրաց

գիտողութեան ու ջղուտ քնարերգութեան այն շարքը զոր «Հայ Տառապանքէն» ընդհանուր տիպոսին տակ հրատարակեց «Նոր Կեանք»-ին մէջ, արդի հայ մատենագրութեան ամենէն ներուժ արտագրութիւններէն է : Բայց այդ բարձրօրէն օժտուած գրագէտին մէջ գոյութիւն ունի մարդ մը որուն բարոյական տիպարին ուսումնասիրութիւնը հայկական teratologieին ամենաշահեկան գլուխներէն մէկը պիտի կազմէ : Միջազէպ մը, որ ինծի առիթ հայթաթեց երկարատեն ինձմէ ծածուկ մնացած այդ նկարագիրն իր անսքող արհաւիրքին մէջ տեսնելու, զիս մղեց այդ պարոնին հետ վերջնապէս խզել յարաբերութիւններս : Իրեն հետ ո եւ է առիթի մէջ ո եւ է հպում անկարելի էր ուրեմն ինծի : Այսպէս իր բանախօսութիւնը լսելու ստիպուած ըլլալս՝ ինքնին զիս պիտի արգիւէր «Բաշալեան երեկոյթին» երթալու : Եւ հոս՝ արգելքը կը շեշտուէր սա նկատումով ալ որ վստահարար գիտէի առաջուց թէ իր ուսումնասիրութիւնը Բաշալեանի գրականութեանը մէկ վերլուծումն ըլլալէ աւելի իմ գրականութեանս դէմ յարձակում մը պիտի ըլլար :

Ուսանողաց Միութեան Դիւանին կողմէն Պ. Եարճանեան եկաւ ինձմէ խնդրելու որ ներկայ չգտնուելու որոշումս ետ առնեմ եւ առաջարկեց որ նախագահեմ այդ երեկոյթին : Ըսի որ ինծի համար ամենամեծ հաճոյք մը պիտի ըլլար նախադրեմ ի պատիւ Բաշալեանի տրուած երեկոյթի մը, բայց թէ Պ. Պարթեւեանին բանախօսութիւնը անկարելի կը դարձնէր ինծի այդ առաջարկութիւնն ընդունիլ : Պ. Եարճանեան պատուոյ խօսք տուաւ ինծի թէ Ուսանողաց Միութեան Դիւանը (որ արդէն կազմուած էր մէկ քանի նախկին աշակերտներէս ու մէկ քան մտերիմ բարեկամներէս), ամէն զգուշութիւն պիտի ձեռք առնէր որպէսզի այդ ատենաբանութեան մէջ ո եւ է անպատշաճ ակնարկութիւն չգտնուէր : «մենք friponներ (սրբիկայ) կ'ըլլայինք, ըսաւ, եթէ ձեզ հրաւիրելէ յետոյ, թոյլ տայինք որ ուրիշ բանախօս մը նոյն երեկոյթին մէջ ձեզի դէմ ո եւ է անախորժ ֆուզ արտասանէ» : Բացատրեցի որ իմ գիտաւորութիւնս իմ մասին անախորժ դատաստան մը յայտնելէ արգիւել չէր Պ. Պարթեւեանը որուն իրաւունքն էր արտայայտել ինչ որ կը մտածէր այս կամ այն գրագէտին համար, բայց թէ յարաբերութեանց այն վիճակին մէջ ուր կը գտնուէի Պ. Պարթեւեանին հանդէպ, ինծի համար անհնար էր իրրեւ նախագահ խօսք տալ պարոնի մը որուն բարեւ տալէ զազրած էի :

Երեւակայեցի որ այս տեսակցութեան յետոյ Ուսանողաց Միութեան Դիւանը յստակ ու աներկղիմի որոշում մը պիտի տար : Ապշու-

Թիւնս մեծ եղաւ երբ քանի մը օր յետոյ տեսայ որ Դիւանը ցրուած էր (առանց իմ վերջնական հաւանութիւնս առնելու) հրաւիրագիր մը որ կը ծանուցանէր ի պատիւ Բաշալեանի երեկոյթ մը իմ նախագահութեանս տակ եւ Պ. Պարթեւեանի բանախօսութեամբ: Փութագի նամակ մը գրել Դիւանին խնդրելու համար որ ուրիշ մը յանձնեն նախագահութեան պաշտօնը: Նամակս զրկելու վրայ էի, երբ հանդիպեցայ Բաշալեանին, որ արդէն իմացած էր տուած որոշումս: Բաշալեան խնդրեց որ որոշումս չդորձադրեմ. յայտնեցի այս պայմաններուն մէջ բացարձակ մերժումի մը ստիպուած ըլլալս, ու ազաչեցի որ չպնդէ. պընդելէն աւելին ըրաւ, պահանջեց որ անպատճառ ներկայ գտնուիմ եւ վստահեցուց որ անկարելի կը նկատէր որ այսպիսի պարագայի մը մէջ Պ. Պարթեւեան անվայել ծայրայեղութիւններ ինքզինքին թոյլ տար: Տեղի տուի, անազնուութիւն համարելով մերժումի մէջ յամառելը, մանաւանդ որ խորապէս կը փափաքէի համակրանքի հանդիսաւոր արտայայտութիւն մը ընել անդրանիկի մը, եղբայրակցի մը, բարեկամի մը — ու միանգամայն մտածելով որ այդ երեկոյթին նախագահութիւնն ընդունելու ստիպելէ յետոյ զիս, Բաշալեան (որ հոգեբան-խրատալոգ զիտող մըն է եւ կը ճանչնայ իր Պարթեւեան բարեկամին նկարագիրը) պիտի գիտնար զզացնել անոր թէ այս պարագային մէջ ինձի գէմ անարգանք մը ոչ թէ ինձի այլ Բաշալեանին անպատուաբեր կրնար ըլլալ:

Խնդրեցի միայն որ երեկոյթը երկու մասի բաժնէին. առաջինը իմ նախագահութեանս տակ՝ պիտի պարունակէր իմ բանախօսութիւնս եւ Բաշալեանինը, երկրորդը՝ Ուսանողաց Միութեան Դիւանին նախագահութեան տակ՝ պիտի պարունակէր պ. Պարթեւեանին բանախօսութիւնը եւ Բաշալեանի մէկ քանի էջերուն ընթերցումը. ասի անհրաժեշտ կը նկատէի, որովհետեւ նւթապէս անկարելի բան մըն էր որ ես իբրեւ նախագահ խօսք տայի պ. Պարթեւեանին: Հակառակ այս ամենուն ապահով էի որ պ. Պարթեւեան անկարող պիտի ըլլար ինքզինքն արգիլել իմ մասին մէկ քանի տարօսամ ակնարկութիւն սահեցընելէ, եւ այդչափը առաջուց պատրաստուած էի բարձրահայեաց ներողամտութեամբ մը հանդուրժելու: Բայց ինչ որ պատահեցաւ, բոլոր ենթադրութիւններէն, բոլոր նախազուշակութիւններէն անգին անցնող, ցնորական, ահազին, զիւցազնական, վիթխարի խաղքութիւն մը եղաւ:

Ես ըսի, իմ բանախօսութեանս մէջ, ինչ որ կը մտածեմ Բաշալեանին գրական գործին

մասին. ըսի որ Միսաքեանէն ու Գրիգոր Օտեանէն յետոյ, Բաշալեանն է որ ամենակարեւոր դերը կատարած է մեր գրական աշխարհաբանին քերականական ու գեղեցկագիտական զրեթէ վերջնական կազմաւորումին մէջ, եւ թէ իր առոյգ ու վայելչաձեւ ոճով մը հագուած ազնուոգի էջերը, — «Հայրենիք»ի բարոյախօսական խմբագրականներու շարքը, եւ մէկ քանի ներուժ նորավէպերը, — մեր արդի մատենագրութեան ամենէն չքեղ մէկ գրուելու կը կազմեն. ի վեր հանեցի մանաւանդ այն մշտատեւ ջանքը զոր այդ գրականութեան մէջ Բաշալեան դրած է «օգտակար ըլլալու» ակնուութեան, անձնութեան, խորխտութեան տարրեր մտցնելու մեր խառնաչփոթ ու ջլղիկ բարքերուն մէջ:

Բաշալեան իր բանախօսութեան նւթ ընտրած էր «Հանրութեան ծառայելու իտէալը», եւ հրաւէր կարգաց հայ երիտասարդութեան որ այդ իտէալը իր մէջ տարածէ եւ ամբացնէ: Երեկոյթին երկրորդ մասը սկսաւ Պ. Պարթեւեանին բանախօսութեամբը: Պ. Պարթեւեան նախ հոգածութիւնն ունեցաւ յստակօրէն շեշտելու որ Ուսանողաց Միութեան Դիւանը զինքը հրաւիրած էր այդ բանախօսութիւնն ընելու. ասով կ'ուզէր զգացընել թէ իր բոլոր ըսելիքներուն համակարծիք էր այդ Դիւանը: Բանախօսութիւնը ընդհանուր տեսութիւն մըն էր արդի հայ գրականութեան վրայ: Պ. Պարթեւեանի համեմատ, մեր ժամանակակից գրականութիւնը կը բաժնուի երեք շրջանի. առաջին շրջանը «պատուելիական» գրականութիւն մը կը ներկայացնէ ամբողջապէս հոստորական, ուռուցիկ, սնամէջ ու կեղծ. (եւ այդ շրջանին մէջ բացառութիւն չեն կազմեր յաչս պ. Պարթեւեանին՝ Միտաքեանը որ մեծ գրագէտ մըն է, Պէշիքթաշալեանը որ մեր ամենէն փափուկ արուեստագէտն է, Դուրեանը որ յուզմունքի մէկ քանի անգին տողեր հնչեցուց, Ալիշանը որ հրեղէն հոգի մը բաբախեցուց իր մէկ քանի քերթուածներուն մէջ, Մամուրեանը որ մեր առաջին ճշմարտապէս «եւրոպամիտ» գրագէտներէն մին եղաւ, Գրիգոր Օտեանը որ մէկ քանի կամարթիւնեան էջեր արտադրեց, եւ Պարոնեանը որ՝ հակառակ շատ մը թերութիւններու՝ գրեթէ հանճար ունեցաւ): Երկրորդ շրջանը («խրատալոգ» գրականութիւն մը կը ներկայացնէ, եւ սկզբը նաւորութիւնն է ճշմարիտ հայ գրականութեան. այս շրջանը կը բանայ պ. Արփիարեան, անկատար ու անճարակ գրագէտ, բայց յարգելի ուսովիւրայ. եւ անոր հերոսներն են Բաշալեան, Զօհրապ ու Հրանդ. հոս՝ հիացական գնահատում մը Բաշալեանի գործին, ամենէն բարձր, ամենէն կատարեալ արտայայտութիւնը

այդ շրջանին՝ ըստ պ. Պարթևեանի, եւ համա-
կրական տողեր Զօհրայի նորավէպներուն ու
Հրանդի «Պանդուխտի կեանքէ» էջերուն (այս
շրջանին մէջ, Յ.Շահնազար Երուանդ Օսեան,
Տիգրան Կամսարական, Վահրամ Սվաճեան եւ
տիկին Մարի Սվաճեան անարժան կը համար-
ուին նոյն իսկ պարզ յիշատակումի մը, իսկ
ոռասանայերը կը նկատուին իբրև «արուեստը
երբէք չունենալու դատապարտուած» անբան-
ներ: Երրորդ շրջանը, ըստ պ. Պարթևեանի,
պէտք է կոչուի «անորակելի գրականու-
թեան» շրջանը, եւ կը ներհայացնէ շինծու,
խախուռ, իմաստակ, գոհիկ, դիւրին ու ան-
գոյն արուեստ մը, ամբողջ «թռի ք»ներով շի-
նուած եւ ապուշներ շլմորելով փառք ու համ-
բաւ վաստակելու ձգտող (!) • այդ շրջանը
իմ գրականութեանս շրջանն է (պ. Պարթևեան
անունս չարտասանեց բայց մարդկայնօրէն ա-
մէն կարելի եղածը ըրաւ այս մասին որ եւ է
տարակոյտ չձգելու համար): Բանախօսութիւնը
որ հակիրճ էր առաջին երկու շրջաններուն
մասին, այս երրորդ շրջանին հասնելուն՝ ընդ-
լայնեցաւ, տարածուեցաւ, ծովացաւ, անհատ-
նում քնարերգութիւն մը դարձաւ ատելու-
թեան ու մաղձի • բանախօսութեան կարեւո-
րագոյն մասը այդ վերջին մասն էր, եւ յայտ-
նապէս բանախօսութիւնը գրուած էր այդ
վերջին մասին համար, այնպէս որ երեկոյթը
ի պատիւ Բաշալեանի ցոյց մը ըլլալէ աւելի
գարձաւ եղաւ (եւ շատ հաւանական է որ
կազմակերպողներէն ոմանց բուն նպատակն
այդ էր արդէն) հակա-Զօպանեան ցոյց մը:
Ունկնդիրներին ոչ ոք ծափահարեց այդ բա-
նախօսութիւնը, բաց ի պ. Պարթևեանին եր-
կու անձնական բարեկամներէն եւ Դի-
ւանի անդամ եւ ինծի պատուոյ խօսք տուող
պ. Եարճանեանէն, որ թերեւս կ'ուզէր ասով
ապացուցանել թէ համոզուած իրօն մըն է:
Այդ ամբողջ բանախօսութիւնը մտիկ ըրի
ոլիմպական հանդարտութեամբ մը. ինծի հա-
մար հետաքրքրաշարժ ու թիւղորական տե-
սարան մըն էր պատկերը այդ անբացատրելի
ու հիւանդաբան հեռով մը շարչարուած տղուն
որ քանի մը տարիէ ի վեր իր կեանքին նպա-
տակակէտը, պաշտօնն ու գործը դարձուցած է
ինծի դէմ ատելութիւններ ցանել շուրջս՝ ա-
ռանց հասկնալ կարենալու թէ իր ընթացքը
զղուանքով խոտն արգահատանքէ ուրիշ ուեւէ
զգացում չի կրնար ներշնչել ինծի, եւ որ այդ
իրեկունը, զիմացս, հրճուանքէն արիւնը գը-
լուխը ելած, քսան վայրկեան իր քանդումի
մոլեգնութիւնը ֆիշաց՝ գրական սասիզմի գա-
ւեշտականօրէն վայրագ բուպէի մը վայելու-
մին մէջ արբչիւ: Մտիկ ըրի զինքը, առանց
բաւ մը արտասանելու, հետաքրքիր՝ տեսնե-

լու թէ զիս այս գողտրիկ հանդէսին հրա-
ւիրողները ի՞նչ պիտի գտնէին ըսելու: Բաշալ-
եան, չուարած, հերմեսապէօ լուռ մնաց:
Իսկ Միութեան Դիւանին նախագահը «թու-
փէն» ունեցաւ ինձմէ խնդրելու որ իբրև
«երեկոյթին նախագահ» երկու խօսքով փակէի
երեկոյթը: Շատացայ ըսելով թէ այդ
երեկոյթին մէջ արտայայտուած դատումները
զիս անտարբեր կը ձգէին, բայց թէ Բարիզի
Ուսանողաց Միութեան Դիւանը, զիս հրաւի-
րելով հանդէսի մը որ պարզապէս ծուղակ
մըն էր ինծի դէմ լարուած, «անազնիւ»
ընթացք մը ունեցած էր: Այդ պարոնները
փութացին ներում խնդրել ինձմէ, յայտնեցին
թէ չէին երեւակայեր որ պ. Պարթևեան այս-
պիսի կոպտութիւն մը պիտի համարձակէր ը-
նել՝ հակառակ իրենց տուած խոստումին: Ի-
րենց պատասխանեցի որ այս փափուկ պայ-
մաններուն մէջ, իրենց պարտքն էր առաջուց
կարգալ պ. Պարթևեանի բանախօսութիւնը
որ գրաւոր էր արդէն եւ ուեւէ անակնկալի
տեղի չէր կրնար տալ • եւ որովհետեւ Միու-
թեան Դիւանին անգամները հեռու են ապուշ-
ներ ըլլալէ եւ այս ամենապարզ բանը հասկը-
նալու շատ կարող, բացարձակ համոզումը գո-
յացուցի որ այդ ինծի դէմ սարքուած տիմար
ու վարնոց խաղը իրենց համաձայնութեամբը
պատրաստուած էր:
Իսկ Բաշալեանին, երբ դուրս ելանք հանդի-
սավայրէն, գիտել տուի որ անհասկանալի կը
գտնէի այն անհոգութիւնը որով զիս այդ երե-
կոյթին երթալու ստիպելէ յետոյ՝ անոր մէջ
դոնէ տարրական պաշաճութեանց յարգուե-
լուն ինձմէ չէր տարած, ինչ որ կարող ու
պարտաւոր էր ընելու. եւ միանգամայն ցաւս
յայտնեցի իրեն որ այսքան երկդիմի ու անազ-
նիւ մեծարանքով մը տօնուած ըլլար գրա-
կան ճիգ մը որուն գլխաւոր նպատակակէտը
հայ բարձրուն ազնուացմանը նպատակը
եղած էր:
Բաշալեան ինծի յայտարարեց թէ ինքը
ինձմէ աւելի ցաւած էր այդ անախորժ դէպ-
քէն, եւ թէ պիտի գիտնար իր շփոթութիւնը
յայտնել անոնց որ զինքը այդքան նեղացու-
ցիչ զերքի մը մէջ գրած էին: Արդ, հիմա չեմ
հասկնար «Նոր Կեանք»ին թղթակցութեան
սքողեալ նկարագրութիւնը: Այդ թղթակցու-
թիւնը Բաշալեանի ուղղակի թելադրութեամբը
գրուած է, եւ Բաշալեան պէտք չէր որ պար-
տրակելու շրութիւնը գործածէր այսպիսի
«սքանտալի» մը հանդէպ • այդ նկարագրու-
թեան մէջ անհրաժեշտ էր որ գիտողութիւն
մը գտնուէր, ոչ թէ այդ երեկոյթին մէջ յայտ-
նուած գրական դատումներուն մասին (այն
կարծիքը զոր պ. Պարթևեան կաղմեր է իմ

գրական գործիս նկատմամբ, մտահոգութիւններու մէջ ունէ տեղ մը չի բռներ, եւ նոյն իսկ բնական րացատրելի կը գտնեմ որ իր մըտաւոր ու հոգեկան կազմուածքն ունեցող մարդ մը, որ մանաւանդ իր գեղեցկագիտական սահմանափակ ու միակողմանի վարգացումին կը միացնէ իմ անձիս դէմանուցուած այնքան հեշտականօրէն մոլեգին ատելութիւն մը, բան չհասկնայ իմ գրականութիւնէս, այլ դիտողութիւն մը անհրաժեշտ էր ցածոգի նկարագրին մասին այդ երեկոյթը կազմակերպողներուն, որոնք կարծեցին հաճոյք պատճառել Բաշալեանին՝ իր «Հայրենիք»ի հինգ տարուան մը տերմագոյն եղբայրակիցներուն գործը բզբքտելով իրեն ի պատիւ...

Մարդկային պատմութեան ոչ մէկ թուականին, երկրագնդիս ոչ մէկ կէտին վրայ, այդպիսի անարգ մասխարհութիւն մը տեղի չէ ունեցած երբեք: Ամէն երկրի մէջ, նոր գրողները կը սիրեն իրենց նախորդներէն այսինչին կամ այնինչին գործը յօշոտել: Իրենց անհատականութեան զարթումին մէկ բնական ու տրամաբանական ապացուցումն է ատի՛ սակայն քաղաքակիրթ եւ ազնիւ ընկերութիւններու մէջ, նորերը իրենք իրենց մէջ գրական երեկոյթ մը կը սարքեն եւ հոն կ'արտայայտեն իրենց զատումները, եւ երբեք չի կրնար պատահիլ որ նորերու խումբ մը իրենց այսինչ նախորդը քարկոծելու համար՝ այդ անձին բարեկամներէն մէկուն սուսաւորումը պատրուակ բնորին (որովհետեւ այդ պայմաններով հանգիստաւորուածը, քաղաքակիրթ ընկերութիւններուն մէջ, առաջինը կ'ըլլայ վերաւորուող ու նեղացող), ու մանաւանդ երբեք չի կրնար պատահիլ որ նորերը, իրենց նախորդներէն մէկուն դէմ՝ հրապարակային ցոյց մը ընելու համար, այդ անձը վատ խաբեբայութեամբ մը հրաւիրեն այդ երեկոյթին ու իր նախագահութիւնը խնդրեն իրեն դէմ սարքուած ցոյցին... Ասի գազաթնակէտն է բարոյական անգիտակցութեան եւ այսպիսի երեւոյթ մը մեզի պէս հազար տարուան ստրկութեամբ լըրճուած ժողովրդի մը մէջ միայն կրնար ի յայտ գալ:

Եւ ահա ինչու այդ դէպքը կ'արժէր որ իր ճշմարիտ գոյնովը արձանագրուէր: Կը ներկայացնեմ գայն, իբրեւ մեր բարոյական անկումին ամենէն թելադրական ապացուցումներէն մէկը, պ. Լ. Չարթումեանին, որ վերջերս «Նոր Կեանք» ին մէջ շատ գեղեցիկ գաղափարը ունեցած էր մեր ժողովրդին բարբերուն ինկածութեանը մասին «անքէթ» մը բանալու, — «անքէթ» որ մով մտադիրեմ արդէն իմօտոյ ընդարձակօրէն գրադելու:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՔ



«Տէյլի Մէյլ»ի Կ. Պոլսոյ թղթակիցն իր մայիս 20 թուագրեալ ամսեմով կը հաղորդէ հետեւեալ լուրը. — «Վերջս տեղեկութիւնը որ ստացուեցաւ Հայոց պատրիարքարանէն, կը ցուցնէ որ Հայաստանի վիճակն առաւել քան երբեք ողբալի է: Սղերդի գաւառակին մէջ ժողովուրդը անարեկած է դինուորներէն, զատկի տօնական բոլոր արարողութիւնները կատարել վախցած է. հոգեւորականի մը արգիւնցին սուրբ հաղորդութիւն տանիլ հիւանդի մը: Այս կրօնական հալածումը ա'լ աւելի սաստկացած է Հէքիարի մէջ (Վանի նահանգ), ուր 400 Հայեր բռնի տաճկացած են: Քանի մը նահանգներու մէջ ալ սուրբերը կը հաւաքուին ամենամեծ անգթութեամբ, եւ զէնուորական մարմիններն են որ կը ստանձնեն այս գործերուն կատարումը: Սրաքի իրի մէջ ամէն տուն անպատուած է թրքական նոր կոռավարչէն, եւ խեղճ զոհերը չեն կրնար օգնութիւն ակնկալել կամ ստանալ որ եւ է մէկէ մը»

«Տէյլի Մէյլ»ի նոյն թղթակիցն իր այս նամակէն երկու օր յետոյ կ'աւելցնէ. — «Իրերու դրութիւնը Հայաստանի մէջ, զոր ես նրկարագրեցի հակիրճ կ'ըստով, ճայրայտօրէն ծանր կերպարանք ստացած է: Կը թուի թէ տաճիկ կառավարութիւնը կը ձգտի աստիճան առ աստիճան եւ դանդաղօրէն ոչնչացնել Հայերը՝ ձուլելով զանոնք թուրք տարրին մէջ: Այլ եւս յայտնի է որ չկայ ուրիշ ուժ մը բայց միայն Ռուսը՝ կասեցնելու այս վտանգը, որուն ենթարկուած են Հայերը. բայց որպէսզի Ռուսիան վերստին կարենայ գործել, Հայաստանը պէտք է որ իր հովանաւորութեան տակ առնէ, ու այն ատեն այս անբաղղ ու հալածուած ցեղը վրայ պիտի տայ իր ազգայնութիւնը. Թուսիոյ միջամտութիւնը հայկական գործերուն մէջ հաւանական հետեւանք մըն է Բ. Դրան ներկայ դրութեան, նկատելով Ասիական նահանգներու երկաթուղիներու մերձեցումը Սեւ ծովին ու ռուսական սահմանապլխին: Թուսիա անտարբերութեամբ չի կրնար նայիլ այդ նահանգներու մէջ տիրող թշուառութեանց վրայ եւ պիտի ջանայ իր բոլոր ազգեցութեամբ վերջ դնել անոնց: Այժմ, Ռուսիան միակ ուժն է, որմէ կը սարսափի Սուլթանը, եւ եթէ ըստ պատնալիք մը ընէր անոր ազգահովութեանը, ան պիտի տար ամէն ինչ որ Ռուսիան պահանջէր:

Այս այսպէս ըլլալով՝ մենք կրնանք ակնկալել քաղաքական նոր ուղղութիւն մը քիչ ատենէն Արեւելքի մէջ:

Le Gérant: GEORGES WALINE

Paris. — Imp. V^o ALBOUY, 75, avenue d'Italie.

LA GRANDE FRANCE

Գրական եւ ընկերական այս նոր հանդէսը, զոր հիմնած են խումբ մը ֆրանսացի երիտաւար դպրոցներ, իրեն նպատակ ունի գաղափարապաշտ ու վեհանձն ֆրանսային աւանդութիւնները իրենց երկրին մէջ վառ պահպանել եւ այխարհիս մէջ անոնց ճառագայթումին յաւերժացմանը նպաստել: Իր ծրագրին գլխաւոր կէտերէն մէկն է զբաղիլ օտար ազգերու հոգեբանութեան ուսումնասիրութեամբ եւ մասնաւորապէս վերականգնեալ կամ նորաստեղծ ազգութիւններուն մասին բարոյական շարժումին քննութեամբը:

Տարեկան բաժնեգինն է՝ 7 ֆր. աւէն երկրի համար:
Հասցէ՝ 38, Rue des Ecoles

ՔԱՅՅԻ

«ԻԱԻԻԹ ԲԵԿ» Ա. Բ. Գ. հատոր վերջարանով եւ «ԿԱՅՄԵՐ» լիակատար:

Իւրաքանչիւրի բաժանորդագրինն է 5 շիլին: Լոյս կը տեսնեն ներկայ 1900 թւի ընթացքում եւ կ'ուղարկուին բաժանորդներին որպէս «Մամուէլ»ը եղաւ: Բաժնի միւս երկերը ունենալու համար ցանկացողները պիտի դիմեն մեզ: Կարելի է ստանալ Խրիմեան Հայրիկի Ծերենցի եւն գրքեր:

Ամեն տեսակի դիմում կամ պատուէր պիտի ուղղել հետեւեալ հասցէին՝

M^{ME} RAFFI

47, UXBRIDGE ROAD
SHEPHERD'S BUSH
LONDON W.

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ Restaurant de Constantinople



3, PLACE DE LA SORBONNE, 3



CUISINE FRANÇAISE & ORIENTALE

Արեւելեան եւ ֆրանսական կերակուրներ պատրաստուած հայ եւ ֆրանսացի

Խ Ո Ն Ա Ր Ա Ր Ն Ե Ր Է

ՄԱԲՈՒՐ ԵՒ ՃԱՅԿԱԿԱՆՈՐ

PENSION DEPUIS 60 FR.

ԲԱՆՍԻՆ՝ ԱՄՍԱԿԱՆ 60 ՖՐ. ՈՐՈՇ ԳՆՈՎ ՃԱՅԵՐ 1,25 և 1,75

DÉJEUNERS et DINERS
à 1,25

1 Hors-d'œuvre ou potage.
1 Plat au choix.
1 Légume.
1 Dessert.
1/2 bouteille de vin rouge ou blanc
Pain à discrétion.

DÉJEUNERS et DINERS
à 1,75

1 Hors-d'œuvre ou potage.
2 Plats au choix.
1 Légume.
1 Dessert.
1/2 bout. de Bordeaux ou Mâcon.
Pain à discrétion.

PENSION 60 FR.
20 cachets 20 fr.

1 Hors-d'œuvre ou potage.
1 Plat de viande,
1 Légume.
1 Dessert ou fromage.
1 demi-setier de vin rouge.
Pain à discrétion.

ՆՇԱՆ Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

«Անահիտ»ի գործակալ Թորոսի մեջ

«Թէմպո-փոսթեր»ու գնում, վաճառում եւ փոխանակութիւն՝ հաւաքածոներու համար: Մասնաւորապէս՝ պուլկարական նամակադրոշմներ, մեծաքանակ, սովորական կամ հազուադիւր: Տեղեկութիւն ուղղողները, պատասխան ընդունելու համար նամակադրոշմ մը ներփակելու են իրենց նամակներուն մէջ:

Հասցէ՝ Nichan S. Torossian, Roustchouk, Bulgarie

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՆԱՀԻՏԸ պիտի հրատարակուի ամիս անգամ մը, իւրաքանչիւր թիւը պիտի բաղկանայ 32 էջէ, եւ պիտի արժէ՝ ձեռքէ վնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա), 20 սէնդ (Ամերիկա), 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 3 ըուպլի (Ռուսիա), 2 տոլար (Ամերիկա) : վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 2 ըուպլի (Ռուսիա), 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել՝

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼ ՆԵՐԸ

ՎԱՌՆԱ

ՌՈՒՍՃՈՒՔ

ՊՈՒՔՐԷՇ

ԴԱՒՐԷԺ

ՆԻՒ-ԵՈՐՔ

ԲՐՈՎԻՏԷՆՍ (Ամերիկա)

ԻՍԹ-ՈՒՕԹԸՐԹԱՌԻՆ. (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ. (Մաս . , Ամերիկա)

Պարոն Տր. Յ. Ս. Փափազեան

» Նշան Ս. Թորոսեան

» Արիս Լազար

» Տր Կ. Փաշաեան

» Պ Կատարեան

» Նազարէթ Թաթէոսեան

» Մանուկ Գալստեան

» Երուանդ Յակոբեան